

ԲԺԻՇԿ ԿԱՐՊՈՍ ՀԱՐՊՈՅԵԱՆ

ՄԱՐՄՆԻ ՈՐՈՇ ՄԱՍԵՐՈՒ ԱՆՈՒՆՆԵՐՈՒ
ԳՈՐԾԱԾՈՒԹԻՒՆԸ ՄԵՐ ԼԵԶՈՒԻ
ԴԱՐՁՈՒԱԾՔՆԵՐՈՒՆ, ԱՌԱԾՆԵՐՈՒՆ
ԵՒ ԱՍԱՑՈՒԱԾՔՆԵՐՈՒՆ ՄԷՁ



ՄՈՆԹՐԷԱԼ
2024

The publication of this volume is made possible
through a generous contribution from the
CALOUSTE GULBENKIAN FOUNDATION



Բժիշկ Կարպիս Հարպոյեան



Մարմնի որոշ մասերու անուններու
գործածութիւնը մեր լեզուի
դարձուածքներուն, առածներուն եւ
ասացուածքներուն մէջ

Մոնթրէալ

2024

Ձեզ եմ ասում՝, հայոց նորահաս երիտասարդք, ձեր անունին մեռնեմ, ձեր արևին դուրբան, տասը լեզու սովորեցեք, ձեր լեզուն, ձեր հավատքը դայիմ բռնեցեք... Որքան հարուստ է այդ լեզուն իր բազմատեսակ արտահայտություններով, դարձվածքներով ու պատկերներով, որքան զորեղ նրա հասկացողություններն ու դատողությունները, որքան բնական նրա պատկերները և փոխառումները, որքան կատարյալ գիտական անվանումները:

Խ. Աբովեան

Բժիշկ Կարպիս Հարպոյեան

Garbis Harboyan, MD

harboyangar@hotmail.com

«Մարմնի որոշ մասերու անուններու գործածութիւնը մեր լեզուի դարձուածքներուն, առաձներուն եւ ասացուածքներուն մէջ»

Տպագրութիւն՝ TLC GLOBAL inc. MONTREAL

Մոնթրէալ, Գանատա

2024

Նախաբան

Ես լեզուագետ մը չեմ, ոչ ալ հայ լեզուի մասնագետ մը, սակայն հայերէն լեզուն սիրող, անոր հետ ապրող, անոր հետ շնչող, մտածող եւ զայն միշտ օգտագործող գրող մըն եմ: Ես, որպէս բժիշկ եւ հայ անհատ, կը սիրեմ գրել, շատ պարզ հայերէն լեզուով, հայ անհատին եւ հայ հանրութեան համար՝ բժշկութեան, հայոց Յեղասպանութեան եւ հայ հասարակական ու ազգային այլ հարցերու մասին:

Իմ հայերէն ընթերցումներուս ընդմէջէն նկատեցի, որ մարդու մարմնի զանազան մասերուն անունները շատ յաճախ կը գործածուին մեր գրաւոր լեզուին մէջ: Անկախ իրենց բառացի իմաստէն, այս անունները մենք կը գործածենք մեր առօրեայ կեանքին մէջ՝ աւելի իմաստ մը տալու մեր խօսքին, մեր ըսածին, եւ այս կ'ընենք առանց անդրադառնալու, կ'ընենք ինքնաբերաբար՝ աւելի համ եւ հոտ տալով մեր խօսքին:

Պզտիկ ուսումնասիրութիւն մը կատարեցի եւ տեսայ, որ մեր լեզուին, ինչպէս շատ այլ լեզուներու մէջ, ունինք դարձուածքներ, որոնք միասնական իմաստով կապուած եւ կայուն բառեր, բառակապակցութիւններ եւ արտայայտութիւններ են:

Դարձուածքները երկու կամ աւելի լիարժէք իմաստ արտայայտող բառերէ կազմուած արտայայտութիւններ են, որոնք միասին կ'արտայայտեն լրիւ այլ իմաստ: Անոնք համառօտ, բայց խորիմաստ դատողութիւն, միտք եւ լեզուական հաղորդման միաւոր են:

Ըստ հայրենի գրող Ամալիա Մնացականեանի՝ «Դարձուածքներ կամ դարձուածաբանական միաւորներ ժողովուրդի հոգեւոր մշակոյթի հարստութիւն են եւ կ'արտայայտեն լեզուի ազգային ինքնատեսութիւնը եւ իւրայատկութիւնը: Անոնք խօսքին կու տան պատկերութիւն, արտայայտչականութիւն, անոնք կ'ազատեն խօսքը միապաղաղութենէ եւ միօրինակութենէ»:

Ըստ ատամնաբուծ եւ հայ լեզուի մասնագետ Արմենակ Եղիայեանի՝ «Դարձուածք կը կոչենք սովորաբար երկու, երբեմն՝ երեք, հազուագիւտ՝ աւելի, բառերէ կազմուած այն կապակցութիւնը, ուր զայն կազմող բառերէն իւրաքանչիւրը կը կորսնցնէ իր բառային բուն նշանակութիւնը, որով ամբողջ բառակապակցութիւնը կը վերիմաստաւորուի՝ ստանալով բոլորովին նոր՝ «դարձուածքային» բովանդակութիւն մը: Դարձուածքները ընդհանրապէս կը մասն ժողովրդախօսակցական ծիրին մէջ՝ սակաւ թափանցելով գրական լեզուէն ներս: Դարձուածքներու ժուժկալ գործածութիւնը գեղեցիկ, պատկերաւոր ու տպաւորիչ կը դարձնէ մեր խօսքը. անոնց պատեհ ու տեղին մէջբերումը համ ու հոտ կու տայ գրութեան»:

Իսկ ըստ հայրենի գրող Ս. Ահարոնեանի՝ «Դարձուածքները իւրաքանչիւր ժողովուրդի ազգային մտածողութիւնն ու հոգեբանութիւնը խտացած կերպով դրսեւորող լեզուական միաւորներ են: Անոնք բառային արժէք ունեցող կայուն եւ ինքնուրոյն բառակապակցութիւններ են, որոնք օժտուած են փոխաբերական նշանակութեամբ: Անոնք իրենց էութեամբ հակիրճ, սեղմ, եւ միաժամանակ պատկերաւոր լեզուական արտայայտութիւններ են, որոնք գունագեղ եւ տպաւորիչ կը դարձնեն խօսքը»:

Դարձուածքներու մաս կազմած են լեզուի բնորոշ եւ իւրայատուկ արտայայտութիւնները, ժողովրդային ասացուածքները, առածները եւ զանազան հեղինակներու իմաստախօսքերը:

Ասացուածքներն ու առածները ժողովուրդի մը բանաւոր ստեղծագործութեան շատ հին եւ ամենէն տարածուած տեսակներն են: Իւրաքանչիւր ժողովուրդի խօսակցական լեզուին մէջ դարերու ընթացքին ստեղծուած ու գործածուած են տասնեակ հազարաւոր առածներ ու ասացուածքներ: Առածներն ու ասացուածքները որոշակի միտք պարունակող, պատկերաւոր, բայց շատ կարճ եւ իմաստալից արտայայտութիւններ են: Թէ՛ առածները եւ թէ՛ ասացուածքները մեծ մասամբ խրատական, դաստիարակչական իմաստ եւ նշանակութիւն ունին:

Ըստ Հայկական հանրագիտարանին՝ առածը և ասացուածքը բանահիւսութեան տեսակներ են, որոնք կազմուած են մի քանի բառէ կամ նախադասութենէ և կ'արտայայտեն ժողովուրդի աշխարհըմբռնումը, կենցաղային, ընկերաքաղաքական յարաբերութիւնները, մարդու բնաւորութեան, խառնուածքի առանձնայատկութիւնները, ազգային սովորոյթները, հաւատալիքները և այլն: Առածները այլաբանական-փոխաբերական դատողութիւններ են, որոնք արտայայտուած են անուղղակի՝ կեանքէն եւ բնութենէն վերցուած օրինակներով և պատկերներով: Անոնք ժողովուրդի կենսամփոթի վրայ հիմնուած իմաստուն մտքեր են և յաճախ կոչուած են «ժողովրդական իմաստութիւններ»:

Իմ հետաքրքրութիւնս ուրեմն կեդրոնացուցած եմ մարմնի որոշ մասերու անուններուն գործածութեան վրայ՝ առաւելաբար մեր լեզուի դարձուածքներուն, նաեւ առածներուն եւ ասացուածքներուն մէջ: Օգտագործեցի մեծ թիւով հայկական բառարաններ եւ յաճախ օգտուեցայ իմ լեզուական համեստ փորձառութենէս՝ պատրաստելու համար մարմնի որոշ մասերու անուններով դարձուածքներու, առածներու եւ ասացուածքներու ծաղկաքաղ մը:

Այս ծաղկաքաղին մէջ տեղ գտած են մարմնի 50 մասերու մօտաւորապէս 3400 դարձուածքներ, առածներ եւ ասացուածքներ: Իսկ գիրքի կողքին համար գործածած եմ Սարուխանի մէկ ծաղրանկարը, իրեն յետ մահու երախտապարտ ըլլալով, որ ատենին ինքն ալ գծագրութիւններով արտայայտած է այս դարձուածքները:

Շնորհակալություն դստերս՝ տիկին Դալար Հարպոյեան-Գալլոդեանին, որ սիրայօժար կատարեց աշխատասիրութեանս լեզուական սրբագրութիւնը: Վարձքդ կատար սիրելի Դալար: Շնորհակալություն նաեւ մտաւորական Վրէժ-Արմէն Արթինեանին, որ կատարեց «Նախաբան»-իս լեզուական սրբագրութիւնը եւ գրեց իր «Միայն գնահատանք» երկու խօսքը: Միշտ կը գնահատեմ իր ներդրումը ու իրեն կը յայտնեմ իմ շնորհակալութիւնները:

Բժիշկ Կարպիս Հարպոյեան

Մոնթրէալ, 24 ապրիլ 2024

Միայն գնահատանք

Իրապէս միայն գնահատանք կրնանք արտայայտել բժիշկ Կարպիս Հարպոյեանի այս աշխատանքին համար:

Դարձուածքները լեզուի մը կենսական հարստութիւնն են եւ իւրայատկութիւնը: Անոնք թարգմանելի չեն, եւ իւրաքանչիւր լեզու նոյն գաղափարը կրնայ արտայայտել տարբեր դարձուածքով մը, կամ երբեք չունենալ նման իմաստով արտայայտութիւն մը, քանի որ ան սերտօրէն կապուած կըլլայ ժողովուրդի պատմութեան ու փորձառութիւններուն:

Մարմնի մասերը խօսակցութեան մէջ կարեւոր տեղ կ'ունենան եւ երբ կը գործածուին փոխաբերաբար, կը յառաջացնեն հետաքրքրական խօսքեր, որոնք ինչպէս կը նշուի բազմիցս՝ համ ու հոտ կը բերեն լեզուին, այլեւ զուարթախոհութիւն ու սրամտութիւն եւ զարկ կու տան երեւակայութեան:

Այսքան մեծ թիւով դարձուածքներ, կապուած մարմնի զանազան մասերուն եւ հիմնուած մանաւանդ բժիշկի մը սեփական՝ յիշողութիւններուն վրայ, նկատառելի ներդրում մը կը հանդիսանան մեր բառարանագրութեան տարեգրութեան մէջ:

Կարդացէ՛ք ու վայելեցէ՛ք:

ՎՐԷԺ-ԱՐՄԷՆ ԱՐԹԻՆԵԱՆ

2024-08-25

ՉՕՆ

Հայերէն լեզուի յայտնի եւ անյայտ
ուսուցիչներու

ՇՆՈՐՀԱԿԱԼԱԿԱՆ ԽՕՍՔ

Յատուկ շնորհակալություն Գալուստ Կիւլպէնկեան
Հիմնարկութեան Հայկական Բաժանմունքին որ սիրայօժար
ստանձնեց «Մարմնի որոշ մասերու անուններու գործածութիւնը
մեր լեզուի դարձուածքներուն, առածներուն եւ
ասացուածքներուն մէջ» գիրքիս տպագրութեան նիւթական
պարտաւորութիւնը

Բովանդակություն

	Էջ
Նախաբան, բժիշկ Կարպիս Հարպոյեան	5
Միայն գնահատանք, Վրէժ-Արմէն Արթինեան.....	8
1. Ականջ» բառին գործածութիւնը մեր լեզուի դարձուածքներուն, առածներուն եւ ասացուածքներուն մէջ.....	15
2. «Աչք» բառին գործածութիւնը մեր լեզուի դարձուածքներուն, առածներուն եւ ասացուածքներուն մէջ.....	22
3. Ակռայ բառին գործածութիւնը մեր լեզուի դարձուածքներուն, առածներուն եւ ասացուածքներուն մէջ.....	39
4. Այտ բառին գործածութիւնը մեր լեզուի դարձուածքներուն, առածներուն եւ ասացուածքներուն մէջ.....	41
5. Ատամ բառին գործածութիւնը մեր լեզուի դարձուածքներուն, առածներուն եւ ասացուածքներուն մէջ.....	42
6. Արցունք բառին գործածութիւնը մեր լեզուի դարձուածքներուն, առածներուն եւ ասացուածքներուն մէջ.....	43
7. Ափ բառին գործածութիւնը մեր լեզուի դարձուածքներուն, առածներուն եւ ասացուածքներուն մէջ.....	44
8. Բազուկ բառին գործածութիւնը մեր լեզուի դարձուածքներուն, առածներուն եւ ասացուածքներուն մէջ.....	46
9. Բերան բառին գործածութիւնը մեր լեզուի դարձուածքներուն, առածներուն եւ ասացուածքներուն մէջ.....	47
10. Բիր բառին գործածութիւնը մեր լեզուի դարձուածքներուն, առածներուն եւ ասացուածքներուն մէջ.....	59
11. Գլուխ բառին գործածութիւնը մեր լեզուի դարձուածքներուն, առածներուն եւ ասացուածքներուն մէջ.....	60
12. Դէմք բառին գործածութիւնը մեր լեզուի դարձուածքներուն, առածներուն եւ ասացուածքներուն մէջ.....	74
13. Եղունք բառին գործածութիւնը մեր լեզուի դարձուածքներուն, առածներուն եւ ասացուածքներուն մէջ.....	76

14. Երես բառին գործածությունը մեր լեզուի դարձուածքներուն, առաձներուն եւ ասացուածքներուն մէջ.....	77
15. Թարթիչ բառին գործածությունը մեր լեզուի դարձուածքներուն, առաձներուն եւ ասացուածքներուն մէջ.....	84
16. Թեւ բառին գործածությունը մեր լեզուի դարձուածքներուն, առաձներուն եւ ասացուածքներուն մէջ.....	85
17. Թիկունք բառին գործածությունը մեր լեզուի դարձուածքներուն, առաձներուն եւ ասացուածքներուն մէջ.....	87
18. Լեզու բառին գործածությունը մեր լեզուի դարձուածքներուն, առաձներուն եւ ասացուածքներուն մէջ.....	88
19. Խելք բառին գործածությունը մեր լեզուի դարձուածքներուն, առաձներուն եւ ասացուածքներուն մէջ.....	96
20. Միծ բառին գործածությունը մեր լեզուի դարձուածքներուն, առաձներուն եւ ասացուածքներուն մէջ.....	99
21. Մոց բառին գործածությունը մեր լեզուի դարձուածքներուն, առաձներուն եւ ասացուածքներուն մէջ.....	100
22. Մոծրակ բառին գործածությունը մեր լեզուի դարձուածքներուն, առաձներուն եւ ասացուածքներուն մէջ.....	101
23. Մունկ բառին գործածությունը մեր լեզուի դարձուածքներուն, առաձներուն եւ ասացուածքներուն մէջ.....	102
24. Կզակ բառին գործածությունը մեր լեզուի դարձուածքներուն, առաձներուն եւ ասացուածքներուն մէջ.....	103
25. Կոպ բառին գործածությունը մեր լեզուի դարձուածքներուն, առաձներուն եւ ասացուածքներուն մէջ.....	104
26. Կոնակ բառին գործածությունը մեր լեզուի դարձուածքներուն, առաձներուն եւ ասացուածքներուն մէջ.....	105
27. Կոկորդ բառին գործածությունը մեր լեզուի դարձուածքներուն, առաձներուն եւ ասացուածքներուն մէջ.....	107
28. Կուրծք բառին գործածությունը մեր լեզուի դարձուածքներուն, առաձներուն եւ ասացուածքներուն մէջ.....	108

29. Հեր Բառին գործածությունը մեր լեզուի դարձուածքներուն, առաձներուն եւ ասացուածքներուն մէջ.....	109
30. Յօնք Բառին գործածությունը մեր լեզուի դարձուածքներուն, առաձներուն եւ ասացուածքներուն մէջ.....	110
31. Ձեռք Բառին գործածությունը մեր լեզուի դարձուածքներուն, առաձներուն եւ ասացուածքներուն մէջ.....	111
32. Ճակատ Բառին գործածությունը մեր լեզուի դարձուածքներուն, առաձներուն եւ ասացուածքներուն մէջ.....	120
33. Մազ Բառին գործածությունը մեր լեզուի դարձուածքներուն, առաձներուն եւ ասացուածքներուն մէջ.....	124
34. Մատ Բառին գործածությունը մեր լեզուի դարձուածքներուն, առաձներուն եւ ասացուածքներուն մէջ.....	125
35. Մարմին Բառին գործածությունը մեր լեզուի դարձուածքներուն, առաձներուն եւ ասացուածքներուն մէջ.....	128
36. Մէջք Բառին գործածությունը մեր լեզուի դարձուածքներուն, առաձներուն եւ ասացուածքներուն մէջ.....	129
37. Միտք Բառին գործածությունը մեր լեզուի դարձուածքներուն, առաձներուն եւ ասացուածքներուն մէջ.....	130
38. Մորթ Բառին գործածությունը մեր լեզուի դարձուածքներուն, առաձներուն եւ ասացուածքներուն մէջ.....	131
39. Մօրուք Բառին գործածությունը մեր լեզուի դարձուածքներուն, առաձներուն եւ ասացուածքներուն մէջ.....	132
40. Յետոյք Բառին գործածությունը մեր լեզուի դարձուածքներուն, առաձներուն եւ ասացուածքներուն մէջ.....	134
41. Շրթունք Բառին գործածությունը մեր լեզուի դարձուածքներուն, առաձներուն եւ ասացուածքներուն մէջ.....	135
42. Որովայն Բառին գործածությունը մեր լեզուի դարձուածքներուն, առաձներուն եւ ասացուածքներուն մէջ.....	137
43. Ոտք Բառին գործածությունը մեր լեզուի դարձուածքներուն, առաձներուն եւ ասացուածքներուն մէջ.....	138

44. Ուղեղ բառին գործածությւնը մեր լեզուի դարձուածքներուն, առաձներուն եւ ասացուածքներուն մէջ.....	145
45. Ուս բառին գործածությւնը մեր լեզուի դարձուածքներուն, առաձներուն եւ ասացուածքներուն մէջ.....	146
46. Սիրտ բառին գործածությւնը մեր լեզուի դարձուածքներուն, առաձներուն եւ ասացուածքներուն մէջ.....	147
47. Վիզ բառին գործածությւնը մեր լեզուի դարձուածքներուն, առաձներուն եւ ասացուածքներուն մէջ.....	158
48. Փոր բառին գործածությւնը մեր լեզուի դարձուածքներուն, առաձներուն եւ ասացուածքներուն մէջ.....	160
49. Քիթ բառին գործածությւնը մեր լեզուի դարձուածքներուն, առաձներուն եւ ասացուածքներուն մէջ.....	162
50. Քրտինք բառին գործածությւնը մեր լեզուի դարձուածքներուն, առաձներուն եւ ասացուածքներուն մէջ.....	165
51. Աղբիւրներ.....	166

«Ականջ»-բառին գործածությունը մեր լեզուի դարձուածքներուն, առածներուն եւ ասացուածքներուն մէջ

Կնկան անհաճոյ խօսքերով, ամուսինին ականջները անդամալուծուեցան.

Միհրանը ականջը ածիլեց, որպէսզի հիւրին ըսածները լաւ լսէ.

Սու՛ս... ականջ արա՛, հովիւն է կանչում.

«Հայ պարոններ ականջ առէք թափարական աշուղին».

Ականջներդ չորս բա՛ց աղջիկս, ուշադիր եղի՛ր:

Ականջդ բա՛ց, այ տղայ, տես թէ ի՞նչ կ'երգեն շուրջիններդ.

Աշակերտը երկու ականջները բաց կը հետեւէր ուսուցիչին.

Միրելի՛ս, ականջս մի բռնադատեր անիմաստ խօսքերովդ.

Ականջս գնաց, հոգնեցայ մտիկ ընելէ շատախօսը.

Ականջ դի՛ր ըսուածներուն, որ խելքդ մեծնայ.

Ականջ մի դներ քեզ բամբասողին.

Ինչո՞ւ գացիր եւ անոր ականջին բան դրիր.

Թէ ականջ դնես քեզ բամբասողին, կեանքդ կը դարձնես վշտի անկողին.

Գնա՛, տէրտէրին ականջին դպիր, տես թէ ան ին՞չ կ'ըսէ.

Ականջդ երկու, լեզուդ մէկ. երկու լսէ, մէկ խօսէ.

Մարդ երեք ականջ ունի, երրորդը եւ լաւագոյն ականջը սրտին մէջն է.

Ուսուցիչը դասարանին մէջ ըսաւ՝ ականջներս ձեզի են տղա՛ք.

Անիին ականջին կը զարնեն տակաւին իր մօր կծու խօսքերը.

Ականջիս զարկաւ Էլիզապէթին գեղեցիկ ձայնը.

Սեպուհին մօրը ականջը դռան էր, առտուայ չորսն էր եւ տակաւին Սեպուհը չէր
եկած.

Ականջս հօրս էր, ամէն գիշեր իր պատմութիւնները մտիկ կ'ընէի.

Ամբողջ գիշեր նստած Յասմինին ականջը դրան ձայնին էր.
 Աղջի՛կս, ականջիդ օդ թող ըլլայ հօրդ ու մօրդ խօսքերն ու խրատները.
 Մայրս ամեն գիշեր ականջը ձայնի կը քնանայ.
 Մօր ամեն խօսքին ականջ կ'ընեն պզտիկները.
 Մեծ հայրիկը խօսքը ուղղելով թոռնիկին ըսաւ՝ ականջդ շատ թեթեւ է.
 Պապիկին ականջը շա՛տ թեթեւ է.
 Մօրս ականջը թեթեւ էր եւ շարունակ կը խօսէր.
 Ականջս կարեւոր-անկարեւոր լուրերով լեցուեցաւ.
 Տղուն ականջները ուսուցչին իմաստալից խօսքերով լեցուեցան.
 Կէս ականջով լսած էի տնօրէնին յայտարարութիւնները.
 Աշակերտները իրենց ականջները լարած ուշադրութեամբ մտիկ կ'ընէին պրն.
 Յակոբին.
 Ականջը կը լսէ, բայց երբեմն ալ կը սուլէ.
 Սիրելի հաւատացեալ ժողովուրդ, ականջներդ խոնարհեցո՛ւր Հայրապետին:
 Տարօրինակ մարդ է սա Ասատուրը, ականջը խօսի.
 Ո՞վ էր, ականջը խօսի, որ մեզի եկաւ.
 Այդ ականջ խարտոցող Միմոն անունը երազիս մէջ ալ կը լսեմ.
 Մեծ մօրս ականջը խղճալի է.
 Խնայեցէ՛ք ձեր ականջները, սիրելի երիտասարդներ, հեռու մնացէք
 աղմկարար վայրերէ.
 Ականջները խաղցնելու սկսած է մեր երիտասարդ տղան.
 Կեսրոջ մէկ ականջը խուլ եւ մէկ աչքը կոյր պէտք է ըլլայ.
 Թոռնիկս՝ Տեսիլը որոշեց ականջը ծակել, որպէսզի ականջը օդով զարդարէ.
 Զգուշ եղէք, դիմացինին ականջը ծակ է.
 Ականջս ծակ է, ձեր խօսածները շուտ կը լսեմ.
 Ան ականջը ծակ մարդ է, մէկ կողմէն կը մտնէ միւս կողմէն կ'ելլէ.

Այնքան ինքզինքը գովեց, որ ականջս ծակեցաւ.

Անախորժ երգեր եւ երաժշտութիւն ականջներս կը ծակեն.

Ուրիշին ականջը մի ծակեր, շատախօ՛ւ.

Զգուշ եղէք, դրացիին ականջը ծակ է, մեզ կը լսէ եւ կը հասկնայ.

Խժորին մէջ ականջ ծակող ձայներ շատ կային.

Ականջ ծակող լռութիւնը կրնայ վտանգաւոր դառնալ.

Անոր ականջը ծանր կը կշռէ:

Ընտրէ կինդ ծերի աչքով, իսկ նայիր երիտասարդի աչքով.

Հօրս ականջը ծանրացած է, ան 92 տարեկան է.

Մայրս գիշերները ականջը կախ, կէս քուն կէս արթուն զիս կը սպասէր.

Թոռնիկս ականջը կախած էր իմ եւ Էլիզապէթին խօսակցութեան.

Տարաձայնութիւններուն ականջ պէտք չէ կախել.

Փոքրիկները ականջ չկախեցին ծերուկին ըսածներուն.

Ամէն գիշեր ականջ կը կախէի հօրս պատմութիւններուն.

Թոռնիկս ականջը կախած կը հետեւի մեր խօսակցութեան.

Ականջս կախ, տան սանդուխներէն վար իջայ.

Ան ականջը կախ իր գործով զբաղած է.

Ամբողջ մարմնով ականջ կտրած մտիկ ընելու պատրաստուած էինք.

Ես անոր ականջները կը կտրեմ, սպասէ՛.

Այ՛ աղջիկ, լեզուդ քեզի պահէ, ըսածներդ նշանածիդ ականջը կը հասնի.

Արցախի ազատագրումը թուրքերուն ականջը հասաւ.

Ականջէդ դուրս հանէ այս լուրը.

Չեմ ուզեր լսել շատախօս Տիգրանին, որպէսզի ականջս հանգստանայ
չժաասուի.

Յասմիկը կարդաց քրոջմէն հասած նամակը, ոչ աչքերուն եւ ոչ ալ ականջին
հաւատաց.

Սեդան չհաւատալով ականջներուն, աչքերը չորս բացած կը սպասէր նշանածին տուն դարձը.

Ականջիս չհաւատացի, երբ էլիզապէթին ձայնը լսեցի.

Ականջս հասաւ քաղաքին զգուելի աղմուկը.

Ականջիս հասաւ, որ էլիզապէթը Պէյրուս եկած է.

Ականջիս հասցուցին Սուրիոյ յեղաշրջումի որոշումը.

Աշակերտը ականջը բաց երկու ականջով կը հետեւէր ուսուցիչին.

Մեծ կտորը ականջդ կը ձգեմ, հասկցա՛ր բարեկամ.

Աչքս եւ ականջս միշտ ճամբուն էր պանդուխտ տղուս կարօտէն.

Լսեցի՞ր ինչ որ ըսի, ականջդ բուրդ-բամպա՞կ մտած է.

Սօրը ականջը դուրս մնաց մինչեւ որ զաւակը տուն հասաւ.

Քահանային ըսածները բնաւ չէին մտներ դպիրներուն ականջները.

Դուն հազար ըսէ, անոր ականջը չի մտներ.

Ըսածս ականջդ մտա՞ւ, թէ ոչ.

Մեծ կտորը տխմարին ականջը մնաց.

Տղան խաղով տարուած ականջին ծայրով մտիկ կ'ընէր հօրը ըսածները.

Աշակերտները իրենց ականջին ծայրով մտիկ ըրին պրն. Պերպերեանին ըսածները.

Ձախողութեանս պատճառով մօրս ականջը մոլորեցաւ.

Տղան մօրը խօսքերը ականջին ետեւ նետեց ու գնաց.

Մեր գիւղին մէջ եկեղեցւոյ զանգակները կը շարժէին եւ ականջ շոյող ձայներ
կ'արձակէին.

Ձեր ականջը, յարգելի ընթերցող, թող շոյէ հայրենի երաժշտութիւնը.

Ականջիս մէջ կը շշնչայ մեր մշուշապատ հայրենիքի իրադարձութիւնները.

Զինուորները սկսան կացինով ականջներ շինել գերաններու ծայրերը.

Երգչախումբի անդամներուն մեծամասնութիւնը ականջ ունին, սակայն կան
մի քանիներ որոնք ականջ չունին.

Յասսիկին ականջը ուրախացուցի իր եղբորը գալու լուրով.
Ով ականջ ունի թո՛ղ լսե՝ արեւմտահայերէնը վտանգի մէջ է.
Ով ականջ ունի թող հասկնայ.
Պատը ականջ ունի, ուշադիր եղիր.
Հայ զինուորները հաւատարիմ ականջ ունենալու են թշնամիին մօտ.
Երանի անոնց որոնք ականջ չունին, բայց շատ դիւրաւ կը հաղորդակցին.
Տղան ականջ չունէր որ մտիկ ընէր ճառախօսութիւնները.
Մեր տղան ազգականներու համար ականջ չունի, թերթերու գրած պարապ
գրութիւնները մտիկ կ'ընէ.
Անօթի փորը ականջ չունի.
Անիմաստ է ականջ չունեցողին օղ նուիրել, կամ կոյրին՝ ականոց.
Երեխաներուն ականջները ողողուեցան տոհմիկ հայ երգերով.
Շարունակ կը փնտռէի բաց ականջ ունեցողներ.
Ականջս ուղղուեցաւ դէպի դասական երաժշտութիւն, որ կը սփռուէր
Երեւանէն.
Աղջկան ականջը ուրախացուցի նշանածին ժամանման լուրով.
Սահմանին մօտ ականջ եւ աչք պահելու են զինուորները.
Ականջդ անոր վրան պահէ.
Կէս քուն կէս արթուն, զինուորը ականջը ահագանգի պահած էր.
Ձեր ականջը ձայնի պահեցէք, գողեր կրնան ըլլալ հեռուն նստողները.
Ձեր ականջները բաց պահեցէ՛ք, ըսաւ ուսուցիչը.
Տղա՛ս, հեռու պահէ մտածումներդ ընկերոջդ ականջէն.
Ականջդ սուր պահէ եւ աչքդ՝ բաց.
Դուն հիմա ականջդ բաց պահէ եւ բերանդ փակ, ըսաւ ծերունին.
Ծերուկին ականջը պինդ է, բարձր խօսիր որ լսէ.
Աշակերտները դասարանին մէջ իրենց ականջները սրեցին.

Խմբավարին ականջը սուր է.

Յակոբը ականջը սրած մտիկ կ'ընէր կանանց խօսակցութիւնը.

Կիկոն եկաւ իր սեփական ականջներով ստուգելու մեր տան մօտ պատահածը.

Երաժիշտը ականջով կը վայելէր դաշնամուրը.

Արցախի անկախութեան լուրը ականջէ-ականջ տարածուեցաւ.

Մէյ մը ականջդ ետեւ տար, տես թէ մարդիկ ինչե՞ր կը խօսին աղջկանդ վրայ.

Տղաս ականջս կը տանէր շարունակ ըսելով՝ պարտէզ երթանք.

Ականջիդ ետեւը կը տեսնես, իմ աղջկան երեսը չես տեսներ.

Ականջիդ ետեւը եթէ տեսնես լուսին կ'երթաս.

Ականջս Էլիզապէին կու տայի եւ իր երգերը մտիկ կ'ընէի.

Ականջ տուր ինծի, աղջի՛կս, մայրդ քեզ կը սպասէ նպարավաճառին քով.

Աղջի՛կս, ականջներուդ ազատութիւն տուր՝ ունկնդրէ Կոմիտասեան երգերը.

Տիկիինը այնչափ կը խօսի, որ ականջ չեմ տար իրեն.

Ականջներդ վարձո՞ւ տուած ես, ինչո՞ւ ուշադրութիւն չես ըներ ըսածներուս.

Սարգիսը ականջը փոխ տուած էր, չէր լսեր տնօրէնին.

Աշակերտները իրենց ականջները վարձու տուած էին պրն. Վիգէնին
դասախօսութեան ընթացքին.

Աղջիկը ականջը ձայնի տուաւ եւ սպասեց տղուն.

Հարսին շատախօսութեան վրայ՝ ամուսինը ականջը վարձու տուաւ.

Տղան ականջը փոխ տուաւ երբ ուսուցիչը տեսաւ.

Հէ՛յ պարոններ, ականջ տուէք թափառական աշուղին.

Ականջներս վեր տնկած մտիկ կ'ընէի մեծ հօրս պատմութիւնները.

Ականջ տուր ուսուցիչին, տղա՛ւ.

Գետափ իջայ, նայեցայ քարին ու ականջ տուի գետի ֆշշոցին.

Մանչուկը լալով ականջս տարաւ.

Անձանօթ եւ շատախօս հիւրը բոլոր ներկաներուն ականջը տարաւ.

Զինուորը թշնամիին ձայներուն ականջ տնկեց.

Զինուորը թշնամիին ձայներուն ականջը ցցեց.

Մահը մարդուն ականջի ետեւն է.

Գիւղացին իշու ականջին մէջ քնացած է.

Մեր տան արծաթէ զանգակները թեթեւ շարժումներով ականջ շոյող ձայներ
կ'արձակեն:

Աղջի՛կ ջան, ականջդ քար պահէ, կեսրոջդ ըսածը հաշուի մի առներ:

Զաքար Քէշիշեանին սրինգով կատարումը ականջիս հնչեց:

Երիտասարդ վաճառականը աչքը չորս բացած է:

Մօրս աչքը ետեւ մասց երբ եղբայրս գաղթեց:

Ամէն առաւօտ լրագիրներուն վրայ աչք մը կը պտտցնեմ:

Գեղեցիկ աղջիկը տղուն աչքը խածաւ:

«Աչք» բառին գործածութիւնը մեր լեզուի դարձուածքներուն, առածներուն եւ ասացուածքներուն մէջ

Օտարին աչքը մարդու լոյս չի տար.

Թող աչքերուս լոյսը մարի, միայն միտքս փոխուի բարի.

Յակոբիկը ընկերուհիին սէւ աչքերուն, վարդ այտերուն զարնուեցաւ.

Հայկը նախագահին աջ աչքն է.

Տիգրանին աչքը ատենապետի աթոռին վրայ է.

Մարին աչքը անկուշտ կին է, ինչքան որ տաս անէծքը միշտ բերանն է.

Աչքէ անցուցի Կիրակոսին գրութիւնները.

Մայրս ամբողջ տարին հանգիստ չունի, աչքերուն մէկը քուն, միւսը՝ արթուն է.

Տղա՛ս, աչքերուդ ազատութիւն տուր, դիտէ՛ բնութեան գեղեցկութիւնները.

Հազիւ հասանք Երեւան աչքերս կանգ առին Արարատին վրայ.

Աչքերը անօթի, փորը կուշտ մարդ է Տիգրանը.

Լիբանանի պատերազմին զինեալները աչքիս առջեւ սպաննեցին անմեղ

տղայ մը.

Ծերուկը ոտքերը աշխարհէն կտրեց, ճակատը բաց, խելքը մթաքնած, աչքերը

անլոյս Աստուծոյ քով գնաց.

Աչքիս առջեւէն անցաւ մօրս յիշատակները.

Աչքիս առաջ եկան անցեալի յիշատակները եւ սիրելի ընկերներս.

Աչքիս առջեւ ունեցայ հօրենական մեր տունը եւ պարտէզը.

Աչքդ ա՛ն էւ գնա՛ :

Տղան ամէն բան աչքը առած մեկնեցաւ ճակատ.

Աչքը առածին չափ պիտի քալէ.

Աչք-աչք պահարաններ կան մեր ննջասենեակին մէջ.

Մուրացկանին աչքը անկուշտ է.
 Մարդու աչքը ագահ է, չի կշտանար փողով, մինչեւ որ լեցուի հողով.
 Աչքն արդար լաւ է, քան սիրտը մեղաւոր.
 Ծախողին մէկ աչքը բաւ է, գնողին՝ հազար ալ քիչ.
 Աչքի առջեւ բերեք մեծերու գործերը.
 Տիկին Սիրանուշը ճարպիկ, լեզուանի եւ աչքը բաց կ'իներէն մէկն է.
 Փոքրիկին աչքը բաց է.
 Տղուն աչքը բացուեցաւ.
 Աչքս բանալու ժամանակ չունիմ.
 Աչքը բաց մահացած է.
 Աչքը երեսը չբացուած մարդ է Կիրակոսը.
 Աչքդ բաց բերանդ բանալու տեղ.
 Աչքը բաց լուսցուց մայրիկը, սակայն տղան չեկաւ.
 Ճաշի ժամանակ եղբօրս աչքը հիւրերուն բերանին էր.
 Թոռնիկս աչքերը բացաւ Երեւանի մէջ.
 Անոր աչքերը նոր բացուեցան, սկսաւ հասկնալ ամէն բան.
 Օգուտ չունի վերջը լաց, ժամանակին աչքդ բաց.
 Աչքդ բաց գոցէ, օրը կը վերջանայ.
 Աչքդ բաց, որպէսզի դուն քեզ պաշտպանես տեսանելի եւ անտեսանելի
 վտանգներէն.
 Մի՛ քնանար, աչքդ բաց ու մեղքդ լաց.
 Ականջդ բա՛ց պահէ, աչքերդ լայ՛ն բաց, որ ամէն բան լաւ հասկնաս.
 Աչքս բաց կը լուսցնեմ ամէն օր.
 Հայրենիքի կարօտով հայրս աչքը բաց մահացաւ.
 Լաւ է որ հոգիներու աչքերը բացուին եւ ճշմարիտ լոյսով լուսաւորուին.
 Այս փաստի առաջ կարելի չէ աչք փակել.

Մայրս աչքերով բարեւեց եւ հեռացաւ.
Փորձէ աչքէդ չփախցնել Արարատի գագաթը.
Աչք աչքի վրայ բերին երկու ընկերներ.
Աչքիս մէջ մագ բուսաւ մինչեւ տղուս գալը.
Դրացին մեր տան վրայ աչք բռնած է.
Կարալիսին մեկնելէն ետք մօրը աչքերը անոր հետ գացին.
Հօրս աչքերը գերեզման հասած են.
Երիտասարդ է, սակայն դեռ աչքը գոց է.
Աչքդ գոց պէտք է հաւատաս ըսածներուս, աղջի՛կս .
Մեր աչքերը գոց ճամբայ ելանք դէպի Լիբանան.
Երբեմն ժողովներու ընթացքին մարդոց աչքերը կը գոցուին.
Մինչեւ հիմա ըսուածներուն աչքս գոցեցի.
Մեծ հայրս աչքերը գոցելէ ետք մահկանացուն կնքեց.
Երբ պոռթկալու պահանջքը զգար հայրս, կը գոցէր աչքերը եւ կը բանար իր
օրհնեալ բերանը.
Անիրաւութիւններու աչք գոցելը սխալ է.
Մէկ աչքդ գոցէ՛ աշակերտներու քննութեան ընթացքին.
Անոնց գեղեցիկ աչքերուն համար չէր որ հմայուեցանք, այլ որովհետեւ մեզի
այդպէս ձեռնտու էր.
Աչքը դու՛ րս թող գայ անոր, որ տղուս սայթաքեցուց.
Փորձէ աչքի չգալ, աղջիկս.
Աչքս իր տեսածը գիտէ, աչքս վախցած է.
Պերճ Չագրճեանին պաստառները աչքերս գրաւեցին.
Աղջկան աչքերը բոլորին ուշադրութիւնը գրաւեց.
Յանցաւոր Յարութը աչքերը գետին գցեց.
Վարուժը աչքի փուշ դարձաւ վարպետին քով.

Մեր նոր տունը քաղաքին աչքը դարձաւ.
 Մմբատին մօրը աչքը ծով դարձաւ.
 Բոլորին աչքերը դէպի բերդ տանող գլխաւոր փողոցը դարձան.
 Աշխարհի աչքն ու ականջը դէպի Պաղեստին դարձած է.
 Խենթ աչքով դիտեցի Արցախի անտառները.
 Երկու աչքերով դիտեցէք Երեւանը.
 Աչքիս ծայրովը կը դիտէի Էլիզապէթին, երբ երգչախումբին մէջ կ'երգէր.
 Երբ անմեղ աչքերով կը դիտես, ամէն ինչ աստուածային է.
 Թորոսին աչքը դպաւ եւ աղջիկը ինկաւ.
 Իմ եւ Էլիզապէթին աչքերը իրարու դպան.
 Որու չար աչքը դպաւ մեր տղուն.
 Մեր դրացի Սեդան աչքը դուրս կին է.
 Տղուն աչքը միշտ դուրսն է.
 Բարկութենէն մարդուն աչքը դուրս եկաւ.
 Սարգիսը աչքը դրած է դրացիին աղջկան՝ Սիրունին վրայ.
 Ատելի է ուրիշներու սեփականութեան աչք դնելը.
 Աչքս Էլիզապէթին դրի առաջին տեսնելուս.
 Տղա՛ս, ուշադիր եղի՛ր, մեր վրայ աչք դրուած է.
 Աչքէս ելաւ այդ չար աշակերտը.
 Գեղեցիկ աղջիկը աչքի եկած էր, ձախողեցաւ.
 Աչքիս չերեւնա՛ս, գո՛ղ, աւազա՛կ.
 Կոյր աչքէն արցունք չ'ելլեր.
 Աչքդ չելլէ ա՛յ մարդ.
 Կապիկը իր մօրը աչքերուն եղնիկն է.
 Սարգիսը աչքէս ելաւ, անձնասէր է:
 Երկու աչքերուս վրայ կ'երդնում.

Անոր աչքերը կ'երթան շատ հեռու.
Աղջիկը աչքի զարնուեցաւ.
Կիրակոսը Լուսինին աչքին զարնուեցաւ
Տիրուկին գեղեցկութիւնը բոլոր տղոց աչքին զարկաւ.
Զգոյշ եղիր այն աչքէն, որ գէշը տեսնելու բաց է եւ լաւը տեսնելու՝ գոց.
Չեմ ուզեր աչքիս լոյսէն զրկուիլ.
Երբ թոռնիկներս մեր տունն են, աչքերս միշտ իրենց վրայ կ'ըլլայ.
Լաւ է որ աչքդ կոյր ըլլայ, քան սիրտդ.
Մայր մը աչք ու ականջ ըլլալու է իր զակկին առողջութեան համար.
Տղան աղջկան աչք ըրաւ.
Կիներու աչքերն ու լեզուն յաճախ տարբեր բաներ կ'ըսեն.
Աչքի նման թանկագին է գիրքը.
Պանդուխտ տղուն մօրը աչքերը միշտ թաց են.
Տղուն մահէն ետք, մօր աչքերը չոր չեղան, միշտ թաց են.
Հայ զինուորին աչքերէն կայծեր դուրս կը թռչէր.
Նահատակ հայ զինուորին մամիկին աչքերը շարունակ կը թրջին.
Յակոբին մայրը աչքի լոյս թափեց երբ լսեց տղուն հայ աղջկայ հետ
ամուսնանալը.
Հայ զինուորին աչքէն կրակ կը թափէր.
Անոր գեղանի աչքերը կրակ կը թափէին.
Հեղնարին աչքերը ուրախութենէն ճակատը թռան.
Մեր աչքերը կը թռէին ամբողջ ճամբու ընթացքին, միայն տեսնէինք Շուշին.
Հայ զինուորին աչքերէն կայծեր դուրս կը ժայթքէր.
Իր գոռոզութեամբ Կիրոն աչքէս ինկաւ.
Եղբօրս աչքը ինկած է շապիկիս վրայ, շատ սիրած է:
Քարտուղարուհին բժիշկին աչքէն ինկած է, սխալ գործած է.

Հիւանդ մարդուն աչքերը փոսը ինկած էին.
Աչքս գեղեցիկ Հեղնարին վրայ ինկաւ.
Աչքիդ սե՛ւ ջուր իջնէ, ոճրագո՛րծ տղայ.
Աչքս լացաւ, այլեւս անոր հետ գործ չեմ ըներ.
Ուշ գիշերին տղան ամչկոտ տուն մտաւ եւ տեսաւ մօրը լարուած աչքերը.
Աչքերս լարեցի դէպի Արարատ լեռ.
Աչքդ լոյս մայրի՛կ, հայրիկս այսօր կը վերադառնայ.
Աչքդ լոյս մայրի՛կ, պիտի ամուսնանամ.
Օտարին աչքը մարդու լուս չի տար.
Մայրս աչքին լոյսին պէս կը սիրէր զիս.
Մէկ աչքը միւսին լոյս չի տար.
Աչքերս լեցուեցան երբ լսեցի հալէպահայութեան նեղ կացութիւնը.
Մանուկը մի քանի բառ կը գրէր աւագին վրայ, իսկ մայրը աչքերը լարելով
կը կարդար.
Խաչատուրին նահատակութեամբ մօրը աչքերը արիւնով լեցուեցան.
Աչքերս ուրախութեամբ լեցուեցան երբ մօրս տեսայ.
Մեծին մէկ աչքը կոյր պիտի լինի, մի ականջը՝ խուլ.
Հիւանդ տղուն աչքերը խոնաւ են.
Հայրս բաւական յուզուած էր, աչքերը խոնաւ էին.
Գեղեցիկ աչքեր կը խափեն դիմացինը.
Գեղանկարիչին նկարները աչքիս խորեցի.
Իրականութիւնը Սիրունին աչքը խորեցի.
Խելացի մանչուկին աչքերը արդէն կը խօսին.
Եղբայրս շատ նեղութիւն քաշեց, բայց վերջը աչքը խնդաց.
Գրիգորին աչքերը կը խնդային, նստած էր իր գեղեցիկ նշանածին քով.
Երբ հոգնիմ աչքերս կը խաղան.

Աջ աչքը խաղալը, մահուան նշան է կ'ըսէր մեծ մայրս.
Աճպարարը ուշադրութիւն գրաւելու նպատակով կը սիրէր աչքերը խաղցնել.
Մօրս աջ աչքը երբ խաղար շատ կը մտահոգուէր.
Ամավերջի քննութիւններուն հսկիչը աչքերը խփած նստած էր իր աթոռին վրայ,
տղաքը ազատօրէն իրարմէ կ'օգտուէին.
Եթէ օր մը չկարենաս գոհացնել մէկուն ակնկալութիւնը, ծուռ աչքով կը նայի
քեզի եւ կը բարկանայ.
Հօրս աչքերը խաւարեցան շատ կանուխ.
Աչքս խաբուեցաւ երբ անակնկալօրէն հօրեղբայրս տեսայ.
Հօրս աչքերը այլեւս լաւ չեն ծառայէր իրեն.
Դրացիին զօրաւոր լոյսերը աչքերս ծակեցին.
Աչքը ծակ դրացին շարունակ մեզի կը հետեւի.
Աչք ծակելու չափ մեծ էր տղուն յանցանքը.
Տէր Հրեշտակը աչքը ծակ տէրտէր մըն էր.
Բժիշկը պալարին աչքը ծակեց.
Կիրակոսին ադամանդեայ մատանին աչքս ծակեց.
Աչքիս ծայրով նկատեցի որ մեր դրացին կը փորձէր մեր պարտեզը մտնել.
Աչքերս 60 տարեկան ըլլալուս ծանրացան.
Տղան օտար աչքով աղջկան աչքերը կարդաց.
Բժիշկը աղջկան աչքերը կարդալով գիտցաւ անոր հիւանդութիւնը.
Աչքերովս կարդացի մօրս մտահոգութիւնները
Տուն դառնալէ ետք մայրս ուշի ուշով կարդաց մռայլ աչքերս.
Աչքերս չկշտացան գեղեցիկ նկարները դիտելով.
Ագահին աչքը չի կշտանար.
Յովսէփը աչքը կուշտ մարդ է.
Աչքերը կուշտ, փորը անօթի մարդ է Սեդրակը.

Ագահին աչքը միայն գերեզմանը-հողը կը կշտացնէ.
Ղափաման շատ համով էր, փորս կշտացաւ, աչքս չկշտացաւ.
Աչքս կշտացաւ ժամանակաւորապէս, երկրորդ անգամ երկար պիտի դիտեմ
Արարատը.
Աչքէս կորի՛ր, չա՛ր տղայ.
Մօրը աչքը ջուր կտրեց մինչեւ զաւկին վերադարձը.
Եթէ աչքդ կը կտրէ, ելի՛ր գնա՛ լուսին.
Աչքերս գեղեցիկ էլիզապէթին վրայէն չէր կտրեր.
Ծերուկին աչքը չի կտրեր որ քալելով երթայ թատերասրահ.
Զինուորը աչքերը կրակ կտրած յարձակեցաւ թշնամիին վրայ.
Յակոբին ծնողքը աչքերը ջուր կտրած ամբողջ տարին կը սպասէր անոր պանդուխտէն
վերադարձին.
Աղքատ ծերուկը աչքերը գետնէն չէր կտրեր բան մը գտնելու յոյսով.
Օտար աչք մը կայ մեր տան վրայ, ուշադիր պէտք է ըլլանք.
Սարգիսին մօրը աչքէն արիւն կը կաթի.
Խելացի Սեպուհին աչքերը բոլորիս լոյս կու տայ.
Կիրակոսին աչքերը գեղեցիկ կիններուն էր, որ կինը որ տեսներ կը ցանկար.
Տէր Զօրի անապատին մէջ գաղթական հայը ետին կը նայէր, աչքիդ կտրածին
չափ....
Մարտիկին աչքերը կայծակներ կ'արձակէին հակարակորդին վրայ.
Սարգիսին աչքերը արիւն կոխած էին սաստիկ բարկութենէն.
Աչքերս կանգ առին գեղեցիկ պատկերներուն վրայ.
Վեհարանը կաթողիկոսարանին աչքն է.
Մինչեւ առուն ջուր գայ, գորտին աչքը դուրս կու գայ.
Աչքերս կորսնցնելէ ետք, յօնքերուս պէտք չունիմ.
Գեղեցիկ տեսարանը աչքերով կուլ տուի.

Թռռնիկս՝ Կալին աչքիս լոյսն է.
 Մեղրիին աչքերը մեղրով լեցուն են.
 Աչքերուս չեմ հաւատար, երազ էր.
 Աչքերս չհեռացուցի նորածին թռռնիկիս վրայէն.
 Մայրիկին աչքերը ջուրով յորդեցան տղուն սպասելով.
 Հայրս շարունակ կը հետեւէր քայլերուս եւ կը հաւատար իր աչքերուն.
 Եղբայրս մօրս ներկայութեան հեռացաւ, մայրս աչքին չէր հաւատար.
 Գեղեցիկ աղջկան հեռաւոր աչքերը տղուն աչքերուն մէջ մտած են.
 Աչքիս տակէն կը հետեւիմ թռռնիկիս խաղերուն.
 Ձեռքով կը ցանեմ, աչքով կը հնձեմ.
 Կոյր աչքէն արցունք չի հոսիր.
 Էլիզապէթը աչքով ունքով զիս հրապուրեց.
 Հաշտ աչքով պէտք է նայիլ մեր կրտսերներուն.
 Աչքէս հեռացի՛ր, զգուելի՛ մարդ.
 Մայրս շարունակ կ'ըսէր՝ աչքէ հեռու, սրտէ հեռու.
 Տղա՛ս, աչքդ համբուրեմ, միայն խելօք կեցիր.
 Մայրի՛կ, աչքդ Տարօնին վրայէն չհանես.
 Յօնքը շինելու տեղ աչքը չհանես.
 Աչքդ գոց հաւատալու ես երբեմն.
 Խելացի աշակերտը աչքի հանդիպեցաւ.
 Ադամ աչքերը չհեռացուց Եւային վրայէն.
 Աչքէ հեռու, սրտէ հեռու.
 Ադամ խոր աչքերով կը հետեւէր Եւային քալուածքին.
 Սահմանագլուխի զինուորին աչքէն կրակ-արիւն կը հոսէր.
 Բժիշկները ըսած են շարունակ՝ աչքը հայելին է մարդուն.
 Խելքը կը նայի հազար աչքերով, իսկ սիրտը՝ մէկ.

Մարդիկ աւելի կը հաւատան իրենց աչքերուն, քան թէ ականջներուն.
Ականջներուդ անսալով ընտրէ կինդ, ոչ թէ աչքերուդ հաւատալով.
Պատիւը, հաւատքը եւ աչքը կատակ չեն վերցներ.
Աչքդ ամէն ինչ կը տեսնէ, ինքզինքդ չես տեսներ.
Եթէ միտքը զբաղած է, աչքը բան չի տեսներ.
Ինչպէս որ աչքը լոյս կը փնտռէ, այնպէս ալ միտքը ճշմարտութիւն կ'որոնէ.
Աչքդ մեր տան վրայ թող ըլլայ.
Մօր աչքերը փոքրիկին վրայ էր.
Աչքս անոր վրայ մնաց.
Ան աչքս մտաւ, աչքս շշմեցուց.
Տղուս նշանածը աչքս մտաւ, խելացի կ'երեւի.
Աշխարհի աչքը գոց մնաց հայոց ցեղասպանութեան ընթացքին.
Ժանին աչքը մեր տան մօտ գտնուող պարտէզին վրայ մնաց.
Աչքը մտնելու համար, պաշտօնեաները յարգեցին եւ սիրեցին իրենց մեծաւորը.
Անակնկալօրէն աչքերուս առջեւ մթնցաւ, չկրցայ կարդալ.
Օրը բոլոր ծանր աշխատանքէ ետք գիշերն ալ քուն չմտաւ Կիրակոսին աչքերը.
Պէտք է գիտնալ, որ մարմնաւոր աչքերէն եւ ականջներէն անդին աւելի իմաստալից
աչքեր եւ ականջներ կան.
Մօրս աչքին լոյսը մարեցաւ.
Թոռնիկս աչքիս տակը մեծցաւ.
Աչքս Սարեանին կտաւներուն վրայ մնաց.
Մօրս աչքը ետեւ մնաց, եղբայրս չեկաւ.
Մօրս աչքը ճամբայ մնաց մինչեւ Կարոյին վերադարձը.
Տղուն աչքը աղջկան վրայ մնաց.
Երեխային չարչարանքը մօրը աչքէն հեռու թող մնայ.
Եղբայրս Ամերիկա գաղթելէ ետք մօրս աչքերը անոր ետեւը մնաց.

Աչքդ բաց թող փայ միշտ, տղա՛ս.
 Անուշիկ տղա՛ս, աչքէ հեռու չփասս.
 Ու՞ր փացիիր աչքիս լոյսը.
 Մեծ մօրս աչքերը մթնեցին.
 Երկու տարեկան Արեգին աչքերը մթնեցին.
 Կոյրին ուզածը մէկ աչք, Աստուած տուաւ երկու աչք:
 Աչքերս յառեցի դէպի Խոր Վիրապ.
 Աչքին պոչով նայեցաւ.
 Օտարի աչքով մի՛ նայիք ինձի, ընկերնե՛ր.
 Ծուռ աչքով կը նայի մեր տղան իր չորս կողմը.
 Հաշտ աչքով կը նայի մեր տղան իր չորս կողմը.
 Վատ աչքով կը նայի մեր տղան իր չորս կողմը.
 Խորթ աչքով կը նայի մեր տղան իր չորս կողմը.
 Կէս աչքով կը նայի մեր տղան իր չորս կողմը.
 Նեղ աչքով մի նայիր այս հարցին.
 Ան բոլորին մէկ աչքով կը նայի.
 Արագ աչք մը նետեցի այսօրուայ թերթերուն.
 Աչք մը նետեցի բանակումի բոլոր վրաններուն վրայ.
 Աչքերուս նետը նետած կը դիտէի Էլիզապէթը.
 Աչք մը նետեցի դասերուս վրայ.
 Աչքերուս փոշի նետելու պէս բան մըն էր այս նուէրը.
 Աչք շլացնող ծառայութիւններ են ժողովուրդի կատարած գործերը.
 Մեր աչքերը շլացան երբ ներս մտանք Թումանեանի թանգարանը.
 Աչքերս շլացան երբ տեսայ Սուրբ Ղազարի ձեռագիրները.
 Հայկական բանակը բաց աչքերով շանթեց թշնամին.
 Կիրակոսը ճաշարանի աչքեր ունի.

Աչքերը դեպի Թուրքերուն ուղղած այնպէս կատաղի կը նայէր, կարծես աչքերէն
կայծակ կը թափէր.

Մեր աչքերը ուղղուած էին դեպի Մայր Հայաստան.

Աչքի առջեւ ունեցիր տղա՝ ւ դրացիին գողութիւնը, ապահովագրէ տունդ.

Աչքի առաջ ունեցայ հօրս գաղթականութեան յուշերը.

Իմ պահարանս չորս աչք ունի.

Փրկութեան համար մեր աչքերը Արեւմուտք պետք չէ ուղղել.

Աչքդ ուտեմ անուշիկ թոռնիկս՝ Տարօն.

Ինչո՞ւ աչքերդ վրաս կը ոլորես, ճիշդ չէ ըրածդ.

Կիրակոս աչքերը ոլորեց աղջկան վրայ.

Աչքը տեսածը կ'ուզէ.

Թոռնիկիս կապոյտ աչքերը կ'ուտէ զիս.

Համբարձումը ծոծրակին ալ աչքեր ունի.

Աչքը ձախին օգուտ չունի.

Աչքիս վրայ տեղ ունին բոլոր ընկերներս.

Թշնամին աչք ունի մեր հողերուն վրայ.

Պետրոսը պրպտող աչք ունի.

Թշնամին չար աչք ունի, զգուշացէ՛ք.

Տունը երեք աչք ունի.

Ուրիշի աչքով որոշելու չենք.

Տղան աչքերով չափեց աղջիկը ոտքէն մինչեւ գլուխ.

Մեր տունը աչքի չափով ձեր տունէն 3 քմ հեռաւորութիւն ունի.

Աչքիս չափը երեք է.

Աչքով չափեցի մեր պարտէզին տարածութիւնը.

Աչքերս չորցած աղբիւր դարձան.

Խեղճ կնկան աչքերը չորցան՝ երկար սպասելով իր տղուն վերադարձը.

Աչքերս պաղ դիմացս կը նայիմ.
 Աչքս կը պաղի, արդեօք ո՞վ պիտի այցելէ մեզի.
 Մայրը երկար ատեն աչքերը պտտցուց, որպէսզի գտնէ մանչուկը.
 Սերոբը աչքերը շատ պտտցուց, սակայն Լոռային չտեսաւ.
 Աստուած չար աչքէ հեռու պահէ քեզի, տղա՛ս.
 Աղջիկը շարունակ աչքերը վրաս կը պահէր ճաշկերոյթի ընթացքին.
 Աչքիս պոչով կը դիտէի մարգահանդէսը.
 Մեծ հայրս աչքին բիբին (լոյսի) պէս կը պահէ աստուածաշունչը.
 Աչքդ պզտիկին վրան պահէ՛, աղջի՛կս.
 Աչքդ պագնեմ տղա՛ս, մի՛ հեռանար.
 Գիշեր աչքով պոռացին ու գողցան.
 Տղաքը արթուն աչքերով պրպտեցին ամբողջ թանգարանը.
 Պանդուխտ տղուն պատճառով մօրը աչքերը շարունակ թրջուած են.
 Աչքը սիրեմ Հայերուն, կ'ըսէր մեր դրացի Արաքը.
 Աչքդ սիրեմ, հոգի՛ս.
 Աչքերս Վրէժին գիրքին վրայ սահեցան.
 Աչքերս բարեբախտաբար կը սնանին հայ գրականութեամբ.
 Ժիրայրին սիրուհիին աչքերը կայծեր կը սրէին.
 Աչքերս սառած տեղս փացի.
 Անակնկալօրէն աչքիս առջեւ սեւցաւ.
 Տնօրէնին աչքը սուր է, բոլորին լաւ կը տեսնէ.
 Աշակերտը աչքը սրած մտիկ կ'ընէր ուսուցիչը.
 Աչքով եւ հոգուով սիրելու ենք մեր հայրենիքը.
 Աչքերը առանց խօսելու սրտի գաղտնիքները կը պատմեն.
 Մեղային աչքով ամուսինը սարսափելի արարած մըն է.
 Ստացած նամակիս վրայ աչքերս արագ մը վազեցուցի.

Տղուն աչքերը կը վառէին տեսնելով գեղեցիկ աղջիկները.
 Մեր տան գողութենէն ետք աչքս վախցաւ, ապահովագրութիւնը նորոգեցի.
 Աչքը տեսածէն կը վախնայ.
 Աչքս միշտ թռոնիկիս վրայ էր ամբողջ օրը.
 Սիրտս ուզեց, աչքս ալ վրան մսաց.
 Հօրս աչքերը վառեցան երբ եղբայրս վերադարձաւ.
 Տանտէրը բարի աչքով վարուեցաւ մեզի հետ.
 Յասմիկին աչքերը վառած էին ատելութեան կրակով.
 Աչքիս վրայ, սիրելի՛ս, պիտի հասնիմ օգնութեան.
 Անհամբերութեամբ աչքերս վազեցին Էլիզապէթին նամակին տողերուն վրայ.
 Մեր աչքերը վարժուած չեն մթութեան.
 Աչքս անոր վրայէն չվերցուցի.
 Ուսուցիչին աչքէն բան չէր վրիպեր.
 Մարդուն աչքը տեսածէն կը վախնայ.
 Թռոնիկս աչքերուս տակ դասերը կը սորվի ամէն օր.
 Վեհափառը իր միաբաններուն աչքերով տեսաւ Կիլիկիան.
 Երանի անոնց, որոնք աչքերնին գոց կը տեսնեն կեանքի իմաստը.
 Գեղեցիկ աղջիկը տեսնելով, տղուս աչքերը անոր հետ գացին.
 Տղաքը աչքերը տնկած կը դիտէին աղջիկները.
 Դրացիիդ կնկան աչք մի՛ տնկեր, սիրելի Նիկողոս.
 Մէկ աչքը միւսին լոյս չի տար.
 Հայ զինուորը ճակատ գնաց սիրած աղջկան աչքը հետը տարաւ.
 Մարմատոր աչքերը կը տեսնեն դիմացինին դէմքը, իսկ հոգին աչքերը կը
 տեսնեն ճշմարտութիւնը.
 Աչքը տեսաւ, սիրտը ուզեց:
 Աչքի տեսածը հաստատ է՝ քան ականջի լսածը.

Ուրիշին աչքին յարդի շիւղը մի տեսներ.
 Աչքովդ տեսնես իսկ՝ փեշովդ գոցէ.
 Աչքովդ տեսնես՝ չհաւատաս.
 Աչքդ բարին թող տեսնէ.
 Մեծ մայրիկս աչքերը գոց կը տեսնէր.
 Սարգիսը աչքը բաց երագ կը տեսնէ.
 Աչքը ինչ տեսնէ, սիրտը չի մոռնար.
 Աչքիս մոխիր մի՛ ցաներ անիմաստ խօսքերովդ.
 Ցերեկ աչքով մեր տունը գողցան.
 Հազիւ մօրս աչքերը ցամքած էին, պատահեցաւ երկրորդ դժբախտութիւնը.
 Մարդիկ կօշիկ կը գնեն 10 անգամ փորձելով, կ'ամուսնանան փակ աչքերով.
 Աչքը փակ մարդիկ շատ կան մեր իրականութեան մէջ.
 Աչքէս փախաւ Արմենակին քննադատութիւնները.
 Հակառակ որ այսօր շատ աշխատեցայ, քունս աչքերէս փախաւ.
 Աղջիկ՝ս, իմ աչքէս բան չի փախիր, երէկ որո՞ւ հետ կը քալէիր.
 Աչքերս փայլեցան երբ գտայ կորսնցուցած դրոշմաթուղթի հաւաքածոս.
 Փաթիլին աչքերը փայլեցան երբ տեսաւ Հայաստանի գեղեցկութիւնը.
 Ալբուամովին աչքերը փայլատակեցան տեսնելով ոգելից ընպելիները.
 Մեր տունը պզտիկ ըլլալով մէկը միւսին ոտքին կը կոխէր, մէկը միւսին աչքին
 փուշ կը դառնար.
 Ուսուցիչը կարող է աչք փակել աշակերտներուն սխալներուն.
 Օր ցերեկով մարդոց աչքին փոշի փչել լաւ բան չէ.
 Հայրս աչքերը փակեց 90 տարեկանին.
 Հարսը աներոջ աչքին փուշ դարձաւ.
 Հեռացի՛ր, գնա՛, աչքիս փուշն ես.
 Ասեղի աչքը շատ փոքր է.

Ծերուկին աչքերը փթացած են.
Ան իր իւրայատուկ խօսքերով մեր աչքին փռշի կը փչէ.
Տղա՛ս, աչքդ փռիս չտաս ուրիշին.
Աչքս քոռանար՝ չտեսնէի.
Աշակերտները դասարանին մէջ աչքերնին բաց կը քնանան երբեմն.
Հայրի՛կ, աչքդ քաղցր ըրէ վրաս.
Մօր մը համար իր զաւկին աչքը մեղրի պէս քաղցր է.
Հիւանդ մարդը աչքերը վրաս քամելով մտիկ ըրաւ խօսքերս.
Կալին նստած էր մօրը աչքէն քիչ մը հեռու տեղ մը.
Մօրս աչքին մէկը քուն, միւսը՝ արթուն, ամբողջ տարին հանգիստ չունի.
Տղան աչքերը քալող սիրուն աղջիկներուն վրայ քամած կը դիտէր.
Մարդու աչքը բուռ մը հողով կը կշտանայ.
Մէկ աչքը միւսին չի հաւատար.
Քրիստոսի աչքով չտեսած, սրտով ճանչցաւ.
Որ մարդու աչքը բունին մէջ կը խաղայ, անոր փորին մէջը սատանայ կայ.
Քօռ-կոյր աչքէն արցունք չի գար.
Շինելու տեղ, աչքն ալ հանեց.
Ելած աչքը տեղը չի գար.
Մինչեւ մարդուն հոգին չցաւի աչքերը չեն լար.
Վախկոտի աչքին, կատուն գիշերը սատանայ-դէւ կ'երեւայ.
Հարեւանի հաւը հարեւանի աչքին գէր կ'երեւայ.
Հիւանդի աչքը դրան կ'ըլլայ.
Աչքը հանողին հոգին հանէ.
Չար աչքը քարն ալ կը փշրէ.
Շէկ մարդու աչքը զօրեղ կ'ըլլայ.
Ծախողին մէկ աչքը բաւ է, առնողին հազարն ալ քիչ է.

Կաշառքը դատաւորի աչքը կը քօռացնէ.

Ագռաւը պահէ, որ աչքդ փորէ.

Ագռաւը ագռաւի աչքը չի հանէր.

Մրջիւնը պզտիկ է, բայց առիւծի ականջը կը մտնէ.

Աչքովդ տես, փէշովդ ծակէ.

Ուրիշին աչքը քեզ լոյս չի տար.

Հեռու կեցիր չար աչքէն.

Մէկ աչքը միւսին օգուտ չունի.

Քունը ի՞նչ կ'ուզէ, երկու աչք.

Կոյրը ի՞նչ կ'ուզէ, երկու աչք.

Լաւ է մարդուն աչքը ելլէ քան անունը.

Աստուած կնկան տուեց երկնային կապոյտ.

.«Ակոյ» բառին գործածութիւնը մեր լեզուի
դարձուածքներուն, առածներուն եւ ասացուածքներուն մէջ

Աշխատասէր Յարութը ակոսները բանեցուց եւ յաջողեցաւ.
Ակոյէս կը կտրեմ, դրացիներուն կը կերցնեմ, ըսաւ բարի հայուհին.

Տղա՛ս ակոյադ չի կտրեր, ձգէ աւագակը երթայ.

Այդ քու գործդ չէ, քու ակոյադ չի կտրեր.

Ակոսնիս մինչեւ հիմա սեղմեցինք, քիչ մըն ալ սեղմենք կնիկ.

Պանդուխտ տղան ակոսները սեղմեց եւ կարողացաւ վաստակը մօրը դրկել.

Գործաւորը ակոսները սեղմեց երբ վարպետը զինք հանդիմանեց.

Խեղճ աղջիկը ակոսն սեղմած կը սպասէ իր սիրածին.

Ակոսները սրած թշնամիին կը սպասէր.

Շարժավարին ակոյին տակ բան մը ձգեցի, խօսելու ոճը փոխեց.

Ակոյիս տակ որ իյնայ Սագօն , գիտեմ թէ ինչ պիտի ընեմ.

Սղոցի ակոսները բութ են, պէտք է սրել.

Տուրտ օրերուն ակոսներս իրար շատ կը դպչին.

Հայ փոքրիկները ակոսներով դիմադրեցին թուրք փոքրիկներուն.

Ակոսն զարդ մըն է շատ մը կիներու բերաններուն մէջ.

Արցախի ժողովուրդը մինչեւ ակոսները զինուած են.

Տկարը զօրաւորին ակոյին տակ կ'ըլլայ.

Հայրս ակոսները թափեց եւ ատաճառաւ գործածելու սկսաւ.

Երեխան դող ունի, ակոսները այնպէս կը կրճտէ որ հեռուէն կը լսուի.

Դրացիս ակոսները հարած է իմ դէմ.

Ազոխ կեռայ, ակոսներս հարուեցան.

Նուէր տրուած ձիուն ակոսները չեն հաշուեր.

Երեխան մարգրիտ ակռաներով սկսաւ առանձին ուտել.

Մսալոշը ակռայիս յարմար է.

Ակռան զարդ մըն է որ կը շոյէ մարդոց գեղեցկագիտական զգացումը.

Հայերը թուրքիոյ մէջ ակռայ ունենալու են.

Տգեղ մարդը իշու ակռաներ ունի.

Սանտրի ակռաներուն մեծ մասը ջարդուած է.

Շունը ակռաներով կը պաշտպանէ ինքզինքը.

Յակոբը գողը տեսնելով ակռաները սրեց.

Փողոցի լակոտները իրենց ակռաները սրած մեզի կը դիտեն.

Երիտասարդին ակռաները սուր են.

Երեք ակռայ սխտոր տու՛ր, ըսաւ մայրիկը.

Անոր հետ մի ընկնիր, քու ակռաներդ տկար են.

Թուրքերը հայերուն դէմ ակռայ կը ցցեն.

Թուրքին ակռաները պէտք է քաշել.

Չար տղուն ակռաները քննեցէք, ուզածը ինձ է.

Ընծայ տրուած ձիուն ակռային չեն նայիր.

Եթէ պիտի չկրնաս խածնել, երբեք ակռաներդ ցոյց մի տար.

Երկաթ ուտելու համար պէտք է պողպատէ ակռաներ.

«Այտ» բառին գործածութիւնը մեր լեզուի
դարձուածքներուն, առածներուն եւ ասացուածքներուն մէջ

Սարգիսը Սիրունին քնքուշ այտերէն անմահական համբոյր մը քաղեց.

Հայկանուշին այտերը նրան կը նմանին.

Վարդանը Վարդուհիին վարդ այտերուն զարնուեցաւ.

Ազգանուշին գեղեցիկ այտը արժանի է պաշի.

Տաքարին Հրաչը կրքոտ համբոյրներ տեղաւորեց անուշիկ Սեդային կարմրուկ
այտերուն.

Ատամ բառին գործածութիւնը մեր լեզուի դարձուածքներուն, առածներուն եւ ասացուածքներուն մէջ

Ատամները թափած շունը պազած կը հաջէ.

Թշնամին այլեւս սիրտ չունի մեր վրայ յարձակելու, անոր ատամները լաւ թափեցինք

Մեր չքաւոր դրացիները ատամի ժանգով կ'ապրին.

Երկու օր եղած է ատամներու տակ բան չեմ դրած.

Թշնամին ատամները սրած հայ զինեալ տղոց կը սպասէ.

Բանտին մէջ թնամիին զինուորներուն ատամները իրար կը զարնէին.

Սաստիկ ցուրտէն բոլորիս ատամները իրար զարնելով կ'երգէինք.

Հայ ազատամարտիկը ատամները սեղմած կը հետեւէր թշնամիին շարժումներուն.

Հայ զինուորը ատամները սրած պատրաստ էր հարուածելու թշնամիին թաքստոցը.

Հայ զօրքերը կարողացած էին թշնամիին ատամները փշրել եւ ախորժակը կտրել
Սիւնիքէն.

Տուն կառուցելը ատամների գործ չէ.

Դատաւորը քանի մը բառ սպրտեց ատամներուն տակէն.

Բոլորս ատամներով պաշտպանելու ենք մեր հայրենիքը, պատիւը,
հողը.

Կիկոն ատամ չունի միջամտելու այս գործին մէջ.

«Արցունք» բառին գործածությունը մեր լեզուի դարձուածքներուն, առածներուն եւ ասացուածքներուն մէջ

Գաղթական Խաթուն մամիկը աղի արցունք կը թափէր շարունակ.

Արցունքով ցանողները ցնծութեամբ կը հնձեն.

Ձմեռ եղանակին մեր պարտեզի ծառերը արցունք կրած էին.

Յակոբը ընկերուհիին աչքերէն արցունք կորզեց իր արկածախնդրութիւնները
պատմելով.

Տղուն խեղճ մայրը արցունքներու մէջ մսաց.

Մայրս դժուար կրցաւ իր արցունքները զսպել լսելէ ետք քրոջս արկածը.

Տղան խելքի եկաւ, տուն դարձաւ մօրը արցունքները չորցնելու.

Մամիկը շարունակ կ'ըսէր՝ արցունք կայ իմ տղու հոգում.

Արցունքները կը սահէին Տրդատին մօրը աչքերէն.

Փոլ Կիրակոսեանի նկարներէն շատերը դիտողէն արցունք կը խլէ.

Դրօն բուռ մը չթափուած արցունք տարաւ Հայաստանէն.

Հայրս արցունք թափեց զօրավար Անդրանիկի շիրիմին առջեւ.

Մօրս արցունքը չորցաւ, եղբայրս չվերադարձաւ.

Հազար արցունք պարտք մը չեն վճարեր.

Եթէ արցունքներուդ մէջ չունիս մէկը քեզ մխիթարող, գնա՝ եւ ուրիշներու
արցունքները սրբէ:

Աշնան մեր պարտեզի ծառերը արցունք կը թափեն:

«Ափ» բառին գործածութիւնը մեր լեզուի
դարձուածքներուն, առածներուն եւ ասացուածքներուն մէջ

Մայրերու ափին մէջ պէտք է փնտրել ազգերու ճակատագիրը:
Արեւմտեան Ափը Իսրայէլին կցելու մասին Ամերիկացի դեսպանին խօսքը բուն
կերպով քննադատուեցաւ.

Գետին աջ ափը լեռնային է, ձախ ափը դաշտային.
Ոխերիմ դրացիս ի՞նչ իրաւունք ունի տանս դուռն ափ առնելու.

Տասը տոլարով տնտեսին ափը իւղոտեցաւ.
Արցախցիներուն հարուածը թշնամին ափի ի բերան ձգած էր.
Հայաստան դուրս եկաւ Ռուսաստանի երկաթեայ ափերէն.

Ափ մը ժողովուրդ, ցիր ու ցան եղած են.
Գարուն էր, կանաչ խոտերը բուսած էին ափ-ափ եւ կը շարժէին հովին հետ.

Տէր հայրը ափին մէջ առած է բոլոր թաղականները.
Գաւաթ չունի՞ս, ափովդ խմէ.
«Ափ մը մոխիր աճիւնիս հետ, հայրենի տուն, ափ մը մոխիր քու մոխիրէդ, ով պիտի
բերէ» (Սիամանթօ).

Ափ մը հողի համար մեծ ուժեր իրար դէմ կը կռուին.
Ա՞փս հոտոտամ, որ մեզի պիտի գաս.
Ամէն մարդ ափը բանալու է Սուրիահայութեան օգնութեան համար.

Ափով ջուր խմեցինք աղբիւրէն.
Երեխաները ջուրին ափը գացին.
Փոքրիկներով ծովափ գացինք զբօսնելու.

Տղան հօրը ափէն դուրս մսաց.
Անտառին ափը մաքուր էր, ջրհորին ափը աղտոտ.
Վահէն մէկ ափ խնդուք բաժնեց ժողովուրդին իր մենախօսութեամբ.

Մեր տղաքը ծովու ափը գացին .

Սեւանայ լիճի ափին գեղեցիկ դղեակ մը տեսանք.

Եփրատ գետին երկու ափերը լեցուն են Հայ նահատակներու կմախքներով.

Ափ մը ժողովուրդ եւ չեն կրնար գոյակցիլ.

Տիկին Հռիփսիմէն ափ առաւ ՀՕՄ-ի գրասենեակը.

Ելեկտրականութիւն չունեցող դրացիները ափ առին մեր տունը:

«Բագուկ» բառին գործածությունը մեր լեզուի դարձուածքներուն, առածներուն եւ ասացուածքներուն մէջ

Քանի մեր բագուկները կը գործեն, վստահեցէ՛ք մեզի.

Հայ գաղթականները ինկած էին թուրքերու բագուկներուն մէջ.

Հայ մարտիկները բարձրացուցին իրենց վրիժառու բագուկները թուրքին դէմ.

Խելացի ղեկավարը ունենալու է երկաթէ բագուկ եւ փափուկ սիրտ.

Մեծ գործերը յաջողցնելու համար երեք բան պէտք է, սառ գլուխ, կրակէ սիրտ մը եւ
երկաթէ բագուկ մը.

Հայ զինուորները իրենց բագուկները արձակեցին թշնամիին հողերուն վրայ.

Բանակին աջ բագուկը յառաջխաղացքի մէջ է.

Վարչապետը ընտրեց իր աջ բագուկները.

Աղջիկը իր մօրը աջ բագուկն է.

Մեր յոյսը հայ բագուկներու վրայ է.

Եփրատ գետը շատ մը բագուկներ ունի.

Նեղոս գետը բազմաթիւ բագուկներով կը թափի ծով.

Գութանը ունի մէկ կամ երկու բագուկ.

Հօր է հայուն բագուկը.

Իմ բագուկը անոր անպատուութիւնը կը մաքրէ.

Հայ բանակին բագուկը անծայրածիր է..

Իսկական մանկավարժը պէտք է երկաթէ բագուկ ունենայ եւ փափուկ սիրտ.

Կարգ մը Հայ ղեկավարներ իրենք զիրենք թուրքերու բագուկներուն մէջ նետած են .

Քանի բագուկս կը գործէ պիտի շարունակեմ աշխատիլ-պայքարիլ.

«Բերան» բառին գործածութիւնը մեր լեզուի
դարձուածքներուն, առածներուն եւ ասացուածքներուն մէջ

Աղուէսին բերանը խաղողին չի հասնիր.

Ան ազատ բերան բանաստեղծ է.

Բերան մըն ալ աւելցաւ.

Բերանը այրողը՝ ջուրը փչելով կը խմէ.

Անկէ շատ փասս տեսայ, բերանս այրած է անկէ.

Պրն. Վիգէնին բերանը այրած է այս չարաճճի աշակերտէն.

Բերանս այրած է, դիւրին այո չեմ ըսեր.

Տղա՛ս, մօրդ պատրաստած կարկանդակէն կտոր մը բերանդ առ, համը տես.

Ակռաներս քաշուելէ ետք երկու շաբաթ բերանս կարծր կերակուր չառի.

Եղբայրս մեզի այցելեց, բերանը բան մը չառած մեկնեցաւ.

Բարեկամս խօսած ատեն շարունակ Թուրք բառը բերանը կ'առնէ.

Աստուծոյ անունը պարապ տեղ բերանդ մի՛ առնէր.

Փոքրիկն Արազը միշտ մօրը անունը բերանը կ'առնէ.

Կիրակի օր վարդապետին քարոզը իմաստալից էր. անոր բերանը աւետարան է.

Հայրը բերանը արեց, երբ տղան ուշ գիշեր տուն մտաւ.

Այս մէկը բերան առնելու խօսք չէ.

Հակառակ որ դիմացինս շարունակ կը հայիոյէր, ես բերանս չէի աղտոտէր.

Խայտառակին անունով բերանդ մի՛ աղտոտէր.

Որսորդը անդունդին բերանը հասաւ.

Ամէն բերան «Նոր ծաղիկ» երգչախումբին գովքը կ'ընէ.

Անմաքուր բերանը որջ մը կը դառնայ վարակիչ մանրէներու.

Ամէն բերան Ազնավուրի գովքը կ'ընէր.

Անտառին բերանը մութ խրճիթ մը կար.
 Աւերակ բերանը շատ մը հիւանդութիւններու յարուցիչն է.
 Ժոժօն բերանը արեց երբ տեսաւ իր անախորժ դրացին.
 Դոնքացի օրը տէր Ստեփանոսը, իբր թէ, մանուկներուն բերանը կը բանայ.
 Բերանը բաց դուռ մըն է շատ մը մանրէներու.
 Բերանս բանալ մի՛ տար ա՛յ կնիկ.
 Ան իմ ներկայութեան բերան չի կրնար բանալ.
 Յակոբը ճաշը տեսնելէ ետք բերանը լայն բացաւ.
 Ամէն մարդ խօսեցաւ՝ ես բերան չբացի.
 Մի՛ ձգեր որ օրհնուած բերանս բանամ.
 Խաչիկը բաց բերան մարդ մըն է.
 Բաց բերանը անօթի չի մսար երբեք.
 Բերանս բաց պիտի ընդունիմ հարսս այսօր երբ մեզի այցելէ.
 Բերանդ լաւ խօսքերով բաց.
 Անոր բերանը բաց խորան է.
 Բերանդ բանալու տեղ աչք՝ դ բաց.
 Հայրս շարունակ կ'ըսէր՝ բաց բերանը միշտ կը քննադատուի.
 Անմտութեան կամ անխելքութեան նշան է բաց բերանը.
 Անոր բերանը բաց է, բան չի վստահուիր իրեն.
 Բերանս բաց ունկնդրեցի երգահանդէսը.
 Բերանդ մի՛ բանար, ճանճ կը փախչի.
 Զարմացայ եւ բերանս բաց մնաց երբ լսեցի իմ վաղեմի ուսուցիչիս
 դասախօսութիւնը.
 Երբ պոռթկալու պահանջքը զգար հայրս, կը գոցէր աչքերը եւ կը բանար իր
 օրհնեալ բերանը.
 Առաջին անգամ ե՞րբ բացուեցաւ հայու բերանը.

Բարի խօսքի համար Տիգրանը բերանը բացած էր.
 Բայց դուն ի՞նչպես կարող էիր բերան բանալ քու մեծերուդ քով.
 Խայտառակին անունը բերանդ մի՛ բերեր.
 Հնազեւները արձանը հողին բերանը բերին.
 Տ՛էր ողորմեայ, տիկին Շաքէ, խօսի՛ր, բերանդ ո՞վ բռնած է.
 Զաւէնը բերնով թռչուն կը բռնէ, պալատ կը շինէ.
 Շատախօսը շաղակրտսին մէկն է, բերանը բռնես նորէն կը խօսի.
 Շատակեր Արային բերանը բանուկ է.
 Այնքան խօսեցայ խրատեցի, որ բերանս մագ բուսաւ.
 Հարսը բերանը բռնեց.
 Բերանս բերնէդ մօտ է.
 Սարգիսը բերան բերնի կը խօսէր կնկայ մը հետ.
 Աղջիկն ու տղան բերնէ բերան նստած էին պարտեզին մէջ մութ տեղ մը.
 Ուշադրութիւն ըրէ ըսածներուդ, բերնէ բերան կ'ըլլայ գերան.
 Երկու ոսկիով, տղան ընկերոջը բերանը գոցեց.
 Բերանդ գոցէ տղա՛ս, դասախօսը խօսած ատեն.
 Բերանդ գոցէ աղջի՛կս, ծամած ատենդ.
 Մօրս բերանով նամակ գրեցի մօրեղբօրս.
 Հաճի՛ս Սարգիս, աղտոտ բերանդ մի՛ գործածեր.
 Դանակի սուր բերնին նման հատու էր անոր հարցումը.
 Դանակին բերանը վտանգաւոր է.
 Հիւրերը դրան բերանը կանգնած երկար խօսեցան.
 Աստղիկին բերանը դուռ չունի.
 Ոստիկանին բերանը բան մը դիր-իւղոտէ, որ հեռանայ.
 Տղա՛ս, բարեկամիդ բերանը քամ դիր.
 Աղջի՛կս, ամուսինիդ բերանը լեզու մի՛ դներ.

Պոռոտախօսը բերնին սանձ դնելու է.
Կարելի չէ հերոսին բերանը սանձ դնել.
Մայրը անհեռատեսությամբ աղջկան բերանը խօսք կը դնէր.
Ուսուցիչը աշակերտին բերանը լեզու դրաւ.
Ուսուցիչը ծամեց եւ աշակերտին բերանը դրաւ.
Նայեցէք այդ տղուն, բերանէն ինչեր դուրս կու տայ, չ'ամչնար.
Տնօրէնին բերնէն ելած լուրերը լաւ չէին.
Լալէին աչքերը ուռած էին մօրը յանդիմանութեան վրայ, սակայն
զանգատի բառ մը բերնէն չէլաւ.
Խելագարը բերանը եկածը արհեստագործական դուրս կու տայ.
Բերանին եկածը ըսաւ.
Բերնիս ծայրը եկաւ, բայց բան մը չըսի.
Յակոբին մականունը բերանս եկաւ, սակայն առիթ չտուին որ արտայայտուիմ.
Մայրս երկու բերան լուացք ըրաւ.
Իմ պահարանս երկու բերան ունի.
Բերանս չերթար, որ քանի մը կծու խօսք ըսեմ հարեւանին.
Խեղճ մայրը բերնէն զրկեց եւ դրկեց իր մէկ հատիկ տղուն.
Վարդապետին բերանը բերան չէր այլ՝ տաճար.
Տէր Փանոսը մանուկին բերանը լեզու դրաւ.
Քիթը բերանը մէկ ըրի.
Ամէն բերան անոր գովքը կ'ընէ.
Թշնամին բերնէն կրակ կը թափէր.
Անկիրթ Կիկոսը բերնէն թոյն-կրակ կը թափէ.
Մարգրիտը ճարտասան է, երբ խօսի բերնէն մարգրիտ կը թափի.
Սաթնիկին բերանը թոյլ է, անոր ոչինչ կարելի է վստահիլ.
Յակոբին բերանը թոյլ է, եթէ ձգես ժամերով կը խօսի.

Ուրախութենէն, Արթոն բերնէն լաւ խօսք սկսաւ թոցնել.
 Հակառակ որ Սիրունը գաղտնապահ է, երէկ բերնէն լուրջ խօսքեր թոցուց.
 Փոքրիկ տղան մօրը գաղտնիքը բերնէն թոցուց.
 Տղան 20 տարեկան է, բայց բերանէն կաթ կը թափի.
 Թնդանօթին բերանը կրակոց կար.
 Բերանդ ժողվէ Սեպո՛ւհ, բոլորը կը վիրաւորես այս ձեռով.
 Բերանդ ժողվէ աղջի՛կս, պատերը ականջ ունին.
 Վերջին ընտրութիւններու ընթացքին շատերուն բերանը շատ լաւ իւղոտեցաւ.
 Երբեմն քահանային բերանը իւղոտելու ենք, որպէսզի լաւ քարոզէ.
 Սագօն ամուսնանալէ ետք բոլորին բերանը ինկաւ, պզտիկ աղջկայ մը հետ
 ամուսնացած էր.
 Ուշադի՛ր եղէք, աշնան քամիին բերանը չիյնաք.
 Ընտանեօք կրակի եւ փոթորիկի բերանը ինկանք պատերազմի օրերուն.
 Սարգիսը ամուսնալուծուեցաւ, բոլորին բերանը ինկաւ.
 Բոլոր հալէպահայութիւնը Սուրիոյ պատերազմին կրակի բերանը ինկաւ.
 Բերա՞նդ ինկէր է անոր հետ վիճաբանելու.
 Սրահը բերնէ բերան լեցուն էր «Նոր ծաղիկ» երգչախումբի երգահանդէսին.
 Այս բոլորը իմ հօրս բերանէն լսեցի.
 Թուրքիոյ քաղաքական վիճակը լաւ չէ, Էրտողանին բերնէն լսուած է.
 Սահակը այնքան խմած էր, որ բերանը լեզու չէր փաացած.
 Զաւէնը կնկան բերանը լեզու դրաւ.
 Տիկին սակաւախօսին բերնին մէջ լեզու չկայ.
 Լեռնագնացը լերան բերանը հասաւ.
 Այսօր տէր հօր բերնէն լուրջ քարոզ մը լսեցի.
 Գետին բերանը լեցուած էր ծառերու ճիւղերով.
 Աստուած բարի ճամբայ տայ, տէ՛ր Կոմիտաս, բերանդ լոյս ըլլայ.

Հօրը բերանի խօսքը դուրս չելած, տղան վազեց հօրը ըսածը կատարելու.

Անոր բերնէն խօսքը աղբիւրի պէս կը հոսի.

Խողովակին բերանը մաքուր էր.

Հացը բերանը կը խոթեն, աչքը չեն խոթեր.

Յակոբը իմ բերանովս շատ բաներ խօսած է Պէյրութի մէջ.

Շատախօս տէրտէրը բերնի ծամոց դարձաւ.

Խեղճ անդամալոյծը փոքրիկներուն բերանի ծամոց դարձաւ.

Տղաս, բերան մի՛ ծներ դրացիիդ.

Ամէն մարդու բերան մի՛ ծներ, հոգի՛ս.

Յակոբը բերան ծռեց երբ կինը սկսաւ խօսելու.

Հարսին գանգատներուն վրայ կեսուրը բերանը ծռեց.

Մարկոսը բերանը ուրիշին ծախեց.

Յակոբին բերանէն հեշտալուր արտայայտութիւններ եւ իմաստութեան խօսքեր
ծորեցան.

Ժողովուրդը ոտքի կեցած, բերանները կիսաբաց կը դիտէին աճպարարը.

Անահիտին բերնէն կաթի հոտ կու գայ, հակառակ որ չափահաս աղջիկ է.

Շաքարախտաւորը բերնէն շատ բան պէտք է կտրէ.

Բերնէդ կտրէ եւ այդ ծերուկին տու՛ր.

Բերան կայ հաց չկայ, հաց կայ բերան չկայ.

Ոսկիները տոպրակի մէջ դրած ու բերանը ամուր կապած տուն գնաց Աբիսողոմը.

Բերանդ կապէ՛ երբ թատերասրահ կը գտնուիս.

Բերանդ շարունակ մի՛ կապեր ժողովի ընթացքին.

Տարօնին հայրը խօսող մարդ էր, սակայն ժողովներու մէջ բերանը կապուած
կը նստէր.

Նախագահը ժողովուրդին բերանը կապած է.

Փեսան հարսին բերանը կապած է.

Արտօնութիւն տրուեցաւ, որ բերանիս կապը կտրեմ եւ երկար խօսիմ.

Բերանդ կտրուէր, այդ խօսքը չըսէիր.

Շուարած եմ, երթամ թէ ոչ, կէս բերան հրաւէր ստացայ.

Ո՞վ կրնայ ժողովուրդին բերանը կղպել այս դարու ազատ աշխարհին մէջ.

Սագօն բերանը կղպեց երբ տնօրէնը դասարան մտաւ.

Սեդային բերնէն ոչ տաք կու գայ, ոչ հով.

Վաղը ես այդ անբարտաւան տղուն բերանի չափը կու տամ.

Բերնիդ հացը կտրէ, ետքը նոր գործի սկսիր.

Սարգիսը բերնին հացէն կտրեց եւ չքաւորին հասաւ.

Համբերատար Կարօն բերնին կապը կտրեց.

Մինչեւ այս գործը բերան հանեմ շատ յոգնեցայ.

Մեր տան հորի բերանը շատոնց գոցած էր հայրս.

Դասախօսին բերնէն մարգրիտ կը հոսէր.

Անպիտան տղան հօրը հոգին բերանը հասցուց.

Հազիւ մօրս պատրաստած կերակուրը տեսայ բերնէս ջուր հոսեցաւ.

Կէս բերանով մի հրաւիրեր ընկերներդ.

Բերանը հայելին է շատ մը հիւանդութիւններու.

Բերանդ հայացու՛ր, թրքերէն մ՛ի խօսիր.

Բերնի համով կերակուր մը չկերանք դպրոցը.

Գինիի գաւաթներու ազդեցութեամբ հիւրերը իրարու բերնէ ճառեր
յափշտակեցին.

Հանքիկը տան ճամբան կորսնցուցած էր, բերանը գինիի տակառ կը հոսէր.

Դրացիին տղան հակառակ որ 18 տարեկան է, բերանը կաթ կը հոսի.

Աներոջս բերնէն մեղր կը հոսի.

Հազար բերան փառք տուին Աստուծոյ.

Բերնիդ համը կու տամ ըսաւ Սարգիս իր անհնազանդ տղուն.

Անոր բերանը համ չունի, անոր ճաշակին պէտք չէ վստահիլ.
Նանորը բերանին համը գիտէ, լաւագոյն ճաշարաններու համեղ կերակուրները
կ'ուտէ.

Միրունը ճոխ բերան ունի.

Անոր բերանը ոսկոր մի նետեր.

Աշակերտները միաբերան երգեցին դպրոցին քայլերգը.

Լեզուն ունի երկու ճիւղ, երկու բնաւորութիւն՝ չարն ու բարին մէկ բերանի մէջ.

Մեր Տարօնին պատասխանը բերնին մէջն է.

Մեր տէր հայրը բերանով մարդ է, մէկ ոչխար առանցին կուտէ.

Ով իմ հմայիչ Հայերէնս, աղօթքի մը պէս մխիթարիչ, դեղի մը պէս օգտակար, եթէ
մոռցայ մէկ վանկդ, թող ալ չդառնայ լեզուս մեղաւոր բերնիս մէջ: (Շաւարշ Նարդունի)

Աղջի՛կս, տէր Մարկոսին ձեռքը համբուրէ, բերա՞նդ կը մաշի.

Հայ զինուորները կրակի բերանը մտան, սակայն ապահով դուրս ելան.

Ոչ աչքիս բան տեսայ, ոչ բերանս բան մտաւ.

Մեր հիւրը մէկ բերան կը խօսէր, բերանը չորցաւ.

Գիւղացին մէկ բերան կը պոռայ.

Աշակերտները մէկ բերան կը խօսէին.

Յովակիմը մեծ բերան մարդ է.

«Նոր ծաղիկ» երգչախումբը մտիկ ընելէ ետք բերանս բաց մնաց.

Ներկաներուն ընդմիջումով դասախօսին խօսքը բերանը մնաց.

Քիչ մը հեռու կեցի՛ր, ի՞նչ բերանս մտեր ես.

Աշակերտը ուսուցիչին բերանը մտաւ.

Խեղճ կնիկը տղուն բերանին կը նայի, անոր յոյսը տղուն վրայ է.

Խեղճ Մարօյին յոյսը տղան Շաւարշն էր, անոր բերանին կը նայէր շարունակ.

Աւելի լաւ չէ՞ր ըլլար, որ վրադ գլուխդ շտկելու տեղ, բերանդ շտկէիր անամօ՛թ
աղջիկ.

Շուկային բերանը նստած օշարակ կը ծախէր Կիկօն.
 Ոսկերիչներու շուկայի բերանը մեծ հրդեհ մը ծագեցաւ.
 Մօսիկին լուսերես եարը շուշան բերան ունի.
 Շաւարշը բերանը բանալի չունի, բոլորին կ'անարգէ.
 Կ'ըսեն որ կիներուն բերանը դուռ չունի.
 Շատախօս Սիրանը այնպէս բերան մը ունի, որ ոչ բակ ունի եւ ոչ ալ բանալի.
 Ծերուկը բերան չունի, կերածը կտոր մը հաց եւ պանիր է.
 Ժողովականները բերան չունէին մինչեւ վերջին նիստը.
 Հարսը բերան ունի, լեզու չունի.
 Մեր ընտանիքը կազմուած էր վեց ուտող բերանէ եւ մէկ աշխատող ձեռքէ.
 Արեգը մէկ տարեկան է, արդէն բերնին մէջ լեզու ունի.
 Վարձակալը տանտէրին բերանը ոսկոր նետեց.
 Ամէն բերան լեզու չունի.
 Բերնիդ չափը վաղը կուտամ.
 Շաքարախտաւորը բերնին չափը գիտնալու է.
 Կեցէ՛ք տղաք, երթամ անոնց բերանը չափեմ, ըսաւ հայրս երբ զինեալները մեզի
 մօտեցան.
 Տէր Աստուած եթէ քեզ չփառաբանեմ բերանս թող չորնայ.
 Բերան չէ, տաճառ է.
 Տիգրան խնդուքը բերնին մէջ չէր կրնար պահել.
 Եղբայ՛ր, բերանդ քեզ պահէ.
 Շատախօսը անկարող է բերանը փակ պահել.
 Բերանդ պագնեմ ձագուկս, բերանդ քեզի պահէ.
 Բարեկամս բերանը շարունակ մաքուր կը պահէ, բնաւ չի հայիոյեր.
 Սիրային գաղտնիքներու համար Շահէին բերանը պինդ է, իսկ փափեալի
 համար անոր բերանը դուռ չունի.

Բերանս պապանձեցաւ երբ տեսայ նահատակ հայ մարտիկին դագաղը.

Թշնամիին բերանը պիտի պատռենք, յաղթական դուրս պիտի գանք.

Երէկ իրար բերան կը պատռէին, այսօր եղբայրացած են.

Բերնիդ պատառը որք ընկերոջդ տո՛ւր-կերցո՛ւր.

Տիկին Արաքսին բերնին պատառը կը կիսէր իր քրոջը հետ.

Սիրելի՛ս, բերնիդ պատառը քովդ նստող ծերուկին տուր.

Պետութեան բերանը կարելոր յայտարարութիւններ կատարեց.

Պզտիկ բերան՝ մատուռի խորան.

Իր բերանը երբեք չէր պղծած անէծքով.

Վրէժը դիտելով Պոսֆորի բերանը՝ զմայլեցաւ թէ՛ գարնան գեղեցկութեան եւ թէ իր եարին.

Յիմարին սիրտը իր բերնին մէջ է, իսկ իմաստունին բերանը՝ իր սրտին.

Անոր բերանէն կարելոր տեղեկութիւններ սպրդեցան.

Անօթի մուրացկանին բերնին ջուրերը վազեցին երբ տեսաւ կերակուրը.

Ամէն անգամ որ խորոված եւ ձուկ տեսնեմ բերնիս ջուրը կը վազէ.

Բերանդ սիրեմ, ի՛նչ լաւ խօսեցար.

Բերանդ տաճա՛ռ, լաւ եւ տեղին էր ըսածդ սիրելի Սրբազան.

Ոստիկանին բերանը ոսկոր մի՛ տար.

Վերապրողները հազար բերան փառք տուին աստուծոյ.

Մարդուն ամենէն տկար կէտը իր բերանն է.

Բերնիդ պատառը ուրիշին տուր.

Նորահարսին արժէքաւոր բերան բացուկ տրուեցաւ.

Ի՛նչ է, բերանդ կը ցաւի եթէ շնորհաւորես ընկերդ.

Մանչուկը բերանէն մօրը խօսքերը փախցուց.

Հարսը բերանը փակեց երբ աները ներս մտաւ.

Թնդանօթի բերանը կրակով կը փայլէր.

Միրելի տղաք, հիմա ձեր ականջը բաց պահեցեք եւ ձեր բերանը՝ փակ.
 Միամիտ հրամանատարը բերնէն կարեւոր տեղեկութիւններ փախցուց .
 Ոստիկանը գողին բերանը շատ փնտռեց, բայց բան չստացաւ.
 Խօսակիցս բերանը փոխեց, երբ որոշ ճշդութներ կատարեցի.
 Աւագակը բերանը փոխեց հարցաքննութեան երկրորդ օրը.
 Ճաշկերոյթը կազմակերպողները մեր բերանները քաղցրացուցին.
 Բերնի քաղցրութեամբ վերջացուցինք մեր գործը.
 Ռազմիկը կատողեցաւ, բերնի կապը քակեց, սկսաւ բոլորին երեսին
 ըսել իրականութիւնը.
 Գաղտնապահին բերնէն մի քանի խօսք աքցանով քաշեցի.
 Թշնամին պատանդ զինուորներուն բերանէն շատ խօսքեր քաշեց.
 Երանի բերանս քար լեցուէր.
 Բերանդ օրհնուի տէր Գառնիկ, լաւ լուր տուր հայրենիքէն.
 Բերանը գլխաւոր օճախն է շունչի գարշահոտութեան.
 Գայլին բերնէն ոչխար չազատիր.
 Էրիկ կնիկ են, իրարու բերան թքնեն, կը կշտանան.
 Բերան կայ, հաց չկայ, հաց կայ բերան չկայ.
 Փարան լեզու չունեցողը բերանը լեզու կը դնէ.
 Շան բերանը ոսկոր դնես, կը սկսի լռել.
 Սոխ ուտողին բերանը կը մրմռայ.
 Ծառի տակը պառկելով բերանդ տանձ չիյնար.
 Բերանը լեցուն է, փորը պարապ.
 Բերանը սրտի թարգմանն է.
 Խօսքը քանի բերանդ է՝ քուկդ է, բերնէդ ելաւ՝ քուկդ չէ.
 Ամէն բերան տոպրակ չէ, որ կարես.
 Համբերէ որ բերանը համ գայ.

Բաց բերանը անօթի չի մնար.

Բերանդ բանալու աչքդ բաց.

Հժկու մարդը իսեղճ տղուն քիթին-բերնին լաւ մը փակցուց.

«Բիբ» բառին գործածությունը մեր լեզուի
դարձուածքներուն, առածներուն եւ ասացուածքներուն մէջ

Մեր մեծ հայրիկը իր աչքի բիբին պէս կը սիրէ իր թոռնիկը.

Աչքիս բիբը լայն բացուեցաւ երբ տեսայ Երեւանը.

Մեսրոպին աչքի բիբը կծկուեցաւ տգեղ նկարներուն առջեւ.

Ընկերոջս բիբը կատուի բիբի կը նմանի.

Պահէ զիս աչքի բիբին պէս, եւ քու թելերուդ շուքին տակ ծածկէ զիս.

Աչքի բիբի պէս սիրեցէք հայրենիքը.

«Գլուխ» բառին գործածությունը մեր լեզուի
դարձուածքներուն, առածներուն եւ ասացուածքներուն մէջ

Աստուած ազերիներուն գլխուն թող քար թափէ:

Գլխուդ կարկուտ թափի անպէտ դրացի.

Նետած քարդ կրնայ օր մը գլուխդ ծակել.

«Բժիշկին Ե. գիրք»-ին հինգերորդ գլխուն մէջ կը խօսուի անուանի հայ բժիշկներու
իրագործումներու մասին.

Հայր ու տղայ գլուխ-գլխի աշխատեցան ու մեծ յաջողութիւն ունեցան.

Հալէպցի Կարօն գլուխը ազատեց Գանատա հաստատուելով.

Բանտարկեալը գլուխը ազատեց եւ գնաց.

Զոհրապը սուտ խօսեցաւ դատաւարութեան ընթացքին եւ ընկերոջը
գլուխը ազատեց.

Առտուրնէ ի վեր նստած կ'աշխատիմ, գլուխս վեր չեմ առած.

Ընտանիքի միակ տղան գլուխը առաւ ու գնաց.

Խելքս կտրէր՝ գլուխս կ'առնէի եւ Հայաստան կ'երթայի.

Շատախօսին գլուխը ձեռք առի եւ լռեցուցի.

Տղան սիրականին գլուխը առաւ եւ գնաց.

Մարտիկը քրոջը գլուխը արդուկեց, ունեցածը առաւ եւ գնաց.

Շատախօսը գլուխս արդուկելէ ետք գնաց.

Բանակի գլուխ անցած հազարապետը իր զինուորներով ճակատ գնաց.

Անդրանիկ՝ առաջին զօրագունդին գլուխը անցաւ.

Զօրավարը բանակին գլուխը անցաւ շատ արագ.

Հօրս գլխէն շատ տաք ու պաղ հարցեր անցած են.

Շատախօսը գլուխ անցուց-դարձուց.

Բազրատը քնացած է, սակայն արթուն գլուխ է.

Մեծ գլուխները թող ապրին յաւիտեան.
 Ամէն մէկ գլուխ կ'արժէ հինգ հազար ոսկի.
 Կնի՛կ, գլուխդ կ'առնես թատրոն կ'երթաս.
 Ամսու գլխուն Հայաստան պիտի ճամբորդեմ.
 Ամսէ գլխուն պարտքս կը վճառեմ.
 Սրբ. Յակոբ վարժարանի աշակերտները այս տարի Մոնթրէալի հայութեան
 գլուխը բարձրացուցին.
 Յակոբին 16 տարեկան զաւակը գլուխը բարձրացուց հորը դէմ.
 Ինչ որ ալ պատահի, ոտքի կանգնիր, գլուխդ բարձրացու՛ր եւ առաջ գնա՛.
 Սարգիս գլուխ բարձրացուց իր ծնողքին դէմ.
 Տղան գլուխը բռնեց ու վերջնականապէս հեռացաւ.
 Սարգիսին գլուխը բռնեց ալքով խմելէն ետք.
 Ատենապետը գլուխ բռնէր է ատենադպիրին դէմ.
 Անխելք տղան գլուխ բռնեց եւ մօրը հետ չխօսեցաւ.
 Նաւուն մէջ մօրս գլուխը բռնեց.
 Նոր գլուխ մը բացուեցաւ իմ կեանքիս մէջ, երբ հանդիպեցայ Էլիզապէթին,
 ամուսնացայ.
 Ոգելից ըմպելիները շուտով գլուխս կը բռնեն.
 Կարօն գլուխ բռնեց հորը դէմ.
 Տէր Գաբրիէլը գլուխ բռնեց, ձգեց եկեղեցին ու գնաց.
 Սարօն գլուխ բռնեց եւ կուսակցութենէն հրաժարեցաւ.
 Գլուխը բարձին, աչքը դգալին.
 Հօրեղբայրս մեծ շնորհքներ ունէր, գլուխը բարձր կը քալէր.
 Յուցարարները գլուխ բարձրացուցին, սակայն ապարդիւն.
 Տիրացո՛ւ, դուն այսօր ու՞րկէ գլխուս բուսար.
 Տղա՛ս, գլխուս բան չբանաս, ըսաւ կինը իր ջղային տղուն.

Սպասէ, տես թէ ինչ փորձանք պիտի գայ գլխուդ.

«Թշուառները » Վիքթոր Հիւկոյի գլուխ գործոցն է.

Գլուխ գործոց արուեստի կտորներ վաճառուեցան մեր կեդրոնին մէջ.

Ծերանալ գիտնալը իմաստութեան գլուխ գործոցն է.

Դասախօսութիւնը շատ երկար էր, գլուխս գնաց.

Հայ տղաքը կամուրջին երկու գլուխները գրաւեցին.

Ամէն մարդ իր գլխուն ճառը ինք գտնելու է.

Միագլուխ կուսակցութեան գլխաւոր գլուխը, ինքնագլուխ չորս գլուխ-գործոց եւ անգլուխ ժողովներ գլխաւորեց.

Եղբայրս գլխէ դուրս գործ բռնած է եւ չի կրնար անոր տակէն դուրս գալ.

Պատերազմի ընթացքին ամէն տեղ փլատակ էր, գլուխ դնելիք տեղ չկար.

Գլուխը միայն գլխարկ դնելու համար չէ.

Գլուխս դնելու հարազատ հող չեմ գտներ.

Գաղթակայանին մէջ գլուխս դնելու տեղ չգտայ.

Ողջ գլուխդ աւետարանին տակ մի դներ, հոգիս.

Խեղճ մարդը ողջ գլուխը աւետարանին տակ դրաւ.

Գլուխդ վտանքի մէջ մի՛ դներ.

Տէրտէրը երիտասարդ գոյգին գլխուն նարօտ դրաւ.

Գլուխս դարձուց Արեգին արագ արագ վազելը.

Անհանդարտ Սեպուհը հօրը մեծ գլխացաւ դարձաւ.

Գլուխս կը դառնայ երբ օդանաւով ճամբորդեմ.

Ոճրագործը ընտանիքին գլխուն ցաւ դարձաւ.

Աճպարարը գլուխս դարձուց.

Այս մարդուն գլուխը դատարկ է.

Դդու՛մ գլուխ, բան չե՞ս հասկնար.

Երկու գլուխը մէկէն լաւ է.

Քու ոտքդ գացած տեղը, իմ գլուխս թող երթայ.
 Գլխուս եկածը անակնկալ էր.
 Գլուխիս մեծ փորձանք մը եկաւ.
 Յակոբը գլխի եկաւ եւ հօրը խօսքերը մտիկ ըրաւ.
 Մեծ փորձանք մը եկաւ մեր գլխուն Գանատայի մէջ.
 Պապը, կաթոլիկ եկեղեցւոյ գլուխն է.
 Գէշ մարդու հետ գլուխ կարելի չէ ելլել.
 Կառավարութիւնը կրցաւ գլուխ ելլել ցուցարարներուն հետ.
 Գէշ մարդու հետ գլուխ կարելի չէ ելլել.
 Երկու գլուխ սխտորով համեղ սիսեռախոյս (համաուս) պատրաստեցի.
 Իմ գիրքս կազմուած է չորս երկար գլուխներէ.
 Լաւ չեմ, կը զգամ որ գլուխս կ'եռայ.
 Գլխուս վրայ կ'երդնում, որ փսաս պիտի չհասցնեմ.
 Էշ գլու'խ, Բան չե'ս հակնար, գլուխը ճօճելով ուսուցիչը խօսքը ուղղեց
 աշակերտին.
 Խեղճ տղուն գլուխը զարկած է, ըրածը ըսածը չի գիտեր.
 Հալէպցի գաղթականը գլուխը պատէ-պատ զարկաւ մինչեւ որ գործ մը գտաւ.
 Եղբայրս գլուխը պատէ պատ զարկաւ մինչեւ որ դարմանուեցաւ.
 Գլուխս ամէն կողմ զարկի գործ մը գտնելու համար.
 Խեղճ մարդը գլուխը ամէն տեղ զարկաւ ազատելու իր զաւակը.
 Օղին գլխուս զարկաւ.
 Գլուխը քարէ քար զարկաւ մինչեւ բժիշկ եղաւ.
 Որբին գլուխը ընկճուած է.
 Պանդուխտը երբ տուն մտաւ ընտանիքի բոլոր անդամները անոր գլուխը օրհնեցին.
 Աւելի լաւ է ճանճի գլուխ ըլլալ, քան թէ առիւծի պոչ.
 Ժողովուրդը վարչապետին գլխուն թափուեցան.

Տիկին Սրբուհին տուն մտաւ եւ բարկութիւնը ամուսնոյն գլխուն թափեց.
 Հագիւ տուն հասայ արկածէս ետք, ամբողջ դրացիները գլխուս թափուեցան.
 Հագիւ Հալէպ հասայ, ընկերներս բոլորը գլխուս թափուեցան.
 Տրդատին գլխուն պաղ ջուր թափուեցաւ, ակնկալածը չեղաւ.
 Տղան գլուխը թոցուցեր էր, խօսածը չէր գիտեր.
 Մայրը գլուխը թոցուց երբ տեսաւ զաւկին չարչարանքը.
 Խելագարը արդէն գլուխը թոցուցած էր.
 Խեղճ մարդուն գլուխը ող-ողջ թաղեցին.
 Գիտեմ թէ ուր թաղուած է շան գլուխը.
 Թուրքի գլուխս է, մի զարմանար.
 Գէորգը ընկերները գլուխը ժողուած տարեդարձ կը տօնէ.
 Տղա՛ս, գլուխդ իջեցուր որ յարգուիս.
 Այսօր յոգնած եմ, գլուխս իմս չէ.
 Մեծագլուխին գլուխը աղբով լեցուն է.
 Անուս տղան դպրոց գնաց, գլուխը լեցուեցաւ.
 Հայ զինուորը թշնամիին գլխուն մէջ կապար լեցուց.
 Գլուխս լեցուեցաւ կարեւոր անկարեւոր լուրերով.
 Գլուխդ անիմաստ եւ անկարեւոր բաներով մի լեցներ.
 Այնքան գլուխս լեցուցիր, որ վերջապէս ակամայ համոզուեցայ.
 Տղուս գլուխը լաւ մը լուացի, որպէսզի զգաստանայ.
 Ամէն մէկ գլխէն բան մը կը լսեմ.
 Նախարարները վարչապետին գլխուն խաղ մը խաղացին.
 Ռուսերը կրնան մեծ խաղեր խաղալ Հայաստանի գլխուն.
 Աշակերտները հետաքրքրական խաղ մը խաղացին ուսուցիչին գլխուն.
 Դասարանին մէջ միքանի աշակերտներ մէկ գլուխ կը խօսին.
 Հայր ու զաւակ գլուխ գլխի նստած կը խօսին.

Անապատին մէջ գաղթականներուն գլուխները խաշեցան.
 Զոհրապը գլուխը ամէն տեղ կը խոթէր, որպէսզի տեղեկութիւններ հաւաքէր.
 Գլուխը խելք կա՞յ որ իրեն մտիկ ընէմ.
 Որո՞ւ գլուխը խելք փսաց.
 Խելքը գլուխը մարդ է Մասիսը.
 Կնիկը գլուխը ծեծեց երբ իմացաւ գաւկին աւազակութիւնը.
 Ազատ մարդ գլուխը չի ծռեր բռնատէրերու առջեւ.
 Պաշտօնեան գործատիրոջ առջեւ գլուխը ծռեց.
 Այսօր լաւ չեմ զգար, գլուխս ծանր է.
 Գլուխս ծանր է, դաս չեմ կրնար սորվիլ.
 Համբարձումը գլուխը ծանր մարդ է.
 Տղա՛ս, գլուխդ ամուսնական հարցերով մի՛ ծանրաբեռներ, Ատուած մեծ է....
 Արարատ լեռան գլուխը նոյնիսկ ամառ եղանակին ձիւնով ծածկուած է.
 Գլուխը ծածկեց, պոչը երեւում է.
 Մարտիրոսին գլուխը ծակ է, չի հասկնար.
 Անոր ծանր խօսքերը գլուխս ծակեց.
 Գլուխս կերաւ, հոգիս հանեց, մոռցուց ինձի.
 Ոճրագործները մեծահարուստ Կարօյին գլուխը կերան.
 Սիրունը ամուսինին գլուխը կերաւ մինչեւ որ ուզածը իրականացուց.
 Գործաւորները վարպետին գլուխը կերան եւ յաւելում ստացան.
 Թուրքերը ցեղասպանութեան ընթացքին շատ մը հայերու գլուխը կերան.
 Աշակերտները ուսուցիչին գլուխը կերան, որպէսզի քննութեան
 չմասնակցին.
 Թոռնիկս գլուխս կերաւ մինչեւ որ այդ ըսի իր ուզածներուն.
 Թուրքերը հօրս գլուխը կերան ցեղասպանութեան ընթացքին.
 Գազիկը հօրը գլուխը կերաւ, շարունակ դրամ կ'ուզէր.

Գիրքին առաջին գլուխէն յօդուած մը կարդացի.
Պարոն տնօրէնը աշակերտներուն գլխուն աւետարան կարդաց.
Յակոբը գիրքս գլխէ-գլուխ կարդաց.
Տերտէրը գայլին գլխուն աւետարան կը կարդար.
Գայլին գլուխը աւետարան կարդալ.
Զօրավարը գլուխը կախ կը լսէր մարտիկներուն գանգատները եւ կը տխրէր.
Մեծաւորին գլուխը կուտ չկայ, անիմաստ է զինք մտիկ ընել.
Անխելքին գլուխը կուտ կորկոտ չկայ.
Մայրս գլուխս կեցած արգելք կ'ըլլայ գործերուս.
Քննութեան ընթացքին հսկիչը աշակերտին գլխուն կեցաւ.
Գործին գլուխը կեցայ մինչեւ իրիկուն, չվստահեցայ գործաւորներուն գլուխին.
Շատ յոգնած էի, գլուխս կոսնցուցած էի, չկարողացայ հետեւիլ դասախօսութեան.
Գլուխս կը կոտրեմ տատի՛կ, քու խաթերդ չեմ կոտրեր.
Հայ ժողովուրդին գլխուն ամպեր կուտակուած են.
Գեղադէմ տղուն գլուխը կապեցին տգեղ աղջիկ մը.
Խենդ աղջիկը Հրաչին գլուխը կապեցին.
Ճամբան կորսնցուցի, գլուխս իմս չէր.
Տասը ժամ կարդալէ ետք տղան գլուխը կորսնցուց.
Հանցաւոր Կիկօն գլուխը կախ մեկնեցաւ.
Տղուն գլուխը կուտ չկայ.
Կիրակոսը շատ գլուխ կոտրեց, բայց բան դուրս չեկաւ.
Գլուխս կոտրեն, խնդրանքդ չեմ կոտրեր.
Հայրս մսավաճառին գլխուն կը կանգնի միս գնած ժամանակ.
Կիրակոսին ընտանիքը կազմուած է հինգ գլուխէ.
Սեդան բոլոր դրացիները գլխուն հաւաքեց.
Ձուկը գլխէն հոտած է.

Ապահով տեղ մը գտնեմ եւ հոն գլուխս հանգստացնեմ.
 Կարողացայ այս դժուար գործը գլուխս հանել.
 Հայրս այս դժուար գործը գլուխս հանեց.
 Վարդգէս կրնայ գլուխս հանել այս գործը.
 Այդ գաղափարը գլխէդ հանէ.
 Չար տղաք բարի ընկերները գլխէ հանեցին.
 Այս դժուար գործը գլուխս հանեցի.
 Վստահ եմ մեր Տարօնը գլուխս կը հանէ այս գործը.
 Շնչահեղձութիւնդ գլխէդ հանէ, դուն երկաթի նման առողջութիւն ունիս.
 Օտար աղջիկները մեր տղոց շուտով գլխէ կը հանեն.
 Այս յառաջացած տարիքին ծերուկը կը փորձէ գլխէ հանել կնիկը.
 Դատարկ գլուխով մարդիկ շատ ձայն կը հանեն.
 Գլխէս հեռացուցի այդ առասպելը.
 Կիրակոսը իր շահուն համար անվարան սահեցուց իր աներ ոտքը եւ չարիքներ
 հիւսեց անոր գլխուն.
 Հայրս գլուխը կը հաւաքէր դրացիները եւ անոնց հետ կը վիճէր, անոնց գլխուն
 ճառ կը կարդար.
 Սմբատը հին գլուխ է, բայց խելացի է.
 Գլուխս քեզի կը ձգեմ ճամբորդելէս առաջ.
 Գլուխս ճաթեցաւ այդ դասախօսութեան ընթացքին.
 Անօթի գիւղացին գլխուն ճարը փնտռելու քաղաք գնաց.
 Կարելի չէ ճզմել Պաղեստինցիներուն գլուխը.
 Չըրչըլ մեծ գլուխ էր.
 Կարօն մեծ գլուխ մըն է մեր կեդրոնէն ներս.
 Վերջապէս տղուն գլխուն մտաւ որ հայրը ի նպաստ իրեն կը խօսէր.
 Ըսածներս գլուխդ մտա՞ն.

Մարգիսին գլուխը մտցուցի, որ ես իր դեմ չեմ.
Գլխուն մոխիր է մաղուած.
Մէկ գլուխ կասկածներով հետեւեցայ Թրամբի յայտարարութիւններուն.
Հարս ու փեսին գլուխը մէկ է.
Խելք գլուխ չմսաց, որ օրինաւոր կերպով գործերուս նայիմ.
Ձեր գլուխը ողջ մսայ.
Փարամագին գլուխը այնչափ մեծցած էր, որ ինք նոյիսկ չհաւատաց.
Գլխէդ մեծ գործեր մի՛ բռներ, կարողութիւն չունիս.
Տկարամիտին գլխուն մէջ բան չի մտներ.
Գլուխդ ողջ մսայ սիրելի Վահագն.
Գլուխ չմսաց որ կարենամ հետեւիլ յայտարարութիւններուն.
Մարդ գլուխ մէկ տոպրակ շաքար բաժնեցին.
Բռնակալները միշտ ժողովուրդին գլխուն նստած են.
Աստիճանին գլուխը նստած էր մայրիկս, գլուխը կախ կ'երեւակայէր.
Քանի էլիզապէթը երգչախումբին գլուխը նստած է, երգահանդէսը
յաջող կ'անցնի.
Բարեկամը գլխուն կը նայի, թշնամին ոտքին.
Հրդեհի մը պարագային ամէն մարդ իր գլխու ճարին նայելու է.
Այս տարիքիս տակաւին գլուխ ունիմ թոռնիկներուս հետ խաղալու.
Հայ մարտիկը գլուխը ողջ-ողջ տուն վերադարձաւ.
Սմիատը մշակոյթի գլուխ չունի, մարզիկ է.
Գլուխ չունիմ անոր մտիկ ընելու.
Տնօրէնը գլուխ չունի որ ղեկավարէ դպրոցը.
Բանախօսը գլուխս ուռեցուց իր երկար ճառով.
Կարպիսին ընկերները անոր գլուխը ուռեցուցին, որպէսզի օգտուին անկէ:
Անմիտին գլուխը շատ ուռեցուցին, ի վերջոյ պայթեցաւ.

Այնքան խօսեցան որ գլուխս ուռեցաւ, պայթեցաւ.
 Գլուխ ունիմ եւ կրնամ դիմանալ երկար խօսելու.
 Գլուխ չունիմ ուսուցիչը մտիկ ընելու.
 Բարեկամներս գլխուս վրայ տեղ ունին.
 Քանի՞ գլուխ ոչխար ունի գիւղացին.
 Ան գլուխ ունի, քեզի նման տխմար չէ.
 Ո՞վ գլուխ ունի անոր հետ վիճելու.
 Հրայրը գլուխ չունէր իր կնկան մտիկ ընելու.
 Սիրելի բարեկա՛մ, գլխուս վրայ տեղ ունիս.
 Ամբոխը բազմաթիւ գլուխներ ունի, բայց ոչ մէկ ուղեղ.
 Երիտասարդը այս դարուս կ'ուզէ ապրիլ ինքնագլուխ, առանց գլխուն
 վերեւ ունենալու հեղինակաւոր ծնողք մը.
 Ատենապետը սեղանին գլուխը նստիլ ուզեց.
 Կինս երկու գլուխ սխտոր ուզեց.
 Չոր գլուխ մարդոց հետ աշխատիլը բաւական դժուար է.
 Համբիկին գլուխը չոր է.
 Սեղրակ մօրը մահուան առթիւ չորս գլուխ ոչխար մատաղ ըրաւ.
 Կիրակոսին գլուխը պինդ է.
 Մայրս գլխուս պահապան եղաւ.
 Լիբանանցիներուն գլխուն պայթեցաւ Սուրիացի գաղթականներուն հարցը.
 Յեղասպանութիւնը Հայ ժողովուրդին գլուխը պայթեցաւ.
 Ան գլուխս պայթեցնելու աստիճան պոռաց.
 Հրթիռին գլուխը պայթեցաւ ճամբայ ելլելէ մէկ վայրկեան վերջ.
 Եթէ ամէն օր ութը ժամ չքնանամ, գլուխս պիտի պայթի կը կարծեմ.
 Գլուխդ այս փորձանքներէն հեռու պահէ, տղա՛ս.
 Ալքովը Սերոբին գլուխը տաք կը պահէ.

Գլուխդ տաք պահէ, տղա՛ս.

Գլուխդ պաղ պահէ եւ ոտքերդ՝ տաք.

Տիգրանը խոնարհ է, բայց գլուխը բարձր կը պահէ.

Ջղայնութեան պարագային գլուխդ զով պահէ.

Տղա՛ս, գլուխդ բարձր պահէ, եղիր ինքնավստահ եւ մաքուր.

Պատերազմի ընթացքին փորձեցինք մեր գլուխները ապահով տեղ մը պահել.

Իր արժանապատուութիւնը գլխուս վրայ բարձր կը պահեմ, քանի ան
իմ կինս է, ըսաւ Տիգրան.

Արարատ լեռան գլուխը եռագոյն դրօշակ պարզեցին սկաուտները.

Գէորգը գլուխը պատռեց մինչեւ որ գործ մը գտաւ.

Գլուխ մը որքան պարապ ըլլայ , այնքան աւելի կը ջանայ պարպուիլ.

Յարութին գլխուն մէջ կը պտտէր մութ խորհրդածութիւններ.

Մեսրո՛պ, ըսածդ գլխուս պառկեցաւ.

Դրացիս գլխուս թակարդ կը սարքէ, լաւ դրացի չէ.

Լուսածինը ամուսնոյն գլխուն մեծ խաղեր սարքած է.

Մեծ գործերը յաջողցնելու համար երեք բան պէտք է, սառ գլուխ, կրակէ սիրտ մը եւ
երկաթէ բազուկ մը.

Խելացի Գառնիկը գիշեր-ցերեկ գլուխը կը սղոցէ, շատ աշխատասէր է.

Սոխի՛ գլուխ, ի՞նչ նստած ես, ելի՛ր աշխատէ՛, ըսաւ վարպետը գործաւորին.

Տխմա՛ր, սոխի գլու՞խ ես, ի՞նչ ես.

Երիտասարդները գլուխ վերցուցին նոր օրէնքներուն դիմաց, ըմբոստացան,
ընդդիմացան.

Լիբանանի պատերազմին մեր գլուխը վտանգուած էր.

Վայ եկեր է գլխուս, եթէ ես ըլլայի այդ կատակը ընողը.

Օննի՛կ, քանի գլուխդ վրադ է, ստեղծագործէ՛.

Հօրեքայրս մեծ տեղ ունի իմ գլխուս վրայ.

Հայրի՛կ, անպակաս ըլլաս մեր գլխուն վրայ.
 Գլխուս վրայ սիրելի՛ս, վաղը կ'այցելեմ ձեզի.
 Գլխուս վրայ, հիմա կ'երթամ դեղարան.
 Գլուխէդ վեր գործի մի՛ դիմեր.
 Գլխէս վեր բաներով չեմ զբաղիր.
 Լեզուդ եթէ չըլլայ, գլուխդ ագռաւները կը տանին.
 Անոր ըսածները գլխուս մէջ չէին տեղաւորուիր.
 Գլխով հաւանութիւն տալու տեղ բերանացի հաւանութիւնը աւելի ընդունելի է.
 Հօրս ճերմակ գլուխը շատ բան տեսած է, փորձառու մարդ է.
 Հօրս ճերմակ գլուխը շատ բաներ տեսած է.
 Զարեհին շարոյրին (pancreas) գլխուն մէջ խլիրդի նշաններ տեսնուած են.
 Հայ ժողովուրդին գլխուն շատ փորձանքներ տեղացին վերջին հարիւր տարիներուն.
 Դասախօսութենէս ետք, գովասանքներ տեղացին գլխուս վրայ.
 Կ'աղաչեմ հօրեղբայ՛ր, դուն եղիր մեր գլխուն տէրը.
 Ես իմ գլխուս տէրն եմ, ոչ ոք թող գործիս խառնուի.
 Երբ տէրտէրին գլուխը տաքնայ բերանը կը բացուի.
 Ան գլուխը տաքցած կը հակաճառէր.
 Ան գլուխս տաքաւ-ուռեցուց.
 Վիճաբանութեան պատճառով Վազգէնին գլուխը տաքցաւ եւ հեռացաւ.
 Գլուխը տաք է, կարելի չէ հետը խօսիլ.
 Լեւոնին գլուխը տաքցաւ եւ երգելու սկսաւ.
 Գլուխը տաքնալով սխալ բաներ խօսեցաւ դամատանը.
 Տղան շատ խմած էր, գլուխը տաք աւելի-պակաս կը խօսէր.
 Յակոբը տաքցած գլուխով բոլորին կը վիրաւորէր.
 Երգահանդէսին գլուխ տուի բոլոր երգողներուն.

Երիտասարդներուն գլուխները տաքնալէ ետք, յեղափոխական երգերը
պայթեցուցին շատերուն գլուխները.

Գլուխդ տուր, գաղտնիքդ մի՛ տար.

Կ'ուզես՝ քարը գլխիդ տուր, բայց գործը գլուխ բեր.

Բարեկամս քալած ժամանակ գլուխ տուաւ ինծի.

Ճագարդի երաժշտութիւնը գլուխս կը տանի, չեմ դիմանար.

Գլուխ մի՛ տանիր եւ գործիդ նայէ.

Դասախօսը ժողովուրդին գլուխը տարաւ.

Տղան հօրը գլուխը տարաւ որպէսզի պարահանդէսի երթայ.

Տափակ գլուխ կիրակոսը մարդ չի հաւնիր.

Քանի կենդանի եմ գլուխս տեղն է.

Գլխուդ փափախը ոտքի տակ մի տար, ըսաւ կինը իր ամուսինին.

Գլխուդ ճարը տես՝, դուն քեզի աղիկցնելու նայիր.

Այդ բանին մի՛ խառնուիր, ետքը գլուխդ կը ցաւի.

Գլուխդ մի՛ ցաւցներ, ես անպայման պիտի երթամ պարահանդէսի
ըսաւ տղան իր մօրը.

Այս օտարականը գլխուս ցաւ դարձաւ.

Այս սպասուհին մեր գլխուն փորձանք եղաւ.

Ամիրտովլաթ Ամասիացի եղած է հանճարեղ եւ փառաւոր գլուխ մը:

Լեւոնին արծաթ գլուխը (ճաղատ) արեւուն տակ կը փայլէր.

Օտար ընկերութիւններ իրենց սափրիչութիւնը Հայաստանի գլխուն
պիտի փորձեն.

Բժիշկ ընկերներս բժկական յօդուածներ գրելու պարտականութիւնը գլխուս
փաթեցին.

Տգեղ տղան գեղեցիկ աղջկան գլուխը փաթեցին.

Ան գլուխը փրկեց Սուրիոյ պայթումներէն.

Տէր հօր գլուխը փչեց եւ եկեղեցին գոցեց.
 Ալքովամովը լման գաւաթ մը օղին գլուխը քաշեց.
 Սարգիս չէր ամուսնացած, ինք կը քաշէր իր գլխուն հոգը.
 Թաթուլը ամբողջ լեցուն գաւաթը գլուխը քաշեց.
 Գլուխս քերելու ժամաակ չունիմ, անօթի կը մսամ.
 Կ'ուզեմ իմ հարցերս իմ սեփական գլխով քննել եւ լուծել.
 Ի՞նչ ղեկավարութիւն, քառակուսի գլուխ մարդիկ.
 Օձին գլուխը մեր մէջ կը գտնուի.
 Երկու եղբօր գլուխ մէկ գերեզման չի մտներ.
 Վագոդ ձիու գլխին չեն զարներ.
 Գլուխդ պաղ, փորդ թոյլ, ոտքդ տաք պահեցիր, հէքիմ եղար, գացիր.
 Լաւ է ճանճի գլուխ եղիր, քան առիւծի պոչ.
 Ամէն մարդ իր գլխի տէրն է.
 Շատախօսի գլուխը ծակ է.
 Ձուկը գլխէն պիտի բռնես, որ չփախչի.
 Անհնազանդ տղան գլուխը առաւ եւ գնաց.
 Օձի գլուխը պզտիկուց պիտի ջարդես.
 Գլուխը կտրեցիր, մօրութիւն վրա՞յ կու լաս.
 Այսպէս գլխուն այսպէս գլխարկ.
 Ձուկը գլխէն կը հոտի, ջուրը ակէն կը պղտորի.
 Մարդը գլուխը թոցուց.
 Զոքաչս գլխուս վրայ տեղ ունի.

«Դէմք» բառին գործածութիւնը մեր լեզուի դարձուածքներուն, առածներուն եւ ասացուածքներուն մէջ

Առաջին դէմք՝ ես, մենք, Երկրորդ դէմք՝ դուն, դուք, Երրորդ դէմք՝ ան, անոնք.

Կինը մաղձ կը թափէր իր դէմքէն առանձնութեան մէջ.

Պարոն նախարարարը անշուք դէմք մըն է.

Սիրելի երկու դէմքեր առյաւէտ բաժնուեցան մեզմէ.

Դէմքդ բա՛ց եւ խօսի՛ր.

Արտաքին դէմքով ան բարեկամ կը ձեւացնէր ինքզինք, իսկ ներքնապէս
թշնամի էր.

Մարկոյին դէմքի գոյնը տեղը եկաւ, աշխուժացաւ երբ տեսաւ ծնողքը.

Ան անմոռանալի դէմք մը դարձաւ.

Երկու դէմքով մարդէ զգուշանալու ենք.

Խաչատուրը դէմք դարձուց եւ թթուած գնաց.

Քաջ Վարդան պատմական դէմք մը եղաւ.

Մանուշակը ուրախ գուարթ դէմք ունի.

Կիրակոսին դէմքը այսօր թթուած է.

Գեորգին դէմքը կը խօսի.

Խոժոր, տխուր, խորշումած դէմք.

Կան մարդիկ որոնք կատուի դէմք ունին.

Անոր դէմքին վրայ կը կարդացուէր իր զգացումները.

Ես անոր դէմքը կարդացի, բան մը ունէր ըսելիք.

Դէմքին վրայ կարելի է կարդալ իր ներքին մտորումները.

Չար մարդուն դէմքէն մաղձ կը կաթէր.

Դէմքը մարդու մը նկարագրին հայելին է.

Մարդուս դէմքը իր հոգիին հայելին է.

Նոր հայազգի դէմք մը ի յայտ եկած է Գանատայի խորհրդարանին մէջ.

Մեռելանման դէմք ուներ տղան.

Դանիէլ Վարուժան մեր գրական աշխարհի մեծ դէմքերէն մէկն է.

Թշնամիին դէմքը յայտնուեցաւ.

Շատերուն դէմքը յաճախ յուսախաբ կ'ընէ դիմացինը.

Ուսուցիչը զանազան դէմքեր նկարագրեց աշակերտներուն.

Տխուր ժպիտ մը ուրուագծուեցաւ երկչոտ աղջկան դէմքին վրայ.

Աւելի լաւ է տգեղ դէմք ունենալ, քան տգեղ միտք մը.

Դէմքդ միշտ ժպտուն պահէ, սակայն կարելոր հարցերու առջեւ լրջացիր.

Եկեղեցիին դէմքը պղտորած է.

Կեդրոնին դէմքը գաղութին պատկերն է.

Պառաւր ցոյց տուաւ իր դէմքը, մատնած էր իր դրացին.

Արժանաւոր մարդու դէմքը մութին մէջ ալ կը փայլի.

Վայ այն ազգին որ իր դէմքը կը կորսնցնէ եւ կ'աղաւաղէ իր հոգին (Կոստան Զարեան)

«Եղունգ» բառին գործածությունը մեր լեզուի
դարձուածքներուն, առածներուն եւ ասացուածքներուն մէջ

Ինչո՞ւ կը բամբասես, դուն անոր եղունգին անգամ չես արժեր.

Սիրելիս այդ սրիկան Չաքարին մէկ եղունգն իսկ չարժեր.

Եղունգը միսէն չի զատուիր, չորսն ալ իմ թոռնիկներս են.

Տիկին Սիրանուշը եղունգ-եղունգ ընելով ճակատաբաց կ'ապրեցնէ իր հինգ անհայր
զաւակները.

Եղունգ մը հաց տո՛ւր, մայրիկ.

Եղունգ ունիս կռուի եկուր.

Եղունգ ունիս՝ գլուխդ քերէ.

Թուրքերը եւ հրեաները եղունգ ու միս են.

Հարս ու կեսուր եղունգ ու միս եղան.

Սարգիս եւ Մարտիրոս կը ձեւացնեն որ իրարմէ նեղացած են, իրականութիւնը
սակայն այդպէս չէ, անոնք եղունգ ու միս են իրարու հետ.

Ուրախութենէն մազը կ'երկարի, տարտէն՝ եղունգը.

«Երես» բառին գործածությունը մեր լեզուի
դարձուածքներուն, առածներուն եւ ասացուածքներուն մէջ

Յակոբը աներես մարդ է.

Երեսդ է արեւ, ճակատդ է զօհրան (Յ. Թլկուրացի)

Աշակերտները երես առնելով հանդուգն դարձած էին.

Երեխային շատ որ գովես երես կ'առնէ.

Մեր երեսը կ'արտայայտէ մեր ինքնությունը.

Հայրդ հոս չէ, երե՞ս առիր տղաս.

Բարձի երեսը աղտոտած է, պէտք է փոխել.

Աշխարհի երեսին ինձ համար օթեւան չկայ.

Ան աներես մարդ է.

Անուշապուրին երեսը շաքարի պղպջակներ յայտնուեցան.

Տղուն շորին երեսը բրդից է, աստառը բամբակից.

Միեր երեսը բաց կը խօսէր ընդհանուր ժողովին, իսկ ժողովականներուն

մեծամասնությունը երեսնին թթուեցնելով մտիկ կ'ընէին.

Սարօն երեսը բաց մարդ է, համարձակօրէն կը խօսի.

Ան նախկին ամչկոտը չէ, երեսը բացուած է.

Ան ուրիշներու համար կը խնդրէր, բայց իրեն համար երեսը չէր բռներ.

Անփափկանկատ դրացիս երես կը բռնէ, որ մեր տուն չգայ.

Երեսս ամուր բռնեցի եւ խայտարակեցի ստախօսը.

Երեսս չի բռներ, որ իրականությունը խօսիմ.

Տղան երեսը գետին քսելով տուն դարձաւ.

Խրախճանքի ընթացքին տղան այնքան խմած էր, որ երեսին վրայ գոյն

չէր մնացած.

Շատ երես գցեց, ես էլ տուի.
 Եփրատ գիտին երեսը ծածկուած էր հայու դիակներով.
 Գողին երեսին գոյնը ի յայտ եղաւ.
 Յասմիկը երեսը դարձուց, երբ կեսուրը տեսաւ.
 Աղքատ մարդուն բարեկաճները երես դարձուցին.
 Սարգիսը ծայրայեղ դրութեան մէջ էր, ընկերները երես դարձուցած էին իրմէ.
 Կարելի չէ հայրենիքէն երես դարձնել.
 Ան կարող է մերժել, բայց դուն երես դիր.
 Ուրախ գուարթ երեսով մեզի դիմաւորեցին.
 Ծովի մէջ ալ նետես երես կ'ելլէ.
 Ան փորձուած մարդ է, ինչ փորձանքներու ալ իյնայ միշտ երես կ'ելլէ:
 Այս ընտրութեան սեւ երես ելանք.
 Երկու երեսով գործելը լաւ չէ.
 Երես երեսի խօսեցան հակառակորդները.
 Ապուրին երեսը չէ եռացած, ուշադիր եղի՛ր.
 Անոր երեսին ըսի՝ լաւ չես աշխատիր, ծո՛յլ ես.
 Ընտրութենէն ետք ան ջուրի երես ելաւ.
 Ի՞նչ երեսով քովս եկար, տղա՛ս.
 Խաչիկը երկու երես ունի, պետական եւ անձնական.
 Աւելի լաւ է երկու կգակով բարեկամ ունենալը քան թէ երկու երեսով.
 Այս գիրքին երկու երեսները բացատրական են.
 Հարս ու կեսուր երես-երեսի եկան.
 Տիրանը յանցանքը ուրացաւ, երբ որ երես երեսի բերի.
 Ինչ դժուարութիւններու մէջ ալ իյնայ, ան իր փորձառութեամբ երես կ'ելլէ.
 Այս բարոյական խայտառակութենէն ետք աղջիկը ի՞նչ երեսով հօրը քով պիտի
 երթայ.

Երեսին ձուածեղ եփես՝ չ'ուտուիր:
 Երբ երեսիդ չեն ըսեր, կը խորհիս թէ չեն գիտեր.
 Անոր երեսին ըսի, դուն գող աւագակ ես.
 Եթէ բան ունիս երեսիս ըսէ, մի՛ ամչնար.
 Նրա երեսից ընկածը քառասուն կտոր կը լինի.
 Հարսը երեսը թթուեցուց երբ աները տեսաւ.
 Շատ երես թափեցի մինչեւ որ կարողացայ ուզածս ստանալ.
 Տղան՝ ամօթէ պատկառանքէ զուրկ է, երեսին թքես կ'ըսէ՝ անձրեւ կու գայ.
 Մեր նախարարները երեսէ ինկան.
 Ան ամենքի երեսէն ինկած է, ալ պատիւ չունի.
 Երեսէն ինկած ճանճը՝ քառասուն կտոր կ'ըլլայ.
 Այս վերարկուի աստառը երեսից լաւ է.
 Սեւանայ լիճին երեսը շատ մաքուր է.
 Ձմեռ էր, լերան երեսը ծածկուած էր կէս մեթր ձիւնով.
 Երեսդ խաչ հանէ, համբերատար եղիր.
 Աշակերտները եկեղեցի մտնելով երկիւղածութեամբ երեսնին խաչ հանեցին.
 Երեսդ խաչ հանէ եկեղեցի մտնելու ժամանակ.
 Մօրս երեսը բնաւ չխնդաց հօրս մահէն ետք.
 Աղէկ օրիդ երեսդ խնդացողներ շատ կ'ըլլան.
 Ծովուն երեսը կը ծփային ծով թափուած աղտոտութիւններ.
 Մէկ երեսը ծիծաղ միւս երեսը լաց.
 Երեսը ծռեց ու նստաւ-հեռացաւ.
 Պաշտօնեան երեսը ծռելով մօտեցաւ մեծաւորին.
 Աշակերտները իրենց երեսը ծռեցին երբ տեսան երեսը կախ տնօրէնը.
 Անոր երեսը կաշի է.
 Երեսէս կորսուի՛ր, աւագա կ.

Երեսը ո՛չ կու լայ, ո՛չ կը խնդայ.
Աներեսին երեսը գոմէշի կաշիէ շինուած է, դուրս կը վռնտես ետ կը մտնէ.
Համբիկը համբերութեան երեսէն կորսնցուց ամէն բան.
Այս կնկան երեսը կարմիր է, տակը սեւ.
Եռացած կաթին երեսը իւղոտ է.
Լերան աջ երեսը կանաչ է.
Յակոբը երեսը կակուղ մարդ է.
Այս հարսին երեսը միշտ կախ է.
Տկար մարդուն երեսը կախ է.
Երես մի կախեր ինծի, ըսաւ հայրը իր տղուն.
Մանչուկը երեսը կախեց երբ նուէր չստացաւ.
Շքանշանի երեսի կողմը ոսկիով պատուած է.
Նոր հացին երեսը կարագ կը հոտի.
Յակոբին երեսը կակուղ է, չի կրնար մարդոցմէ բան ուզել.
Երեսէն հայելի, տակէն ածելի.
Սարգիսին ազնուութիւնը երեսէն կը հոսի.
Տանտիկինը երես ճերմկցուց հիւրերուն մօտ.
Միշտ այսպէս երեսդ ճերմակ փայ.
Ամէն գործի մէջ Կիրակոսը ճերմակ երեսով դուրս կու գայ.
Երեսփոխանները ճերմակ երեսով դուրս եկան խորհրդարանէն.
Երգչախումբը խմբավարին երեսը ճերմկցուց.
Հայկական բանակը երեսը ճերմակ դուրս եկաւ պատերազմէն.
Հօրս ձին մրցանակը շահեցաւ, հօրս երեսը ճերմկցուց.
Ան երեսով մարդ է, համարձակ կը խօսի.
Մանուկին երեսէն միւռոն կը կաթի.
Խաբեբային երեսը միւռոն չկայ.

Մայրս նոր գնուած ոսպը լուաց, երեսը փաց մանր մունր կտորներ.

Մայրս մէկ երես լուացք ըրաւ.

Տղուն երեսը մաքուր է, համարձակ կը նայէր բոլորին.

Վերջապէս քահանան պոռթկաց անառակ տղուն՝ ո՛չ ամոթ ունիս, ո՛չ ալ
երեսիդ միւռոն փացած է.

Դրամ չունենաս՝ մարդ երեսիդ չի նայիր.

Դուն անոնց երեսին մի նայիր, անոնք մեր ոխերիմ թշնամիներն են.

Եղբայրս առանձնութեան երեսը շտկեց, երբ լսեց աղջիկներուն այցելութիւնը.

Տղան քաղաք երթալէ ետք երեսի շնորհքը վերացած է.

Անբարոյ կիներու երեսը ո՞վ կը նայի.

Երես ունենար հետս կը խօսէր.

Երես ունի՞ս որ կը խօսիս.

Հարսը երես չունի որ խօսի.

Ան շունի երես ունի, դուռէն դուրս հանես երդիքէն կը մտնէ.

Ալ չկարողացայ համբերել, երեսս պատռեցի ինչ որ սրտիս մէջ կար ըսի.

Երեսը պատռած աղջիկներ շատ կան այս օրերուն.

Ան երեսը պատռեց եւ անվախ խօսեցաւ.

Երեսդ է պայծառ.

Դպրոցին մէջ պինդ երես տղաք կան.

Երեխաները ջուրին երեսը կը ծփան.

Սօսէին երեսը բնաւ ջուր չկայ.

Երեսդ վարդի ջուր, սիրելիս.

Ան երեսը պատռած մարդ է, ամէն տեղ կը մտնէ.

Ան երեսը պատռեց եւ եկաւ, որպէսզի երեսը սեւ չհանէ մարդոց առջեւ.

Աւագակը երեսը պահեց ու անհետացաւ.

Երկար համբերելէ ետք, երեսս պատռեցի, ինչ որ սրտիս մէջ կար ըսի.

Ան երեսը պինդ մարդ է, դժուար է անկէ ազատուիլ.
Պարտականի երեսը սեւ կ'ըլլայ, իսկ լեզուն կարճ.
Չար տղան հօրը երեսը սեւցուց.
Ընփոստները Սուրիոյ երեսը սեւցուցին.
Կաթը եռացնելով երեսը սեր կը կապէ.
Երեսդ վարդի ջուր, աղջիկ՝ ս, ըսաւ մայրը երբ տեսաւ անոր առողջ երեսը.
Սիրուն երեսի վրայ, փիլաւ չե՛ս եփի.
Գործընկերս խանութը երեսի վրայ ձգեց ու հեռացաւ.
Խաչիկին մահէն ետք, իր հողը եւ տունը երեսի վրայ ձգուած էր.
Անոր գործը երեսի վրայ փաց, ընտանիքէն ոչ մէկը չհետաքրքրուեցաւ.
Անոր երեսին վրայ խօսք կայ.
Երեսի վրայ փաց խեղճ մայրը տղուն երթալէն ետք.
Ատենապետը երեսի վրայ ձգեց իր պարտականութիւնները.
Ալքուլամովը իր կինը երեսի վրայ ձգեց.
Գործաւորը աշխատանքը երեսի վրայ ձգեր գացած է.
Հայոց ցեղասպանութեան ընթացքին շատ մը որբանոցներ երեսի վրայ փացին.
Արամին ազնուութիւնը երեսէն կը վազէ.
Բարի մարդուն ազնուութիւնը երեսէն կը վազէ.
Ուշադիր եղիր, մանչուկիդ երես շատ չտաս.
Երես տուինք, աստառ ալ կ'ուզէ.
Երեսով նշան տուաւ.
Աւելի լաւ է մուճակին երեսը տեսնել, քան յատակը.
Աթոռներուն երեսները փոխել տուի.
Լեւոնը իր միամիտ երեսը ցոյց տուաւ մեր հանդիպումին.
Փեսային երեսէն այս օրերուն հասաւ խեղճ կինը.
Մեր նախագահը երեսը փափուկ մարդ է.

Բարի մարդուն երեսը փայլուն է.
Անոր երեսը փափուկ է, չի կրնար խնդրել.
Վերմակին եւ բարձին երեսները յաճախ փոխէ.
Մարդուն իմաստութիւնը անոր երեսը կը փայլեցնէ.
Տղաս մեր երեսին մուր քսեց.
Վարդանը երեսի քօղը պատռած է, աներեսին մէկը դարձած է.
Երեսից քահանայ, տակից սատանայ.
Որբի երեսը պինդ կ'ըլլայ.
Երեսը սրտին հայելին է.
Աղքատին երեսը նայող չկայ.
Երեսի համեմատ ապտակ կը զարնեն.
Ուզողի մէկ երեսը սեւ, չտուողին՝ երկուքը.
Երես տուինք աստառ ուզեց.
Պարտատիրոջ երեսը սեւ է, լեզուն կարճ.
Երեսը թքնես, անձրեւ կու գայ, կ'ըսէ.
Փեսաս տուն եկաւ, երեսս գոյն եկաւ.
Ոչ սատանան կը տեսնեմ, ոչ ալ երեսը կը թքնեմ.
Դրացիիս երեսէն թոյն կը կաթի կոր.

«Թարթիչ» բառին գործածությունը մեր լեզուի
դարձուածքներուն, առածներուն եւ ասացուածքներուն մէջ

Սօր թարթիչներէն կախուեցան անգուսպ արցունքի երկու այրող
շիթ, երբ տեսաւ իր պանդուխտ զաւակը.

«ԹԵԼ» բառին գործածությունը մեր լեզուի
դարձուածքներուն, առածներուն եւ ասացուածքներուն մէջ

Բանակի աջ թելը շատ տկար է, թշնամին յառաջ կ'երթայ.
Ժողովուրդին աջ թելը նախագահին հետ է, իսկ ձախ թելը վարչապետին հետ.

Մանչուկը ուրախութենէն թել առաւ ու թռաւ.

Երբ եղբօրը աղաչանքը լսեց, Սարգիս թել առաւ ու թռաւ.

Ան մեր քով թող գայ մենք բաց թելերով կ'ընդունինք զինք.

Զարեհին սպաննութեամբ ընտանիքին թելերը թափեցին-կոտրեցին.

Բոլորս թել թիկունք կանգնելու ենք Արցախին.

Հայրը գանձ է, եղբայրը՝ թել-թիկունք, լաւ ընկերը երկուքն ալ.

Մեր բարեկամները թել թիկունք կայնեցան մեզի մեր դժուար օրերուն.

Թել թելի տուած ման են գալիս.

Թել թելի մտած կը յառաջանան հայ միատրները.

Թել թելի տանք այս գործը վերջացնենք.

Կարօն անօգնական էակ մըն է, ան վանդակի մէջ թելերը խուզուած
թռչունի կը նմանի.

Երաժիշտ Արեգին թելերը խուզուած են, բան չստեղծագործէր.

Ամէն մարդ կ'աշխատի, իսկ մեր տղան թելերը ծալլած երագներու
մէջ կ'ապրի.

Թելերը ծալլած նստած է ծոյլ Սարգիսը.

ՀՕՄ-ը թելեր կու տայ հայ կնոջ, որպէսզի կատարէ իր առաքելութիւնը.

Թելերս կոտրեցան, առտուընէ ի վեր կ'աշխատիմ.

Ան շատ երես առած է քիչ մը անոր թելերը կտրելու ենք.

Վարչապետին թելերը կտրած են, այլեւս ազատօրէն չի կրնար խօսիլ.

Արցախի նախագահը այցելած է հարաւային թեր.
Յակոբը մտքի երեւակայութեան թերերով մարդ է.
Ան իր թերերով նստած է մեր գլխուն.
Ուրախութիւններն մեր թերերն են, վիշտերը՝ մեր խթանները.
Իսաչը ունի չորս թերեր.
Թուրքիա իր թերերուն տակ առած է Սուրիան.
Հայրս իր թերերուն տակ առաւ մեզ բոլորս.
Ան նախագահին տղան է, թերերուն տակ այլեւս ձմերուկ չի բաւեր.
Սուրիա Թուրքիոյ թերին տակ մտած է.
Թերերուն տակ ձմերուկ չի սեղմուիր.
Թուրքիա թերերը փռած է ամբողջ Սուրիոյ վրայ.
Մարդիկ կան, որոնք իրենց թերերը քամիին տալով կ'ապրին, կը
թափառին աջ ու ձախ.
Խմբավարին թերերը օդին մէջ կը պտտէին.

«Թիկունք» բառին գործածութիւնը մեր լեզուի
դարձուածքներուն, առածներուն եւ ասացուածքներուն մէջ

Վարչապետի թիկունքին կանգնած է 10 միլիոն հայ.

Նախագահին թիկունքը լայնատարած է.

Ազրալէճան երկաթեայ թիկունքին տակ առած է Արցախը.

Արարատ լեռան թիկունքէն դուրս եկաւ արեգակը.

Պրն. Հայկը ձեռքի թիկունքով հարուածեց իր սպասաւորը.

Ամբողջ պատմութեան ընթացքին ոչ ոք հայերուն թիկունք չէ կանգնած.

Խոսքով ազատօրէն կը գործէ, որովհետեւ թիկունք ունի.

Օրհասական օրերուն հայ ժողովուրդը թիկունք պիտի կանգնի հայկական բանակին.

Ոչ Ամերիկան եւ ոչ ալ Անգլիան մեզի թեւ թիկունք պիտի կանգնին մեր հայրենիքի
սահմաններու պաշտպանութեան համար.

«Լեզու» բառին գործածությունը մեր լեզուի դարձուածքներուն, առածներուն եւ ասացուածքներուն մէջ

Լեզուդ բռնուի ապերա՛խտ տղաս.

Լեզուն կակուղ միս է, բայց ի՛նչ ժայռեր կը փշոէ:

Մարմնի փոքր անդամ նկատուած լեզուն, առանձինը 18 տարբեր տեսակի մեղքեր
կրնայ գործել.

Լեզուն թէւ փոքր անդամ է, սակայն մեծամեծ բաներով կը պարծենայ.

Խորէնին լեզուն կրակ է.

Լեզուն անիրաւութեան աշխարհ մըն է.

Թէւ լեզուն պարզ մէկ անդամ է մարմինին, բայց ամբողջ մարդը կ'ապականէ.

Ո՛չ որ կրնայ հնազանդեցնել մարդկային լեզուն, որ չար է, անզսպելի եւ մահացու
թոյնով լեցուն.

Լեզուով կ'օրհնենք մեր Տէրը եւ Հայրն Աստուածը, եւ դարձեալ անով կ'անիծենք
մարդիկը, որոնք Աստուծոյ նմանութեամբը ստեղծուած են.

«Իմաստուններուն լեզուն բժշկութիւն է» (Առակաց 12.18)

«Խաղաղասէր լեզուն կենաց ծառ է, բայց խռովարար լեզուն սիրտ կը կոտրէ»
(առակաց 15.4).

«Մահն ու կեանքը լեզուին ձեռքն են, եւ անիկա սիրողները՝ անոր պտուղը կ'ուտեն»
(Առակաց 18.21).

«Իր բերանը եւ լեզուն պահողը իր հոգին նեղութիւններէն կը պահէ» (Առակաց 21.23)

«Լեզուդ չարախօսութեան մի ծառայացներ (սաղմոս 34.12).

Մերոքին լեզուն աղտոտ է, հայհոյանքով լեցուն է.

Լեզուս այրած է այս հարցով, երկրորդ անգամ չեմ խօսիր.

Լեզուդ աշխատցուր որպէսզի չժանգոտի.

Մեր աշակերտները յաճախ իրենց լեզուին ազատութիւն տալով կը խօսին.

Ամօթ այն հայուն, որ չի յարգեր իր ալեհեր լեզուն.

Լեզուն արդար, սիրտը չար.

Երեք տարեկան տղուն լեզուն արձակուեցաւ.

Լեզուն անուշ՝ ձեռքը փուշ.

Լեզուն եւ կինը արժէք ունին միայն այն ատեն, երբ իրենց տէրն ալ արժէք ունի.

Սէրը կը խօսի անծանօթ լեզու մը, զոր տրամաբանութիւնը չի հասկնար.

Արթօն արագ-արագ կը խմէր, որպէսզի լեզուն բացուէր.

Ոգելից խմիչքները մարդոց լեզուն կը բանան.

Ամավերջի քննութեան ընթացքին աշակերտներուն լեզուն բռնուեցաւ.

Վախէս լեզուս բռնուեցաւ.

Աղջկան լեզուն բռնուեցաւ երբ տեսաւ աները.

Թուրքերը սկսան այլ լեզու բանեցնել Սուրիոյ մէջ.

Դրացիս աջ ու ձախ կը յոխորտայ, լեզուով ճնճղուկ կը բռնէ.

Ան լեզուն բանեցուց եւ իր մուրազին հասաւ.

Յանցաւորը իր լեզուն բռնեց՝ չպատասխանեց.

Դատաւորը լեզուն բացաւ եւ արդարութիւնը յայտարարեց.

Օտարականին լեզուն բացուեցաւ մեր մէջ մտնելէ երկու ժամ ետք.

Ճարպիկ տղուն լեզուն բերանն է.

Երեխային լեզուն բացուեցաւ դոնբացի օրը.

Դրացին շարունակ լեզուն կը բանայ մեր վրայ.

Հակառակորդ ընտանիքներ լեզու գտան ի վերջոյ եւ հաշտուեցան.

Աշակերտները իրենց լեզուն լաւ կը գործածեն.

Պետութիւնը լեզու գտաւ ընդդիմադիրներուն հետ.

Լեզուն գոյական անուն է, երբ լեզուն բայ կը դառնայ.

Օտար մը որ իմ լեզուս կը գործածէ, աւելի սիրելի է ինծի, քան հայրենակիցս, որ չի գիտեր իր մայրենի լեզուն.

Շատախօսին լեզուն կլոր կլոր կը դառնար.

Անգէտ մարդը ուսեալին լեզուին չի դիմանար.
 Մէկ գաւաթ խմեց լեզուն բլբուլ դարձաւ.
 Աճաքարին լեզուն բերանին մէջ լաւ կը դառնար.
 Արտեմիսին լեզուն բերանին մէջ դիւրին եւ արագ կը դառնայ.
 Լեզուդ բունը դիր, ըսաւ հայրը իր գաւկին.
 Լեզուիդ չափ ու չուան դիր.
 Շատախօսը լեզուին փականք դնելու է.
 Վարժապետին ձեռքը մաքուր է, լեզուն երկար.
 Հարսը տուն քալէ ետք լեզուն երկարեցաւ.
 Պարտքս ժամանակին չկրցայ տալ, լեզուն վրաս երկարեց.
 Մանուկը լեզուի եկաւ երկու տարեկանին.
 Ոճրագործ մարդը լեզուի եկաւ բոլոր դրացիներուն կողմէ.
 Շատախօսին լեզուն երկար է.
 Դրացին զանգակի լեզու ունի.
 Լեզուս զուսպ, գլուխս հանգիստ.
 Անձին ապահովութիւնը լեզուն զսպելուն մէջ է.
 Շատ մը մարդոց նայուածքները կ'արտայայտեն ինչ որ չ'ըսէր իրենց լեզուն.
 Այդ քու լեզուդ չըլլար, ագռաւները աչքերդ կը հանէին.
 Տիւմարներու լեզուն մտքից արագ է ընկնում.
 Լեզուին մէջ թոյն ունեցողը մեղր չի կրնար թքել.
 Դասախօսը լեզու թափեց.
 Երկու տարեկան թոռնիկս անուշ լեզու կը թափէ.
 Խաչիկին լեզուէն թոյն կը կաթի.
 Շատախօսը շատ լեզու թափեց որ համոզէ բոլորը
 Զգուշացէ՛ք այն անհատէն, որուն լեզուն թունաւոր է.
 Ուսուցիչը շատ լեզու թափեց, որպէսզի աշակերտները լաւ հասկնան.

Գործաւորը լեզուէն շատ խօսք թոցուց, վարպետը մեծ փաստ
ունեցաւ.

Լեզուին մեղըը սրտին թոյնն է.

Կիներուն սուրը իրենց լեզուն է, որ երբեք չի ժանգոտիր.

Հարսը բոլորին լեզուին ինկաւ.

Ամէն մարդ գործելու իր իւրայատուկ լեզուն ունի.

Լեզուդ չլինէր՝ ագռաւները աչքերդ հանել էին.

Մեր լեզուն լուսանցքներ ունի.

Լեզուն լազ-լազ, գլուխը ծակ-ծակ.

Լռակեաց լեզու մը շատախօս լեզուէն նախամեծար է.

Թուրք դրացիս յօնքերուն տակէն խոժոռ նայեցաւ, թունաւոր լեզուով սիրտս
խայթեց.

Մեր լեզուն մեր խիղճն է.

Երբ խենթ լեզուս անունդ տայ...

Բոնապետին լեզուին ծայրը «ագատութիւն» բառը եկաւ, սակայն չկարողացաւ ըսել.

Փողոցին անունը ի՞նչ էր, լեզուիս ծայրը եկաւ բայց.

Ծակող լեզուն սուրբը տունէն կը վանէ.

Մահուան պարագային մարդուն սիրտը կը կենայ, իսկ կնկան՝ լեզուն.

Կտրէ լեզուդ, որ չկտրես գլուխդ.

Ախորժակդ չափաւորէ եւ լեզուդ կառավարէ.

Լեզուն շատախօսին կարելորդ գէնքն է.

Լեզուն կուլ գնաց.

Ղեկավարը կակուղ լեզուով խօսեցաւ զինուորներուն.

Նոր հրատարակուած գիրքին լեզուն ծանր է.

Հարսը լեզուին կապերը արձակեց աներ դիմաց.

Աղջի՛կս լեզուիդ կապ դիր, շատ մի՛ խօսիր.

Դրացիս լեզուին կապերը քաշեց.

Դասարանին մէջ աշակերտները լեզու կտրեցին, եռանդուն եւ ազատ խօսեցան.

Դասարանին մէջ տղաք իրենց լեզուն կը կտրեն, իսկ դուրսը սոխակ կը
դառնան.

Նոր հարսը լեզուն կլլած կը նստի սենեակին մէկ անկիւնը.

Բռնապետը կաշկանդած էր ժողովուրդին լեզուն.

Հայրս խոնարհ մարդ էր, լեզուն կարճ.

Արաքսին ամուսնանալէ ետք լեզուն կապեց.

Աղջի՛կս աչքիս մէջ նայիր, լեզուդ կարէ՛ տակդ դի՛ր.

Կուսակցապետը լեզուի կապանքները խզելով գործի անցաւ.

Կօշիկիս լեզուն շակ երկար է.

Անոր ըսածները ջրեցի եւ լեզուն կապեցի, ալ չկարողացաւ բան մը ըսել..

Ռմբակոծումի ընթացքին վախի պատճառով շատերու լեզուները կապուեցան.

Դասարանին մէջ աշակերտներուն լեզուն յանկարծ կտրուեցաւ.

Հարսին լեզուն կարճցաւ.

Լեզուն կարճ հարսը սիրով ընդունուեցաւ ամուսնոյն պարագաներուն կողմէ.

Լեզուն կրնայ մեղքի աղբիւր ըլլալ.

Խորենին լեզուէն թոյն կը հոսէր, ես անոր այդպէս չէի գիտեր.

Բաբգէն հրեղէն լեզուներ տեսաւ, երազ էր.

Լեզուն այնքան հին է որքան ինքը մարդը.

Ամէն մարդու լեզուն իր հայելին է.

Համր լեզու մը ստախօս լեզուէն նախամեծար է.

Լեզուդ քու ձիդ է, եթէ զայն պահես, ան ալ քեզ կը պահէ.

Մարդուն լեզուն իր նաւուն դէկն է.

Լեզուի մեղքերն են՝ ստախօսութիւն, ամբաստանութիւն, նախատինք եւ
բամբասանք.

Երաժշտութիւնը համայն մարդկութեան մայրենի լեզուն է.
 Մենք երկու ականջ եւ մէկ լեզու ունինք, որպէսզի շատ լսենք եւ քիչ խօսինք.
 Ախորժակդ կառավարէ եւ լեզուդ չափաւորէ.
 Ձկան փուշը ներսից է, ոգնու փուշը՝ դրսից, վարդի փուշը կողքից է, մարդու
 փուշը՝ լեզուից.
 Լեզուս մեղաւոր է երբ կը մոռնամ Հայ լեզուն.
 Լեզուիդ մատաղ, քու ըսածդ թող ըլլայ.
 Կիկոսը լեզուն մաքուր չի պահեր, կը բամբասէ ու կը զրպարտէ շատերուն.
 Լեզուն նման է պզտիկ կրակէ բոցի մը, որ կրնայ մեծ անտառ մը հրդեհի տալ.
 Լեզուն նման է պզտիկ դեկի մը, որ կարող է դեկավարել մեծ նաւ մը փոթորիկին
 դիմաց.
 Դատարանին մէջ ոճրագործը լեզուն ներս քաշեց.
 Իբր թէ բարեկամ է, սակայն նենգամիտ լեզու ունի.
 Լեզու կայ տուն կը շինէ, լեզու կայ տուն կը քանդէ.
 Այնքան խմեր էր, որ լեզուն բերանին մէջ կը շաղուէր.
 Լեզու ունենար՝ կը խօսէր.
 Լեզուն ոսկոր չունի որ քիմքին խրի.
 Տիգրանը տասը տարեկան եղաւ տակաւին լեզու չունի.
 Մի մտահոգուիր, ես բերանիս մէջ լեզու ունիմ, երբ դատարան երթանք կը
 խօսիմ.
 Անասունները լեզու չունին.
 Լեզուն առանց ոսկորի է, բայց մարդուն մէջքը կը կոտրէ.
 Երանի անոնց որոնք լեզու չունին, բայց զիրար շատ լաւ կը հասկնան.
 «Լեզուի ոսկերիչներ՝ այդ սրբագրիչները, կը հալածեն մեր լեզուական սխալները».
 Լեզուն ունի երկու ճիւղ, երկու բնաւորութիւն՝ չարն ու բարին մէկ բերանի մէջ.
 Պահէ լեզուդ սրտիդ մօտիկ.

Լեզուդ քեզի պահէ՛ շատախօ՛ւ, լեզուդ շատ երկար է.
 Ա՛յ աղջիկ լեզուդ քեզի պահէ, ըսածներդ հօրդ ականջին կը հասնի.
 Լեզուն սպանիչ է, ուշադիր եղէք.
 Վարդանին լեզուն սուր է, ոմանք կը յարգեն զինք եւ ոմանք ալ կը վախնան իրմէ.
 Չարիքին առաջքը առնելու համար պէտք է լեզուն սանձել.
 Կնի՛կ, ուշադիր եղիր լեզուդ չսայթաքի.
 Աւելի լաւ ոտքդ սայթաքի, քան լեզուդ.
 Լեզուն սրտին թարգմանն է.
 Լեզուն հատու սուր մըն է.
 Մի ձգեր որ լեզուդ մտածումէդ առաջ վազէ.
 Կարոյին լեզուն կը վկայէ իր ներսը թաքնուած չար սրտին մասին.
 Չար լեզուն կը ժսասէ.
 Լեզուի վարպետ, ձեռքի՝ հիւանդ.
 Լեզուին տուած հարուածը աւելի ժսասակար է, քան նիզակինը.
 Մեր դրացիին քաղցր լեզուին տակ չար սիրտ մը կը գործէ օրն ի բուն.
 Տիկի՛ն, լեզուիդ տակը բան մը ունի՞ս, ըսէ՛ ըսելիքդ.
 Ամչկոտ տղան լեզուին տակ բան մը պահած է.
 Կարոյին խօսքը լեզուին տակ ժսաց հազիւ հայրը տեսաւ.
 Խորամանկ տղան բան մը ունէր լեզուին տակ ըսելիք.
 Իրաւ մեծը ան է, որ կրնայ տիրել իր լեզուին.
 Նենգաւոր լեզուն որոմ ցանեց մեր մէջ.
 Ձեռքէն բան չի գար, միայն իր լեզուն զինք կը փրկէ.
 Լեզուն փոքր է, բայց ընտանիքներ կը կործանէ.
 Դրամքը նախագահ ընտրուելէ ետք լեզուն փոխեց.
 Դիւանագետը լեզուն փոխեց, մարդիկ սկսան մտիկ ընել զինք.
 Փեսան խոհեմութեամբ հարսին լեզուին փականք դրաւ.

Յանցաւորը ստիպուած լեզուն ետ քաշեց.
 Անուշ լեզուն օձը ծակէն կը հանէ.
 Սարգիսը օձի լեզու ունի.
 Չար լեզուն աշխարհը կը քանդէ.
 Տղուն լեզուն մայրը կը հասկնայ.
 Անուշ լեզուն մեղրէն քաղցր է.
 Լեզուն մեղր, սիրտը լեղի.
 Եզ կայ լեզուով կ'երթայ, եզ կայ՝ մտքակով.
 Ինքը պզտիկ, լեզուն մեծ.
 Պզտիկին լեզուն կարճ է.
 Ոտքով ինկողը կ'ելլէ, լեզուով ինկողը չելլէր.
 Սուտ խօսողի լեզուն կարճ կը լինի.
 Մնջի լեզուն տէրը կը հասկնայ.
 Լեզուն ոսկոր չունի բայց շատ ոսկորներ կը ջարդէ.
 Լեզուս կ'ըսէ, սիրտս ոչ.
 Երկար լեզուն կեանքը կը կարճեցնէ.
 Թուրը մէկ մարդ սպանեց, լեզուն՝ բանակ մը.
 Խենդին սիրտը լեզուին վրայ է.
 Խելացիին լեզուն՝ սրտին վրայ է.
 Լեզուիդ չափ ու չուան դիր.
 Լեզուի ակռայով զիրար կ'ուտեն.
 Ա՛խ, լեզո՛ւն, լեզուն որ չըլլայ, մարդ ինչի՞ նման կ'ըլլայ: (Խ. Աբովեան)
 Լեզուն զէնք է, գիտելիքը ուժ. (Խ. Աբովեան)
 Աշխարհը շինողն ու քանդողը լեզուն է.
 Հայ լեզուն հարուստ է թեւաւոր խօսքերով.

Խելք» բառին գործածությունը մեր լեզուի դարձուածքներուն, առածներուն եւ ասացուածքներուն մէջ

Խելքը տարիքի մէջ չէ, այլ գլխի մէջ.

«Քո հայեացքի հաշիշը դեռ իմ խելքն է գողանում». (Յ. Շիրազ)

Ամէն տեղ խելքի աղքատութիւն կը տիրէ.

Խելքէ միտքէ դուրս խօսքեր թռան խելքի տէր տնօրէնէն.

Խելքդ գլուխդ ժողվէ՛, սիրելի՛ս.

Անոր խելքը կարճ է, դատարկ է, աղքատ է.

Խելքս թոցուցի երբ Էլիզապէթը տեսայ.

Եթէ խելքդ այս գործին կը հասնի՝ սկսիր աշխատելու.

Էլիզապէթը տեսնելէս ետք խելքս անոր հետ գնաց.

Եթէ խելքիս պատկի այս գործը, շուտով կը սկսիմ.

Վարպետը նոր գործաւորին խելքը չափեց եւ հիացաւ.

Կիրակն՛ս, խելքդ ուրիշի մի՛ տար, քեզի պահէ.

Այս չորս տարեկան մանչուկը խելքի տոպրակ է.

Թոռնիկս Արեգը խելքի ծով է.

Սարօն խելքը փչեց ու գնաց.

Անոնք շատ խելք գործածեցին, բայց անօգուտ.

Յարութը խելք կ'ընէ եթէ հաշտուի իր ընկերներուն հետ.

Սիրելի՛ս, խելքի եկու՛ր, սթափի՛ր, կշռադատէ ըրածիդ մասին.

Շուարած եմ սիրելի Յակոբ, խելք մը դի՛ր իմ գլխուս.

Կերակուրը այրած է, խելքդ ու՞ր էր աղջիկս, նշանածի՞դ էր.

Խելքդ ու՞ր է Տարօն, նորէն սխալեցար.

Խելքդ սիրեմ Տեսի՛լ ինչ գեղեցիկ գծած ես.

Խելքս կտրէր արդէն կ'երթայի Պոլիս.
 Բժիշկը հիւանդին խելքը գլուխը բերաւ.
 Չար տղուն խելքը գլուխը եկաւ.
 Խելքիդ եկե՞լ է, ին՞չ է պատահել.
 Մէկ տարի համբերելէ ետք տղան խելքի եկաւ.
 Անոր խելքը բանի չի գար.
 Խելքդ կարենոր հարցերու համար գործածէ.
 Խելօք կաց, խելքով գործէ.
 Անուշիկ աղջիկը տղոց խելքը գրաւեց.
 Ան ո՞վ է, որ անոր հետ խելք կը դնես.
 Ուրիշին խելքովը ճամբայ մի՛ ելլէր..
 Երբ տղան Սաթենիկը տեսաւ խելքը գլուխէն գնաց,
 Էլիզապէթը տեսնելէս ետք խելքս թոցուցի.
 Շաքարախտը գլխուն զարկաւ.
 Այդ ըսածդ խելքի մօտ բան է.
 Մարդու խելքը գլխու մէջ կ'ըլլայ, ոչ հասակի.
 Ամբողջ բազմութեան մէջ խելքը գլուխը մարդ չկար.
 Լաւ խելք ըրիր եւ անոնց հետ չգացիր.
 Տղուն մահով մայրը խելքը թոցուց.
 Տղան խելքը գլուխը ժողվեց.
 Խելքիդ մատաղ լինեմ.
 Հայու վերջին խելքը իմս լինէր.
 Անոր խելքը բանի չի ծառայեր.
 Գրիգորը դասարանին առաջինն է, խելքի ծով է.
 Խելքս կտրեց, որ թոռնիկս կրնայ ազատ անվախ խաղալ.
 Մօրս խելքը չի կտրէր որ եղբայրս պիտի յաջողի.

Անմիտին խելքը կարճ է.
Իմ կարճ խելքովս անոր ամէն ուզածները տալու չեւ.
Խելքդ հաւնեցայ ընկեր.
Անոր խելքը բանի չի հասնիր.
Տղաքը գլուխիս խելք չձգեցին.
Տիրանին խելքը Սօսէին վրայ մաղուած է.
Խելքդ մեծցուր ա՛յ կնիկ.
Էշու խելք ունի այս անմիտը.
Այս հարցը խելքիս պատկեցաւ.
Տաթեւին խելքը պինդ է.
Ջահելի խելք՝ անջուր ջաղաց.
Եկեր է ինծի խելք կու տայ.
Աշակերտը խելքը տուէր է խաղալու-կարդալու.
Ատուած խելքի պակասութիւն չտայ մարդուն.
Սիրուն աղջիկը բոլոր տղոց խելքը տարաւ.
Ինչ որ խելքդ փչէ, ըրէ, մի՛ մտածէր.
Փողը մարդուն խելք կը բերէ, շորը մարդուն տեսք կը բերէ.
Երանի անոր որ խելքի հաւնոցին մէջ հաւկիթ կը բուծանէ.

«Ծիծ» բառին գործածությունը մեր լեզուի դարձուածքներուն, առածներուն եւ ասացուածքներուն մէջ

Կարպիսը հալալ ծիծ կերած է, լաւ դաստիարակուած է.

Ամէն «ծիծ» պարունակող բառ կաթնտու չէ.

«Ծիծ»-ին հետ կապ չունի «Ծիծեռնակ»-ը.

Ծծի երեխաները առողջ կ'ըլլան.

Երկինքը ծծերը վեր թռղած է.

Ծիծի կաթի հետ մտածը հոգու հետ դուրս կու գայ.

Լաւ կով է, ամիսու մէկ ծիծը կոյր է.

Մայրը ծիծէն կտրած է իր զաւակը.

Ան մօրը ծիծը կտրող եղած է.

Ջահել կանաց ծծերը նման են ծոցի շամաւներուն.

Խաթունը ամէն մարդու ծիծ կու տար.

Մայրս բոլոր զաւակներուն ծիծ տուած է.

Մինչեւ երեխան չլայ՝ մայրը ծիծ չի տար.

Անոր ծծերը սաղմոսարան են.

Յղի կնկան ծիծերը պտղաբերութեան արգասիքն են.

Յակոբը ինը ամիս ծիծ կերաւ, յետոյ ծծէ կտրուեցաւ.

Տասը տարեկան Կիկոսը ծծի երեխայ է տակաւին.

Կիրակոս հալալ ծիծ կերած է, պատուաւոր դաստիարակութիւն ստացած է.

Չլացող մանուկին ծիծ չեն տար.

«Ծոց» բառին գործածությունը մեր լեզուի դարձուածքներուն, առածներուն եւ ասացուածքներուն մէջ

Շահէն վկայականը ստացաւ, ծոցը դրաւ եւ անգամ մըն ալ չնայեցաւ անոր.

Ան իր սիրականին տաքուկ ծոցը մտաւ ու հարբեցաւ.

Ծոցի երկիրները վտանգաւոր շրջան մը կ'անցընեն.

«Ով որ ճերմակ ծոց ունի, թող կապոյտ շապիկ հագնի» (Նահապետ Քուչակ)

Անուշիկ՝ ա, ծոցդ է ճերմակ տաճար (Ն. Ք.).

Սիրելի՛ ա, ծոցիկդ պարտէզ անէի հարբենայի (Ն.Ք.).

Թող մեր կիներուն նրբազանգ ծոցը ծլի ու ծաղկի, լուսացան Բնայ. (Վեհանոյշ Թեքեան)

Իր ծոցին մէջ կը ծնին մռայլ Տանթէներն ու Հեմերները հսկայ. (Դանիէլ Վարուժան)

Եարի զովացնող ծոցն է ծովը. (Նահապետ Քուչակ)

Քո ծոցդ է ի ծով նման. (Նահապետ Քուչակ).

Քո ծոցդ է դրախտ, մրգաց անդաստան (Յ.Թլկուրացի)

Քո ծոցդ է տիրոջ մառան, քո ծծերդ է սաղմոսարան (Նահապետ Քուչակ)

Քո ծոցդ Ադամա դրախտ, մտնէի խնձոր քաղէի (Ն. Քուչակ)

Քո ծոցդ է ճերմակ տաճար, քո ծծերդ է կանթեղ ի փառ (Ն.Քուչակ)

Նաւուն ծոցը լեցուն է տեսակաւոր ապրանքներով.

Շատ մը հայաստանցիներ վերջին տարիներուն դարձած են իրենց մայրենի եկեղեցւոյ
ծոցը.

Եթէ կը վախնաս առանձին գերեզմանոց երթալ՝ ծոցդ քար դիր.

Հայրենիքը անսահման գանձեր ունի իր ծոցին մէջ.

Խելացի խմբավարը նոր տաղանդները կը պահէ իր ծոցին մէջ.

Սիրուն կնկայ ծոցը պառկիր, տգեղ կնկայ ձեռքի հացը կեր.

Հայ գրողը ծնած է հայ ժողովուրդի ծոցէն.

Ծոցի երկիրները հանդիպում ունեցան Ապու Տապիի մէջ.

«Ծոծրակ» բառին գործածությունը մեր լեզուի
դարձուածքներուն, առածներուն եւ ասացուածքներուն մէջ

Վահանին ծոծրակը ամուր է, անվախ կը վազէ.

Անոր ծոծրակը հաստցած է, հպարտ կը քալէ.

Մահուան դատապարտեալը երբ լեզուն ծոծրակէն դուրս հանեց
անպարտ հռչակուեցաւ.

Խորամանկը երկու աչք ունի ծոծրակին.

Ծոծրակը պինդ է մի վախնաք անկէ.

Ծոծրակդ եթէ տեսնես Երուսաղէմս ալ կը տեսնես.

Հայրս շատ կ'աշխատի, ծոծրակը քերելու ժամանակ չունի.

Ծոծրակդ տեսնես, աղջիկս չես տեսներ.

Ծունկ բառին գործածությունը մեր լեզուի
դարձուածքներուն, առածներուն եւ ասացուածքներուն մէջ

Զաւակը չծեծողը ծունկը կը ծեծէ.

Տան հաւատարիմ տղան Սարգիսը այրիացած խեղճուկ իր մօր ծունկին տակ մեծցած
ու ապրած էր տարիներով.

Մեր դրացին հարսը պզտիկ տարիքին քերաւ, բան չէր գիտեր, ծունկին տակը առաւ
եւ անոր սորվեցուց շատ բան.

Գիշեր մը դէմա ելաւ շուն մը, ծունկերուս ջուր իջաւ.

Ճօնիին ուղեղին մէջ տարօրինակ անիմաստ գաղափար մը ծնաւ, մարմին առաւ.

Մեր հարսը ծունկերը գետին դրաւ, երկու երեխայ աշխարհ քերաւ.

Նպատակիդ հասա՞ր, զիս ծունկի բերիր.

Իսրայել կ'ուզէ ծունկի բերել Իրանը եւ ապա անոր պարտադրել իր ցանկացած
պայմանները.

Բոլոր հայերը ապրիլ 24-ին ծունկի կու գան նահատակներու յիշատակին առջեւ.

Ինչո՞ւ ծունկի կու գայ հայ մարդը.

Որո՞ւն առջեւ ծունկի կ'իջնէ այս բարեպաշտ ազգը.

Ծունկի եկայ ու աղօթեցի ծնկաչոք.

Ծունկ ծունկի եկած նստեցայ թոռնիկիս հետ ու խօսեցանք մտերմիկօրէն.

Ծունկ ծունկի եկած աստուծմէ խնդրեցի խաղաղութիւն աշխարհին.

«Կզակ» բառին գործածութիւնը մեր լեզուի
դարձուածքներուն, առածներուն եւ ասացուածքներուն մէջ

Աւելի լաւ է երկու կզակով բարեկամ ունենալը քան թէ երկու երեսով.
Հարսը ամուսնոյն բացակայութեան կզակին կապերը թուլցած կը խօսէր.

Մարիին կզակը թոյլ է, կարելի է ներել.

Կզակը թոյլ մարդէն զգուշացի՛ր.

Շատախօսը կզակը վեր ձգեց երբ ունկնդիրները ոտքի ելան.

Ժողովուրդին պնդումով շատախօսը կզակին կապերը քաշեց .

«Կոպ» բառին գործածությունը մեր լեզուի
դարձուածքներուն, առածներուն եւ ասացուածքներուն մէջ

Աղջկան կոպերը կամար-կամար են.

Կամար-կամար կոպերը շատ կը սիրուին.

Հակառակ հոգնութեանս չկրցայ կոպ-կոպի վրայ դնել.

«Կոնակ» բառին գործածությունը մեր լեզուի
դարձուածքներուն, առածներուն եւ ասացուածքներուն մէջ

Արցախի կռուողներուն կոնակը ամուր է.

Երբ ան մեզի միացաւ, մենք կոնակ առինք.

Տղաքը մեզ տեսնելով կոնակ առին եւ իջան դաշտ.

Ան անվախ կը խօսի, կոնակը ամուր է.

Տիրայրին զաւակները մեծցած են եւ կ'աշխատին, այլեւս անոր կոնակը գետին չի գար.

Սարօն կոնակը դարձուց իր սիրուհիին.

Կոնակը դարձնողին զարնող շատ կ'ըլլայ.

Երիտասարդները կոնակ դարձուցին ուրացող թրքամէտ դասախօսին.

Նախագահ Ասատ կոնակ դարձուցած է Ամերիկայի նախագահին.

Հագարապետը ըսաւ իր զինուորներուն՝ հոս դուք կը յոխորտաք, բայց կռուի
ժամանակ թշնամիին կոնակ կը դարձնէք.

Մարկոսը կոնակ կու տայ պահանջուած ամէն ծառայութեան.

Հայ մարտիկները կոնակ-կոնակի տուած կը կռուին.

Կոնակ-կոնակի տուէք որ մարդ ըլլաք.

Ելիր խօսի՛ր ես քու կոնակդ եմ.

Դուն գործի մարդ ես, քեզի կոնակ կը կենամ.

Տղա՛ս մտիր այս գործին մէջ, ես կոնակ կը կենամ քեզի.

Դաւաճանները կոնակէն հարուածեցին հայկական բանակը.

Եթէ կոնակ ունիս դիմացիր.

Եթէ կոնակ ունիս, բեռ բեռցնող շատ կ'ըլլայ.

Հուժկու եւ լայն կոնակ ունենալու է պատասխանատու ղեկավարը.

Եթէ կոնակ ունիս եկուր առջեւ եւ վազէ.

Եթէ ես քեզ կոնակ ունենամ, ոչ ոքէ չեմ վախնար.

Տղուն կոնակը տաք փորը կուշտ է, ալ ինչո՞ւ պիտի մտահոգուի.

Կոնակդ տեսնեմ, այլեւս հոս ոտք չդնե՛ս.

Կարօն ընկերոջը կոնակ տուաւ, որպէսզի ան ծառ բարձրանայ.

Թշնամին կոնակը ցոյց տուաւ հայ բանակին գրոհին չդիմանալով.

Հարուստի կոնակը շոր տեսան, ասացին շնորհաւոր, աղքատի կոնակը որ տեսան,
հարցրին ուրտեղից է.

Մեր ծերունի տնօրէնը կոնակը դարձուց եւ գործէ դադրեցաւ.

Կոնակ ունեցող բանտարկեալը դուրս եկաւ բանտէն.

Տաքինէր շարունակ եղբայրս կոնակ եղած է ինծի.

«Կոկորդ» բառին գործածությունը մեր լեզուի
դարձուածքներուն, առածներուն եւ ասացուածքներուն մէջ

Կոկորդդ մի մաշեցներ, չի հասկնար.

Կոկորդդ մի պատռեր, չի հասկնար.

Կոկորդին համար շատակերը գլուխը ամէն կողմ կը զարնէ.

Համբիկը կոկորդին համը գիտէ.

Կոկորդին սիրոյն հորն ինկաւ.

Զոհրապին գործը լաւ էր այսօր, կոկորդը իւղոտեցաւ.

Լեռնցիները կոկորդախօս են.

Աբօյին կոկորդը հորի նման է.

Մեծ գրուցողին լոխման կոկորդը կը փսայ.

Թշնամին մեր կոկորդը նստած է,

Անոր կոկորդը շտեմարան է ամէն խօսքի.

Աղքատին կոկորդը չոր էր, հազիւ կերակուրը տեսաւ կոկորդը կակուղցաւ.

Աղքատին կոկորդը չոր էր, հազիւ կերակուրը տեսաւ կոկորդը կակուղցաւ.

Ստախօսին կոկորդը քառասուն հանգոյց ունի.

Աղքատը կոկորդը տաքցնել կ'ուզէ.

Անյագ Տրդատը ծակ կոկորդ մարդ է.

Յուցարարները մէկ կոկորդ դարձած կը գոռային.

Դրացիս մինչեւ կոկորդը պարտքերու տակ կը քնանայ.

Կը տեսնես, մինչեւ կոկորդս թաղուած եմ գործերուս մէջ.

Սիփանը կոկորդը անցուցած է եղբօրը ստացուածքը.

Ճարպիկ Հրեան դրացիին դրամը կոկորդը անցուցած է եւ անյայտացած է.

Տարին անգամ մը կը հանդիպինք եւ մեր կոկորդները կը թրջենք.

Ոստիկանին կոկորդը 50 տոլարով լեցուցի որպէսզի ազատ արձակէ զիս.

Կուրծք բառին գործածութիւնը մեր լեզուի դարձուածքներուն, առածներուն եւ ասացուածքներուն մէջ

Հակառակ որ Յակոբը կուրծքին սեղմեր է իր փեսան, ան կը դաւաճանէ իրեն.

Հայ ժողովուրդը շատ ծանր փոթորիկներու կուրծք տուած է միշտ.

Աստուած կնոջ կուրծքը ստեղծեց պիրկ ու նոնաչափ. (Սուրեն Մուրատեան)

Կուրծքդ բաց է աղջի՛կս, ծածկի՛ր.

Այնպէս են հագնում, որ կուրծքերը կիսով չափ երեւում են.

Իմաստուն մարդուն կուրծքը շատ լայն պէտք է ըլլայ.

Շապիկին կուրծքը մաշած է.

Կրծքերդ կանթեղ են վառ.

Կուրծք-կուրծքի տալով կռուի դաշտ գացին հայ զինուորները.

Մարտիկը կուրծքը գնդակի դէմ տուաւ.

Ան առանձին կուրծք տուաւ թշնամիին.

Կուրծք տու՛ր ով հայ մարտիկ.

Կուրծքդ լայն բաց, թեւերդ ուժգին.

«Հեր» բառին գործածութիւնը մեր լեզուի
դարձուածքներուն, առածներուն եւ ասացուածքներուն մէջ

Կարապետը գանգրահեր հասուն մարդ է.

Բարսեղը շիկահեր երիտասարդ մըն է.

Հայրս ալեհեր էր մինչեւ 50 տարիքը.

Աղջիկը հերակապով մազերը պաշտպանեց.

Հերախտը շատ տարածուած է Ափրիկէի մէջ.

Հերատ մարդիք շատ կը տեսնենք 60 տարեկանէն վեր.

Ջղային Տիգրանին գլուխը հերարձակ երեւոյթ ունի.

Կիներ իրենց մազերը կը հաւաքեն հերակալով.

Տղաք եւ աղջիկներ հերաձեւութեան շատ կը հետեւին.

Հերաթափութեան պատճառով տղան չամուսնացաւ.

«Յօնք» բառին գործածությունը մեր լեզուի
դարձուածքներուն, առածներուն եւ ասացուածքներուն մէջ

Մեր ուսուցիչը յօնքերուն տակէն կը նայէր երբ զայրանար.

Յօնք շինելու տեղ աչքը չհանես տղա՛ս, շարունակ կ'ըսէր հայրս.

Սարգիսին յօնքերը կը շարժէին երբ ջղայնանար.

Աղջկան յօնքերը կամար կամար կը հրապուրէին բոլորս.

Դժգոհ Ժիրոյին յօնքերը մութ ամպերու պէս միշտ կախ են.

Յօնքերդ իրար մի տար, ամէն դատարկ բանի համար սիրտ չեն կոտրեր.

Անուշին յօնքերը կամարանման են.

Ծերուկին յօնքերը շատ կախուած են.

Գեղեցկուհիին յօնքերը կը խօսին.

Հայրիկը յօնքին տակէն կը նայի.

Յօնք շինելու տեղ աչք մի հաներ.

Փորձառու մարդուն յօնքերուն տակէն շատ բան անցած են.

Աստուած կնոջ յօնքերուն շարեց սիրոյ նետերը. (Սուրեն Մուրատեան)

«Ձեռք» բառին գործածությունը մեր լեզուի դարձուածքներուն, առածներուն եւ ասացուածքներուն մէջ

Բնութիւնը կնոջ ձեռքով կը գրուի տղամարդկանց սրտին մէջ
Տունը դրախտի կամ դժոխքի վերածելու բանալին կնոջ ձեռքն է:

Թշնամիին ձեռքերը արիւնով թաթախուած են.

Անոր ձեռքերը արին կը հոտին.

Անգամ մը որ ձեռքս անցնի չարագործը, պէտք եղած դասը կու տամ.

Ժողովուրդը իր ձեռքը առաւ իր կեանքի տնօրինումը.

Փեսացուն շատ մը ազատութիւններ ձեռք առաւ հազիւ նշանածին տունը մտաւ.

Աղտոտ ձեռքով երեսփոխանները փախուստ տուին երկրէն.

Պետութիւնը ձեռք անցուց ոճրագործները.

Գաղթականութենէն ետք հայկական կազմակերպութիւնները ձեռք առին

Ժողովուրդին պաշտպանութիւնը.

Մեր ձեռքերը այլեւս ազատ են, կրնանք ճակատ երթալ.

Կ'աղաչեմ, ասոնց ձեռքերէն ազատէ զիս, վարպետ.

Հայրս ձեռքերս ազատ արձակեց, որպէսզի կարենամ մեկնիլ Հայաստան.

Այս հարցով ձեռքերդ մի՛ աղտոտեր, տղա՛ս.

Ամերիկացիները նախագահին ձեռքերուն ազատութիւն տուին, գործելու
ազատօրէն.

Մեծ պետութիւնները թուրքերուն ձեռքերը ազատ ձգեցին, անոնք կատարեցին
հայոց ցեղասպանութիւնը.

Հա՛յր, ձեռքդ մեր գլխէն անպակաս ժաւ.

Այդ խաբեբան եթէ ձեռքս անցնի, զիտեմ թէ ինչ պիտի հրամցնեմ իրեն.

Աւագակը ձերքէս ազատեցաւ.

Ձեռքս ազատ է այլեւս, անկաշկանդ կ'աշխատիմ.
 Քանի հազար ձեռք է աշխատած այս պարիսպի վրայ.
 Եղբայրս Ասպետին ձեռքին տակ աշխատեցաւ տասը տարի .
 Վերջին գիրքս ձեռքէ ձեռք անցաւ.
 Ոճրագործին ձեռքերը արիւնի հետքեր ունին.
 Հայ կեդրոնը գաղութին գործերը պէտք է ձեռք առնէ.
 Երիտասարդները ձեռք առին հայ կեդրոնին մաքրութիւնը.
 Անգամ մը որ ձեռքս անցնի, տես թէ ի՞նչ պիտի պատահի.
 Իրաւունքը առ այժմ երիտասարդներուն ձեռքը անցաւ.
 Էլիզապէթին ձեռքը առաջարկեցի զինք տեսնելէս երկու ամիս ետք.
 Աստուած ձեռքէս բռնեց եւ կարողացայ աշխատիլ.
 Անոնք կը փորձեն ձեռք բերել աժան գինով առարկաներ.
 Անգործ մարդը մինչեւ իրիկուն ձեռքերը բացաւ, ողորմութիւն մուրաց.
 Քու ձեռքդ բռնող եղա՞ւ, ձեռքերովդ մի՛ հարուածեր ըսող եղա՞ւ.
 Իսկական ընկերը ան է, որ ձեռքդ կը բռնէ, սիրտդ կը զգայ.
 Անկախութիւնը ձեռք կը բերուի մեծ զոհողութիւններով.
 Կարելի՞ Է յայտնի նկարիչներու պաստառները ձեռք բերել.
 Ծերութեան ընթացքին ձեռք բռնող մը անհրաժեշտ է.
 Տղուն ձեռքերը արծաթ կը բռնէ, ոսկի կը դառնայ.
 Անդրանիկը ձեռք բարձրացնելու իրաւունք չունի կնկան վրայ.
 Հայրի՛կ, ձեռքդ բարի է, այս ծառը դուն տնկեցիր, առատ խնձոր ունեցանք
 այս տարի.
 Ձեռքս չի բռներ որ գիրքերս լուծարքի ենթարկեմ.
 Գոց ձեռքով ճանճ չի բռնուիր.
 Օտարին ձեռքով ձուկ չեն բռներ, փուշը կը բռնեն.
 Ձեռքէ փախցուցինք այդ հանճար տղան.

Ոստիկանը իր ձեռքը վրաս բարձրացուց.
 Հօրդ վրայ ձեռք չես կրնար բարձրացնել, բարեկա՛մ.
 Դարաւոր թշնամիներ ձեռք բռնելով երեւցան ժողովուրդին.
 Սիմոնին ձեռքը բաց է, ՀՕՄ-ի խնդրանքին կը պատասխանէ.
 Բարերարին ձեռքը բարի է.
 Բարեգութ մարդուն ձեռքը ամէն տեղ կը հասնի, ձեռքը շատ բաց է.
 Այնքան նուրբ է այս կտորը, մարդու հաւատալիքը չի գար որ ան ձեռքի գործ է.
 Ձեռքը գործին, իւելքը հովին.
 Ուսումն ու գիտութիւնը բարի մարդուն ձեռքը գաւազան են, իսկ չար մարդուն ձեռքը՝
 աւազակի լախտ.
 Մարդասիրական հաւաքոյթի ընթացքին Խաչիկը ձեռքը գրպանը տարաւ.
 Վարագոյրին ետեւ մութ ձեռքեր գաղտնի աշխատանք կը տանին.
 Եթէ ձեռքէս գայ վաղը ընտանեօք կը փոխադրուիմ Հայաստան.
 Թուրքը իր ձեռքով իր գերեզմանը փորեց.
 Գեղեցիկ Վարդուկը նշանածին ձեռքէն գնաց.
 Լուսինը ձեռքը տաք ջուրէ պաղ ջուր չի դներ.
 Ձեռքերդ դալար սիրելի Դալար, ճաշը դալար էր.
 Աշխատասէր մարդուն ձեռքը բնաւ դադար չառներ.
 Ձեռքդ դիր ծունկիդ, բարձրացիր եթէ կրնաս.
 Թուրքիոյ մէջ հայկական կալուածները ձեռքէ դուրս ելած են.
 Իշխանութիւնը ձեռք դրաւ ժողովուրդի կալուածներուն վրայ.
 Երբ ես մեռնիմ, թող այն ժամանակ թշնամիներս ձեռքերնին հինա դնեն.
 Պետութիւնը ձեռք դրաւ մեր դպրոցին վրայ.
 Դատաւորը ձեռքը խիղճին դնելով վճռեց.
 Ձեռքը պաղ ջուրէն տաք ջուր չի դներ.
 Դաշնակ նուագելու համար ձախ ձեռքը շատ դժուար է, իսկ աջը աւելի դիւրին.

Շուկայ գացի եւ ձեռքիս եկածը գնեցի.
 Տիկին անուշը երկու ձեռք հագուստ գնեց այսօր.
 Տկար մարդը ձեռք երկարեց իր հարուստ ընկերոջը.
 Ձեռքս չերթար որ հարուածեմ.
 Շատ մը տեղեր երկաթեայ ձեռքով կարգապահութիւն պարտադրուելու է.
 Ինչ որ ունիս, կրնայ մէկ հարուածով ձեռքէդ ելլել.
 Ճամբորդին երթալը իր ձեռքն է, դառնալը Աստուծոյ.
 Ձեռքս չերթար որ գիրքերուս հաշուեյարդարը կատարեմ.
 Թուրքերու ձեռքէն դժբախտութիւն մը պիտի ելլէ Սուրիոյ մէջ.
 Խաթուն մայրիկին տղան ձեռքէ ելաւ.
 Իմ ձեռքէս ելած են վեց բժշկական հաստորներ.
 Ձեռքէ եկածը ձեռք չի մտներ.
 Նորածինը շուտով ձեռքի եկաւ .
 Բոլորս մեր ձեռքերը երկարելու ենք հալէպահայութեան.
 Դրացի աղջիկը ձեռքին ետեւն ու առջեւը չի գիտեր.
 Մէկ ձեռքով ծափ չի զարնուիր.
 Ճարպիկ տղան ձեռքի խաղեր շատ կ'ընէ.
 Լաւ վիրաբուժ բժիշկը գործողութիւնները կ'ընէ ձեռքով եւ ոչ թէ սրտով.
 Փորձեցէք այնպէս ապրիլ, որ ձեր ձեռքերը եւ խիղճը մաքուր ըլլան.
 Գնայ ոսկերչութեան արհեստը սորվիր, ձեռքիդ ապարանջան մը կ'ըլլայ.
 Ան ոխերիմ ընկերոջ ձեռքը թօթուեց, ձեւականօրէն.
 Ձեռքով թափուող ջուրով ջաղացք չի դառնար.
 Բժիշկին ձեռքը շատ թեթեւ եւ նրբիկ է.
 Հակառակորդները վերջապէս ձեռք թօթուեցին.
 Անոր ձեռքէն բոլորը կը թողան.
 Այս հարուստ մարդուն ձեռքերը ժլատ են.

Նորածինը շատ փոքր է, ձեռքի չի գար.
 Մէկ ձեռքը իւղի մէջ, միւսը մեղրի մէջ.
 Ձեռքով ոտքով նոր գործին մէջ ինկայ.
 Աւագակներու ձեռքը ինկանք.
 Մայրս մէկ ձեռքը իւղի մէջ, միւսը մեղրի մէջ անդադար կ'աշխատի.
 Մեծ մայրս ձեռքէ ինկաւ երբ 100 տարեկան եղաւ.
 Հայրս ձեռքէ ոտքէ ինկած է, ծանր հիւանդ է.
 Հրդեհին մէջ ձեռքս ոտքս իրար անցան.
 Երեսփոխան Անտոնը ձեռքերը լուաց այս հարցին մէջ եւ հրաժարեցաւ.
 Ապստամբները իրենց ձեռքերը լուացին ու հեռացան երկրէն.
 Շատեր իրենց ձեռքերը լուացին կեղորոնի շինութեան մէջ.
 Դրացիիս ձեռքը լեցուն է, խելքը դատարկ.
 Մէկ ձեռքը կը լուայ միւսը.
 Ամբողջ տունը նրա ձեռքիցը լաց էր լինում.
 Ձեռքը ձեռք կը լուայ, երկուքը՝ երես.
 Կնոջ մը ձեռքը խնդրելու համար երիկմարդը խոնարհաբար ծունկի կու գայ.
 Դրացիները եկան մեր աղջկան ձեռքը խնդրելու.
 Գեղեցիկ Վարդուկը նշանածին ձեռքէն խլուեցաւ.
 Ձեռքերդ խղճիդ վրայ դիր եւ այդպէս որոշէ.
 Խուլ համրը ձեռքերով կը խօսէր.
 Մեծ մօրս ձեռքերը խօսուն էին.
 Տանտէրը ձեռքին վրայ մեզ խաղցուց, տակաւին տան առաստաղը չէ
 շինուած.
 Ձեռքը խմոր, սիրտն անօթի.
 Աճապարարը ձեռքով ոտքով կը խօսէր շարունակ.
 Անոր ձեռքէն գինի մի՛ խմեր, ձեռքը ծանր է, մէկ բաժակով կ'արբեցնէ.

Անոր ձեռքը ծանր է, պարտքի ապրանք մի՛ տար անոր.
 Օգնութեան հասնելու համար մարդ ձեռքերը ծալլած նստելու չէ.
 Սարգիսին վրայ աչք պէտք է պահել, անոր ձեռքը ծուռ է.
 Դանիէլ իր տղուն ձեռքն ու ոտքը կապեց, հարս բերաւ տուն.
 Տունը դրախտի կամ դժոխքի վերածելու բանալին կնոջ ձեռքն է.
 Ձեռքդ կը կտրեմ եթէ այս ոճով բան մը գրես.
 Հեռու կեցի՛ր ինձմէ, ձեռքէդ արիւնի հոտ կու գայ.
 Տիգրիսն ձեռքերը ամէն տեղ կը հասնին, բոլորին կ'օգնէ.
 Հարուածող ձեռքեր պէտք են թշնամին պարտութեան մատնելու համար.
 Տղա՛ս, եկուր հարուածող ձեռքերդ համբուրեմ.
 Թուրքերը ամէն միջոցի կը դիմեն ձեռք ձգելու հայկական եկեղեցիները
 եւ հողերը.
 Ձեռքէ հեռու, աչքէ հեռու.
 Պէտք է որ մարդիկ ձեռք ձեռքի տան, որպէսզի հայ կեդրոնը յարատեւէ.
 Ձեռք-ձեռքի տալով կրնանք իրականացնել մեծ գործեր.
 Մեր փեսան ձեռք ձգեց մեծ յարգանք հիւանդանոցէն ներս.
 «Հայ բոյժ»-ը ձեռք ձգեցի եւ հիացայ.
 Մօրս ձեռքի գործը (ձեռագործը) շատ նուրբ եւ գեղեցիկ է.
 Հպարտութիւնը եւ տիւմարութիւնը ընդհանրապէս ձեռք ձեռքի կը քալեն.
 Աշխատելու ենք մեծ գումարներ ձեռք ձգել եկեղեցւոյ շինութեան.
 Ուրտեղէ՞ն ձեռք ձգեցիր այդ նապաստակը.
 Նամակը Լոռիին ձեռքով դրկեցի.
 Սասունին ձեռքը մաքուր է գործի մէջ.
 Գործաւորին ձեռքը մաքուր է, վարպետը լաւ աչքով կը նայի անոր.
 Հազար ողջոյն այն ձեռքերուն մեսրոպագօծ.(Ժագ Յակոբեան)
 Վարչապետին ձեռքը մաքուր է, լեզուն՝ երկար.

Ինչպէս կը մաշի աղամանդը իր փռշիռով, այնպէս ալ մարդը՝ իր ձեռքով.

Միրանը Սագոյին ձեռքը մերժեց եւ երեսը դարձուց.

Ձեռքէ ելածը ձեռք չի մտներ.

Այս օրերուն Սարգիսին ձեռքը շատ նեղ է.

Տուն դարձիր տղա՛ս, գաւակներդ քու ձեռքիդ կը նային.

Թուրքը ձեռքերը հայու արիւնով ներկեց.

Գրիգորին ձեռքը այս տարի շատ նեղ է, մեծ ծախսեր ունեցաւ.

Մէկ ձեռքով երկու ձմերուկ չի շալկուիր.

Արուեստագէտ Փօլին ձեռքը շնորհալի է.

Ժիրօյին ձեռքը շիտակ է, կրնաս ոսկիները իրեն յանձնել.

Անահիտը ձեռքին ոսկի ապարանջան մը ունի:

Ան գեղեցիկ ձեռք ունի, այս նկարը անոր գործն է.

Երկու ձեռքը ձայն չունի, մէկ ձեռքն ո՞նց ունի.

Ձեռքս չորնար, սեղանէն բաժակը չվերցնէի, ինկաւ կոտրուեցաւ.

Կիկոն ձեռքը պարզեց եւ իրականութիւնը խօսեցաւ.

Ան ամուր ձեռքերու մէջ կը պահէ հին ձեռագիրները.

Փափուկ ձեռքդ պահէ դպրոցիդ, երկաթէ ձեռքդ թշնամիիդ.

Տղադ երկու ձեռքով պահէ, աղջիկդ՝ մէկ ձեռքով.

Մերկ ձեռքով կարելի չէ պատերազմիլ.

Անոնք յոյսի ձեռք կը սպասեն ամէն կողմէ.

Տնօրէնը երկու ձեռքով ստորագրեց Ժորժին պատրաստած
ուսումնասիրութիւնը.

Մայրը աղջկան՝ լուացքը ո՞վ պիտի արդուկէ, ձեռքդ կը սպասէ.

Ա՛յ տղայ, ձեռքերդ աղջկան վրայէն վերցուր.

Մէկ ձեռքով երկու ձմերուկ չի վերցուիր.

Ձեռքը գրպանը չտարաւ հանգանակութեան ընթացքին.

Ձեռքիս տակ շատ մը գիրքեր ունիմ..
 Իր ձեռքին տակ բազմաթիւ ծառաներ ունի տիկին Արմենուհին Պէյրութի մէջ.
 Բոլորս անոր ձեռքէն շատ տառապեցանք.
 Դերձակ Մերութանին ձեռքին տակէն շատ գործաւորներ անցած են.
 Բոլորս ձեռք տուինք դրացիին որպէսզի կրակը մարենք.
 Անդրանիկ զաւակը ընդհանրապէս ձեռք կու տայ իր հօրը.
 Մայրս տօնական օրերուն դրացիներուն ձեռք կու տայ.
 Գողը բռնեցինք եւ ոստիկանին ձեռքը տուինք.
 Բոլորս ձեռք տալու ենք հայրենիքի վերաշինութեան.
 Իմ ձեռքս երբ տաքնայ ես ալ լաւ կ'ապրիմ .
 Ձեռքս տաք չէ որ ուզածի՞ծ պէս ապրիմ
 Ես հօրս ձեռքին տակ մեծցայ.
 Իմ ձեռքիս տակ ունիմ Ամիրտովլաթի «Անգիտաց Ամպէտը»-ը.
 Աղջի՛կս ձեռք տու՛ր միասին պատրաստենք լիցքը.
 Անդրանիկը ձեռքին տակ ունէր հարիւրաւոր կամաւոր զինեալներ.
 Ամիրտովլաթ իր գործին պատրաստութեան ժամանակ ձեռքին տակ ունէր
 ուրիշ գրող-բժիշկներ.
 Ազնիւ մարդը ձեռքի տակից որոշ մարդոց կ'օգնէ.
 Ձեռքի տակից շատ բաներ գողցաւ.
 Անոր ձեռքին տակ մենք զմեզ ապահով կը զգանք.
 Մէկ ձեռքին տուածը միսը պէտք չէ իմանայ.
 Ձեռքով տուածդ քուկդ է, մահէդ ետք՝ ուրիշինը.
 Ձեռքէս փախցուցի այս բացառիկ առիթը.
 Իմաստուն կիները իրենց տունը կը շինեն, իսկ յիմարները իրենց ձեռքով կը
 քանդեն.
 Բոլորը իրենց ձեռքերը քաշեցին այս ձեռնարկէն.

Ձեռքդ քաշէ այդ դատէն.

Մայրը իր աւագակ տղուն ձեռքէն ինչեր քաշեց.

Ձեռքս կը քերուրտի, տեսնեմ ուրկէ դրամ պիտի ստանամ.

Ան միշտ տուող է, անոր ձեռքը օրհնուած է.

Մէկ ձեռքով խաչ կը հանէ, միւսով գողութիւն կ'ընէ.

Ձեռքս բան, ոտքս գերեզման.

Ժառանգը տաք ձեռքով կուտան.

Դրամ ունեցար, աշխարհ ձեռքդ կը պագնի.

Օտարի ձեռքով լաւ է փուշ քաշելը.

Սիրտս լայն է, ձեռքս կարճ.

Ծոփս ընկողը ձեռքը օձին ալ կու տայ.

Օտար ձեռքով ապուր ուտողը բերանը կը վառէ.

Ուրիշի ձեռքով կրակ մի բռներ.

Հարսը կեսուրը ձեռքի վրայ կը պտտցնէ.

Անիկա ձեռքս մեծցած է.

«Ճակատ» բառին գործածությունը մեր լեզուի դարձուածքներուն, առածներուն եւ ասացուածքներուն մէջ

Երբ լսեցի որ առաջին մրցանակը ես շահած եմ, ճակատս արեւ ծագեցաւ.

Վեցերորդ գունդը ամբողջ ճակատով դարձաւ դէպի թշնամին.

Հայ զինուորը մահը ճակատը առնելով կռուի գնաց.

Աջակողմեան ճակատի մարդ է Լուտերը.

Թշնամիները ճակատ առ ճակատ խօսեցան.

Տղա՛ս, ճակատդ միշտ բարձր պահէ.

Մեր շէնքին ճակատը բաց է.

Հայ բանակը ճակատը բաց յարձակեցաւ թշնամիին վրայ.

Ճշմարիտ մարդուն ճակատը բաց կ'ըլլայ.

Վարչապետը ճակատը բաց մարդ է՝ ան վեհություն կը բուրէ.

Ճակտիդ ինչ որ գրուած է այդ պիտի տեսնես սիրելի՛ս.

Մեր ճակտին ինչ որ գրուած է կ'ընդունինք.

Գիրքին ճակատը գրուած է՝ Բժիշկ Կարպիս Հարպոյեան.

Հայ զինուորին ճակտին գրուած է՝ յաղթություն.

Ճակատդ է զէտ սար. (աշուղ՝ Ղազար Սեբաստացի).

Աստուած Պարգեւին այսպէս ստեղծած է, խօսքերը մարդոց ճակատին կ'ըսէ.

Մենք խաղաղութեան ճակատին մարդիկ ենք.

Անոնք ճակատ կազմեցին հարաւի կողմը.

Հայ զինուորները համարձակ ճակատով ճամբայ ելան.

Նախագահը ճակատ հասաւ շքախումբին հետ.

Ճակտէդ պիտի համբուրեմ տղա՛ս, երբ քննութեան շատ լաւ արդիւնք ունենաս.

Կ'արժէ անոնց ճակատը համբուրել.

Հաւատացեալները վախճանեալ կաթողիկոսին ճակատը համբուրեցին.

Հակառակորդ ճակատի թերթը արտառոց բաներ կը գրէ.

Դատապարտեալը ճակատաբաց ներկայացաւ դատախագին.

Տիգրանին ճակատը ճերմակ է, մաքուր է, կրնաս վստահիլ անոր.

Բոլորս պիտի ներկայանանք մեծ դատաստանին, երանի անոր, որ

օր մը մաքուր ճակատով դուրս պիտի գայ այդ դատաստանէն.

Հայ տղան մահը ճակատը առած բանակ գնաց.

Քաղցկեղէ տառապող Յասմիկը մահը ճակատը առաւ եւ վիրահատումի
ենթարկուեցաւ.

Այդ ճշմարտախօս մարդուն ալ ճակատին մուր քսեցին.

Զինուորը ճակատէն երկու տող նամակ գրած է իր ծնողքին.

Դժբախտութիւնը անոր ճակտին նախասահմանուած է.

Ան ճակատը պինդ մարդ է, ամէն դժուարութիւններուն դիմացած է.

Տղուն ճակատը պինդ է, չես կրնար հետը վիճաբանիլ.

Պարգեւին ճակատը սեւ է, գործ մի ունենար անոր հետ.

Անոր ճակատին վրայ լուսապսակ մը կայ.

Սուրիոյ մէջ տաք ճակատը դարձած է դէպի արեւելք.

Ճակատագրէ կարելի չէ փախչիլ.

Վկայականդ ճակտիդ փակցուր եւ գործի դիմէ.

Ճակատը փայլած է յաւերժական ձիւնով.

Տղան ճակտի քրտինքով բժիշկ դարձաւ.

Անդրանիկին նախանձոտ ընկերները իր ճակատը մուր քսեցին.

Այրի կինը ճակտի քրտինքով իր չորս զաւակները համեստօրէն մեծցուց.

Ճակտի քրտինքով շահուած դրամը հալալ է.

Սօսէն ճակտի քրտինքով իրականացուց իր երազը.

Արտիդ հողը բարեբեր է ճակտիդ քրտինքով.

Վախճանեալ կաթողիկոսին ճակատը միտոնով օծուեցաւ.

ճակտիդ գրուածը չի ջնջուիր.

«Մազ» բառին գործածությունը մեր լեզուի դարձուածքներուն, առածներուն եւ ասացուածքներուն մէջ

Աստուած ուռննուց հիւսեց կնկան թել-թել մազերը (Մ. Մուրատեան)

Երկա՛ր մազեր՝ մատուռի աւե՛լ.

Մօրը լեզուին վրայ մազ բուսաւ, տղան ականջ չտուաւ.

Նարեկին երեսի մազերը բուսած են, հասուն պատանի կ'երեւայ.

Անվախ գնա՛, քու մազիդ մարդ պիտի չդպնայ.

Թոռնիկիս մազին չես կրնար դաշիլ, այ մարդ.

Մազը երկար, իսկը կարճ.

Մազմզուկներ են ասոնք միւս հարցերուն քով.

«Քո մազերի մէջ են դեռ իմ յուշերը լողանում» (Յ. Շիրազ).

Ան շատ հիւանդ է, անոր կեանքը մազէ մը կախուած է.

Փեսային երջանկութիւնը հարսին մազի մէկ թելէն կախուած է.

Քանի ես կամ՝ ըսաւ վարպետը, ապահով ձեւէ եւ կարէ, ոչ ոք կրնայ մազիդ
մօտենալ.

Ընտրութիւններու ընթացքին մազ փսաց որ Տիրանը ընտրուէր.

Խաչիկը մազաչափ մը իսկ խօսքէն ետ չի գար.

Մազաչափ մը յառաջդիմութիւն տեղի չունեցաւ հիւանդին կացութեան մէջ.

Մազօն վտանգէն մազապուրծ եղած երկրորդ հարուած մը ունեցաւ.

Մութ տեղը մազ կը մանէ՝ (կծծի).

Շոգեկառքը քովէս շատ արագ կը սուրար, մազ փսաց որ վիրաւորուէի.

Շատ վազեցի շատ յոգնեցայ, մազ փսաց որ շնչահեղձ ըլլայի.

Աւագակ տղան ըսաւ՝ այժմ հասկցայ, որ ես մազի չափ պատիւ չեմ ունեցած.

Այս պարագային մազի չափ յոյս չունիմ.

Այս քաղաքին մէջ մազի չափ եկեղեցի եւ մզկիթ կայ.

Տղան մազի չափ յարգանք չունի հօրը հանդէպ.

Երեսին մազերը չորցած են՝ (նիհարցած է).

Շունէն մազ պոկելը իսեր է. (կծծի մարդէ մը բան մը հանել).

Շաքէին մազերը հովէն թել թել կը վազէին.

Բծախնդիր Մարկօն մածունին մէջ մազ կը փնտռէ.

Բծախնդիր Աստղիկը հաւկիթին մէջ մազ կը փնտռէ.

Կիրակոսին վատութիւնը լսելով մազերս տնկուեցան.

Ես քու մէկ մազը անոր գլխուն հետ չեմ փոխեր.

Կորած մազը պարան կը դառնայ.

Փախիր մազոտ կնիկէն, անմազ մարդէն.

«Մատ» բառին գործածութիւնը մեր լեզուի
դարձուածքներուն, առածներուն եւ ասացուածքներուն մէջ

Աստուծոյ մատը կար այդ գործին մէջ.

Աղտոտ մատով պէտք չէ ցոյց տալ ուրիշին սխալները.

Դուն ո՞վ ես, որ մատդ կը բարձրացնես վրաս.

Փոքրիկները այնչափ լաւ պարեցին որ մատս բերանս փսաց.

Հայազգի տանտիկիներ գործունեայ մատներ ունէր.

Ախպէր ջան, մատդ ճիշդ վերքին վրայ դրիր.

Դիր մատներդ կոյս՝ աչքերիս վրայ.

Դի՛ր մատներդ լոյս՝ աչքերիս վրայ.

Լեռնամատէն ուղղուեցանք դէպի գագաթ.

Մօրս պատրաստած դափաման շատ համով էր, մատս կը լզէի.

Վարուժը այս հարցին մէջ մատը շարունակ կը խառնէր.

Մատդ մի խառնէր այս գործին մէջ.

Շաքէ՛, սուրճը շատ համով պատրաստած ես, մատո՞վդ խառնեցիր.

Աշակերտները մատերնին խաճնելով մտիկ կ'ընէին տնօրէնին.

Բարակ մատներ՝ խորանի մոմե՛ր.

Եղբօրս խանութը լեցուն է հիանալի ապրանքներով, երբ ներս

մտնես ու տեսնես մատդ կը խաճնես.

Սարինը մատին ծայրով մօրը կ'օգնէ.

Ժամանակին հայրս կ'ըսէր՝ ամէն քաղաքական հարցերուն մէջ

անգլիական մատ կայ.

Երաժիշտի մատները կախարդական մատներ են.

Տասը մատերդ աչքերուս կախես, նորէն չեն ճանչնար քեզ.

Անանկ համով ձուածեղ կար այսօր հիւանդանոցին ճաշարանը, մատներս կերայ.

Այնչափ համով էր մօրս պատրաստած ճաշը, մատներով կերայ.

Աչքդ չորս բաց, ան քու կարծած մատ կլլողներէն չէ.

Շապիկը շատ երկար է, երկու մատ կարճեցուր.

Քեզի ճամբայ ցոյց տուող մատը մի՛ կտրեր.

Մատ մը հացով կշտացայ.

Ամէն օր պարապ կը պտտի, մատը մատին չի տար.

Այս առաւօտ մէկ մատ մեղր կերայ.

Խեղճ հիւանդը մահէն մէկ մատ հեռու է.

Մէկ մատ երեխայ է եւ ինչեր կը պատմէ.

Ամէն հարցի մէջ մատդ մի մտցներ.

Մէկ մատ աղջիկ էր, հարս գնաց.

Յակոբը Զարեհին մէկ մատը չարժէր.

Նախախնամութեան մատը նշմարելի է այս գործին մէջ.

Իշխանը եթէ մատը շարժէ՝ թագաւորը գահնկեց կ'ըլլայ.

Վարպետ Անտոնին ամէն մէկ մատը ոսկի է.

Տասը մատին տասը մատանի ուներ մեր Շաքէն.

Սուրիոյ տագնապին մէջ Թուրքերը մատ ունին.

Ան ոսկէ մատ ունի, ինչ կ'ուզես կը պատրաստէ.

Մեր սանդուխը 20 մատ ունի.

Կը տեսնես, անոր լեզուն ճկոյտ մատիս չափ, սիրտը տատիս չափ.

Մատնեվանք մատի չափ հեռու է Վանայ լիճէն.

Մատի չափ արժէք չունեցայ դրացիներուն մօտ.

Մեր աշակերտները մատի չափ են, կրնայ ըլլալ որ դպրոցը փակուի.

«Բաւ է հայեր ցրուած փաթ մատներիս պէս» (Յովհաննէս Շիրազ).

Այս փողոցները հինգ մատերուս պէս գիտեմ.

Խմբավարին մատերը կը պարէին խումբին առջեւ.
Կիթառիստին մատերը ազատօրէն կը սահէին կիթառի թելերուն վրայ.
Խղճամիտ բժիշկներ մատի վրայ կը հաշուեն.
Յակոբիկը մատերուն վրայ կը խաղացնէ իր մայրը.
Կարօյին ընկերները զինք մատի վրայ առին.
Խելացին մատը ճիշդ վերքին վրայ դրաւ.
Երբ թոռնիկս քունի մէջ է, բոլորս մատերու ծայրամասին վրայ քալելու ենք տան մէջ.
Աշակերտները ուսուցչուհին խամաճիկի պէս մատերու վրայ կը խաղցնեն.
Բժիշկը մատը վերքին վրայ դրաւ.
Վստահելի անձերու թիւը քիչ է, մատերու վրայ կը հաշուես.
Յակոբ մատը մատին վրայ չի դնէր, իր հանգիստին կը նայի.
Տասը լարերու վրայ մատերդ տա՛ր, բե՛ր ու կը լսես լաւ երաժշտութիւն մը.
Անոր մատը այս ձեռնարկին մէջ տեղ ունի.
Տասը մատից տասը արհեստ ունի.
Գեղեցիկ Վարդուկին մատով ցոյց կու տային տղաքը.
Ազնավուրին ամէն տեղ մատով կը ցուցնեն.
Ամբողջ տարին մէկ անգամ բացակայեցաւ գործաւորը, այդ ալ մատի փաթեցոց
ըրաւ գործատէրը.
Աղջկան նշանուիլը մատի փաթեցոց եղաւ.

«Մարմին» բառին գործածությունը մեր լեզուի դարձուածքներուն, առածներուն եւ ասացուածքներուն մէջ

Վերին մարմինին որոշումները ժողովուրդէն չընդունուեցան.

«Մէկ մարմին եւ մէկ հոգի էք» ըսաւ տէր հայրը ամուսնացող զոյգին.

Մարմին տէրունական.

Մարմին պէտք է տաս այս գործիդ՝ տղա՛ս.

Արագին մտքին մէջ մարմին առաւ տարօրինակ գաղափար մը.

Հայոց Ցեղասպանութենէն ետք, սփիւռքի տարածքին մարմին առին հայրենակցական
միութիւնները.

Տաղանդաւոր երգիչը մարմին տուաւ իր երգին.

Աստուած կ'նոց մարմարեայ մարմինն ստեղծեց. (Մ. Մուրատեան».

Մարմին ու հոգի կու տայինք Պէյրութ հրատարակուող «Բժիշկ» ամսաթերթին.

Կը յուսամ որ Ն.Ս.Օ.Տ.Տ. Արամ Ա.-ի Ապրիլ 24-ի ճառը մարմին առնէ, միս ու արիւն
դառնայ հայ ժողովուրդի զաւակներուն մօտ:

Հայկական ցեղասպանութենէն անմիջապէս ետք ստեղծուեցան, մարմին առին
հայրենակցական միութիւններ, կազմակերպութիւններ, մարզական հաստատութիւն-
ներ եւ քաղաքական դեկլարութիւն.

Զգոյշ բժշկական պարբերաթերթը մարմին առած է եւ օրինաւոր կերպով կը
հրատարակուի Պէյրութի մէջ .

«Մէջք» բառին գործածութիւնը մեր լեզուի դարձուածքներուն, առածներուն եւ ասացուածքներուն մէջ

Տղուն մէջքը ամուր է, չի պարտուիր.

Անոր մէջքը գետին չի գար, միշտ կը յաղթէ.

Կիրակոսը պարտքի մէջ է, բայց անոր մէջքը գետին չի գար.

Տղուն մէջքը ամուսնանալէ ետք շուտ շուտ սկսաւ գալ.

Պարտուողին մէջքը գետին կը դաչի.

Բանակին մէջքը զօրաւոր է.

Տկարին մէջքը թոյլ է.

Մէջքդ կտրուի խաբեբա՛յ, անիրա՛ւ.

Ա՛յ անիրաւ, մէջքդ կտրի.

Մէջքս կտրեցաւ, երկար ժամանակ ոտքի կեցայ.

Զաւկին մահը Սարգիսին մէջքը կտրեց.

Յակոբին մատանները լեցուն են, անոր մէջքը պինդ է, մեծ մեծ կը խօսի.

Աղջիկը միշտ մէջք կու տայ իր մօրը.

Մէկ տարեկան մանուկը անկարող է առանձին քալել, մայրը պէտք է
մէջք տայ անոր.

Յակոբ շարունակ մէջքէն վար կատակներ կ'ընէ.

Երկու եղբայրներ մէջք մէջքի տուած կ'աշխատին շարունակ, մեծ յաջողութիւն գտած
են.

Նորապսակ Վաչէին մէջքը ամուր է.

Ի հարկէ Սարգիսին մատանները լեցուն են, մէջքը պինդ է, մեծ կը խօսի.

Ծերութեան մէջքը կտրի, եթէ ուժս տեղը ըլլար տեսնէիք ինչեր կրնայի ընել.

Յակոբը հօրը մէջքէն ելած է.

Ռիթային մէջքը ամրացաւ զաւակ ունենալէ ետք.

Միտք բառին գործածութիւնը մեր լեզուի դարձուածքներուն, առածներուն եւ ասացուածքներուն մէջ

Զգուշ ըլլալ մտային կոյրերէն, որոնք կը մերժեն տեսնել իրականութիւնը:

Խելացի Յակոբը միտք մը յղացաւ.

Միտքդ հավաքէ հոգիս, աշխատիր մոռցածդ վերյիշել.

Միտքդ մի մաշեցներ պարոն Սարգիս, այս տղան տկարամիտ է.

Ուսուցիչը աշակերտներուն միտքը պղտորեց.

Արեգը մտքի գաւակ է.

Վեցերորդ դասարանի տղաքը մտքի թռիչք ունին.

Դասախօսին մտքի պայծառութիւնը շոյեցին հանդիսատեսին ականջը:

Միտքդ մի ծռեր տղաս, ապա թէ ոչ կը մոլորեցնես ընկերուհիդ.

Ուշադիր ըլլալ միտքը ծուռ մարդոցմէ, անոնք հետին միտք ունեցողներ են.

Հայրս միտքը հավաքեց եւ փորձեց մոռցածը վերյիշել.

Դասընկերս մտքի ծոփս ինկած մտածումներու մէջ խորասուզուած էր.

Երէկ ամբողջ օրը մտքես անցուցի Հայաստան երթալու կարելիութիւնը.

Մտքիս մէջ տարի-բերի Արցախի ներկայ իրավիճակը.

Ամեն Հայ մարդ մտքէն հանելու է յուսահատութիւն բառը.

Մտքիս մէջ առի-տուի եւ կշռադատեցի Հայ ժողովուրդի արդար դատը.

Երանի անոնց որոնք մտքով կը ծիծաղին.

Միտքս բաժնեցի գործակից բժիշկին հետ եւ երկուստէք համակարծիք եղանք.

Մեր մտքերը բաժնեցինք ներկաներուն հետ, անոնք հաղորդակից դարձան մեր
միտքերուն.

Ծերունի հօրս միտքը մթաքնած է.

Երանի անոնց որոնք մտքով կը տեսնեն.

Մտքիս թէլը կտրեցաւ, մոռցայ ըսելիքս.

«Մորթ» բառին գործածութիւնը մեր լեզուի
դարձուածքներուն, առածներուն եւ ասացուածքներուն մէջ

Յեղաշրջումի առաջին օրը նախագահը մորթը-գլուխը ազատելու կը մտածէր.

Անահիտին մորթը հայելիի պէս կը փայլի.

Սեդրակին մորթը փիղի մորթին նման շատ թանձր է (անզգամ է).

Մորթը մարմնին պարիսպն է.

Փայլուն մորթը հրապուրիչ է.

Մորթը կաշի է Հայաստանի մէջ.

Ջրանուագումով մորթը կը թուլնայ.

Անզգամ մարդուն մորթը կաշիի կը նմանի.

Պաշտպանեցէք՝ ձեր մորթը արեւու ճառագայթներէն, մորթի խլիրդ չունենաք.

Արջը չզարկած՝ մորթը մի՛ ծախեր.

Հայ զինուորը ազերիներուն գերի իյնալէ ետք շուտով մորթը ազատեց.

Նոր վարչապետը յայտարարեց՝ ոչ ոքի հետ մորթս կը փոխեմ.

Իմ մորթիս վրայ զգացի բանտարկեալին չարչարանքները.

«Մօրուք» բառին գործածութիւնը մեր լեզուի դարձուածքներուն, առածներուն եւ ասացուածքներուն մէջ

Առանց մօրուքի քահանայ չ'ըլլար.

Եթէ մօրուքը խելացութեան նշան ըլլար, այծը Սոքրաթ կ'ըլլար.

Տէր հայրը մօրուքին տակէն գործ կը տեսնէ.

Նոր հարսը փորձեց ամուսնոյն մօրուքին խնդալ.

Տէրտէրը մօրուքը վերմակին տակ կը պահէ.

Մօրուք չունիմ որ խօսքս մտիկ ընես-որ հաւատաս.

Աշակերտները ուսուցիչին մօրուքը ձեռք ձգեցին.

Սագօն մօրուքը կնկան տուէր է, ուր կ'ուզէ կը տանի.

Հարիւրապետը տասնապետին ըսաւ՝ մօրուքդ իմ ձեռքս է, ուշադիր

եղիր շարժումներուդ մէջ.

Ուսուցիչը մօրուքը աշակերտներուն ձեռքը տուաւ.

Պապիկը մօրուքին տակէն կը խնդայ.

Մեր տնօրէնը իր մօրուքին տակէն կը խօսի.

Յարութին մօրուքին տակէն եթէ անցնիս, աղջիկը տղուդ կու տայ.

Գիրկս նստէր է, մօրուքս կը փետէ.

Մեր Տէր Հայրը բամպակ մօրուք եկեղեցական է.

Տէր Հայրը մօրուքը ձեռք տուաւ սարկաւագներուն.

Այս մարդուն մօրուքի ամէն մէկ մագի տակ սատանայ կայ.

Աշակերտները ուսուցիչին մօրուքին խնդացին.

Աղքատը հարուստի մօրուքին փակած կը քալէ.

Փոռձառու մեծ հայրս մօրուք ճերմկցուցած մարդ էր.

Մօրուքս բռնկէր է, կ'ըսէ, կեցիր չիպուխս վառեմ.

Վեր թքնեմ յօնքս է, վար թքնեմ՝ մօրուքս է.

«Յետոյք» բառին գործածութիւնը մեր լեզուի
դարձուածքներուն, առածներուն եւ ասացուածքներուն մէջ

Հսկայ մարդուն յետոյքը պատ կը փլէ.

Յետոյքը փարթամ է, չի կրնար արագ քալել.

Աստղիկին յետոյքը վախազդու է.

«Շրթունք» բառին գործածությունը մեր լեզուի դարձուածքներուն, առածներուն եւ ասացուածքներուն մէջ

Թող մանկանայ քո շրթներէն մի ալեհեր հայոց լեզուն (Սիլվա Կապուտիկեան)։

Գոց շրթներով ալ կը խօսի սերը։

Տնօրէնը շատ բարկացած էր, շրթունքները վար կախուած էին։

Զեփիւռին շրթունքները շատ բան կը խօսին։

Աշակերտը ուսոցիչին շրթունքներէն կախուեցաւ։

Աղջկան շրթունքները կծկուեցան երբ տեսաւ նշանածը։

Արային եւ Շամիրամին առանձնատեսութիւնները յաճախակի էին,

սակայն անոնց շրթնահանդիպումը անակնկալ էր այսօր։

Տղուն եւ աղջկան շրթունքները իրար հանդիպեցան մոլեգնօրէն։

Այտային քնքուշ շրթունքները շող են լուսեղէն։

Ժազը համբոյր մը դրոշմեց տիկնոջը տաք շրթներուն։

Աղջիկը շուարած շրթունքները շարունակ կը ծծէր։

Աղջկայ մը ցայտուն շրթունքները կը հրապուրեն տղաքը։

Սեպուհին եւ Զուարթին կատաղի շրթնահամբոյրը շատ երկար էր,

երկուքին շրթունքները ուռած էին։

Աստուած մեղրով նեկտարով օճեց կնոջ շրթները (Սուրէն Մուրատեան)։

Շրթունքները կը հրահրեն տոփածին զգացում՝ համբոյրի, հպումներու եւ

սեռային մտերմութեան ընթացքին։

Շրթունքը կը յատկանշուի սերաղեղով եւ գեղաղեղով։

Սիրունին շրթնափոսը, շրթնասահմանը եւ շրթնաբաժինը շատ նուրբ էին։

Կնոջ մը շրթունքները կը ցոլացնեն անոր արգասաբերութիւնն ու

բեղմնաւորումը։

Կնոջ մը շրթունքները կը մարմնաւորեն անոր դէմքի գրաւչութիւնը եւ սեռային քաշողականութիւնը.

Շրթներէդ մեղր կը կաթի, հոգեակ իմ հարս, մեղր ու կաթ կը ծորի լեզուէդ.

Շրթունքդ է շարպաթ (աշուղ՝ Ղազար Սեբաստացի).

Էլիզապէթը իր շրթներուն վրայ կը պահէր հայրենասիրական երգ մը.

Շրթունքները մարդուն կու տան դէմքի զգացական արտայայտութիւն.

Մենք բոլորս կախուած էինք դասախօսին շրթներէն.

Որովայն» բառին գործածությունը մեր լեզուի
դարձուածքներուն, առածներուն եւ ասացուածքներուն մէջ

Որովայնը թմփուկի ձայն ունի.

Վազգէնը իր որովայնին գերին է.

Ամերիկան բացաւ իր որովայնը եւ կուլ տուաւ բոլոր մարդիկը.

Այս դասարանին մէջ որովայնախօսներ շատ կան .

Խաչիկին որովայնը շատ բարձր է, իրմէ առաջ կ'երթայ.

Դասարանին մէջ յանկարծ որովայնափչիկ մը լսուեցաւ.

«Ուտք» բառին գործածությունը մեր լեզուի
դարձուածքներուն, առածներուն եւ ասացուածքներուն մէջ

Սատանան ուտքիս չփաթթուի.

Աստուած ձեռքէ ուտքէ չի ձգէ մարդս.

Ուտքդ կոտորուէր խրախճանքի չերթայիր աղջիկս.

Ուտքի՛, արքան կու գայ, ուտքի՛.

Ուտքով գլխով կ'աղաչեմ մայրի՛կ, ձգէ՛ որ մեկնիմ.

Երկու ուտքը չորս առած կը վազէ.

Հօրս ուտքը բարի էր, այն օրը, որ տունս ուտք կոխեց գործերս լաւացան.

Վեհափառին ուտքը բարի է.

Փառք Աստուծոյ, տակաւին հօրս ուտքը ձեռքը կը բռնէ, ընտանիքը

պահելու կարող է.

Մարգանքի պահուն ուտք բարձրացնել արտօնուած է.

Ուտքդ հասակէդ աւելի մի բարձրացներ.

Մի ուտը գերեզմանում է, էլի կանանցից ձեռք չի քաշում.

Դուն հօրդ յարգելու ես, հայրդ քու ուտքիդ պէտք չէ գայ.

Քու ուտքդ գացած տեղը, իմ գլուխս թող երթայ.

Սարգիսը մի քանի գիրք խնդրեց կարդալու, առաւ տարաւ, ուտքով-գլխով կերաւ.

Տղաս, ուտքերդ գետնին վրայ ապրիր, մի երեւակայեր.

Բոլորս ուտք դնելու ենք Հայաստանի մէջ.

Անոր դաւադիր ուտքերը զինք հասցուցին ձախողութեան.

Դատաւորը կու գայ, ուտքի՛.

Երթամ դիմեմ իշխանաւորին ուտքը, որ օրապահիկս ապահովէ.

Երանի այն օրուան երբ նորէն ուտք կը դնեմ Հայաստան.

Բանակը ոտք դրաւ քաղաքին մէջ.
 Ոտքդ շատ բարձր մի դներ, եղածդ գիտենք.
 Ոտքերուդ հինա՞ դրած ես, որ մեր տունը չգաս.
 Եղբայրս ոտքը տունէն դուրս դրաւ եւ անգամս ալ չեկաւ.
 Սրահին մէջ ոտք դնելիք տեղ չկար.
 Մայրս երկու ոտքերս մէկ ամանի մէջ դրաւ.
 Անոր կնոջ ոտքը միշտ դուրս է.
 Ժողովուրդը ոտքի ելաւ իշխանութեան դէմ.
 Վեց ամսու երեխան ոտքի ելաւ, քալեց.
 Իշխանութիւնը ոտքի ելաւ եւ սկսաւ գործել.
 Ոտքդ անկողինիդ չափ երկար է.
 Վերմակիդ չափով ոտքդ երկնցուր.
 Ոտքերդ երկարէ եւ երկար նստիր.
 Ոտքդ կարողութեանդ համաձայն երկարէ.
 Ես ոչ մէկի ոտքին չեմ երթար.
 Ոտքերս կ'երթան, գլուխս չ'երթար.
 Ես անոր ոտքով չեմ կրնար երթալ, իմ միջոցներս չեն ներեր.
 14 ժամ քալելէ ետք ոտքերս կ'եփին.
 Կարպիսը հօրը ոտքին եկաւ, անոր ոտքին փռշին համբուրեց, ներողութիւն խնդրեց.
 Հայրը տղուն ոտքին եկաւ, որ չհեռանայ, բայց ափսոս.
 Թուրքիան ոտքի ելած է, իր թոյներով կ'ապականէ Եւրոպան.
 Սարգիսը ձախողութենէ ետք ոտքի ելաւ եւ սկսաւ աշխատիլ.
 Ձեր տունը մեր տունէն երկու ոտք հեռու է.
 Հայաստան երկու ոտք տեղ է.
 Մայիս 28-ին ոտքի էր ամբողջ հայութիւնը.
 Ամբողջ օրը ոտքի էի, ոտքերուս ջուր իջաւ.

Ոտքերը դող ընկաւ երկրաշարժի օրերուն.
 Ո՞վ կրնայ քու ոտքդ այս տունէն դուրս դնել.
 Բարի մարդուն ոտքը թեթեւ է.
 Մարգիկին ոտքը թեթեւ է.
 Լեւոնը ոտքը թեթեւ հիւր-ճամբորդ է.
 Հայրս ոտքէ-ձեռքէ ինկած էր, չէր կրնար քալել.
 Հայրս ոտքէ ձեռքէ ինկաւ, բայց հոգեպէս փսաց բարձր.
 Մանչուկը մօրը ոտքերուն ինկած կ'աղաչէ որ պարտեզ երթայ.
 Այս լերան ոտքը շատ երկար է.
 Գնա վարպետիդ ոտքը լզէ, որ քեզի ետ գործի առնէ.
 Երբ անվստահ են՝ անոնք կը թաքցնեն իրենց խեղճ ոտքերը.
 Վեհափառին ոտքը խեր-լաւութիւն կը բերէ գաղութին.
 Ոտքդ խերով ըլլայ.
 Նրա ոտքում աւելի խելք կայ, քան քու գլխում.
 Անոր ոտքը ծանր է, միշտ չայցելէր մեր տունը.
 Յդի կնկան ոտքը ծանր է.
 Հարսին ոտքը ծանր է, տունէն դուրս չի գար.
 Առաջնորդին ոտքը ծանր է.
 Սարգիսը տղուն ոտքը կապեց, ամիս մը առաջ ամուսնացուց.
 Մեր տունը պզտիկ ըլլալով մէկը միւսին ոտքին կը կոխէր, մէկը միւսին աչքին
 փուշ կը դառնար.
 Հայկական բանակը ոտք կոխեց Արցախ.
 Փոքրիկը ոտք կոխեց եւ ուզածը ստացաւ.
 Մեւ ըլլար այն օրը, երբ Հայկանուշը ոտք կոխեց մեր տունը.
 Պանդուխտին ոտքերը հայրենիքէն կտրուած են.
 Ժօժօն շատ հոգնեցաւ, տքնեցաւ, վերջ ի վերջոյ ոտքի կրցաւ ելլել.

Տղան սրճարանէն ոտքը կտրեց.

Թոռնիկներու կը խնամեմ, ոտքս կապուած է, տունէն դուրս չեմ կրնար ելլել.

Սուրբ Կարապետ՝ խնկով մոմով ոտքդ կու գամ, դուն ինձ ազատես
այս փորձանքից.

Կաղ մարդուն մ'ի ծաղրեր, ոտքիդ կու գայ.

Ինչ որ ալ պատահի, ոտքի կանգնի՛ր, գլուխդ բարձրացու՛ր եւ առաջ գնա՛.

Խմբավարը յաջողեցաւ երգչախումբը ոտքի կանգնեցնել.

Հայր ու մայր կը փորձեն իրենց մէկ հատիկ տղուն ոտքը կապել.

Փեսան հարսին ոտքերը կապած է, իր ծնողքին չի կրնար այցելել.

Հիւանդին ոտքերը գետնէն կտրուած են.

Սանդուխին մէկ ոտքը կոտրած է.

Ոտքս կոտրէր, չ'երթայի.

Պատերազմի մէջ շատեր ոտքի կոխան եղան.

Աշխարհի վրայ շատ տեղեր կան ուր տակաւին մարդկութիւնը ոտք չէ կոխած.

Ոտք կոխեցինք որպէսզի թատրոն մտնենք.

Արմէնը իր հօրը տունը ոտք չի կոխեր.

Անոր ոտքին հասնող չկայ.

Քաջ մարդուն ոտքերը ամէն տեղ դիւրաւ կը հասնին.

Բժիշկը իր ջանքերով Սարգիսը ոտքի հանեց-կայնեցուց.

Ոտքին մէկը գերեզման հասած է ու տակաւին կը նուագէ.

Հօրդ ոտները մեկնի, դու խեղճ կը մսաս.

Մեր կազմակերպութիւնը ոտքէն մինչեւ գլուխ հոտած է.

Հինգ հազար ոտք հող առի կառավարութենէն.

Ես հասկցայ բայց... ոտքերս չեն հասկնար.

Սիրելի՛ս, ոտքիդ հողը դառնամ, այս անգամ լսէ զիս, մեր տան մէջ կռիւ մի ըներ.

«Քու խօսքդ իմ ոտքերուս ճրագ է, ու իմ շաւիղներուս՝ լոյս». (Սաղմոս 11).

Հայ ժողովուրդին մէկ ոտքը Հայաստան է եւ միւս ոտքը ` սփիւռք.
 Խեղճ մարդը երկու ոտքը մէկ կօշիկի մէջ դրաւ.
 Մէկ ոտքը աւելի լաւ է, քան երկու անթացուպերը.
 Ոտքէն մինչեւ գլուխ կարմիր հագած էր աղջիկը.
 Ոտքիդ մեռնիմ, այս անգամ ալ բեմ բարձրանամ.
 Ոտք ոտք նահանջեց թրքական բանակը.
 Բժիշկը մահճակալին ոտքի մօտ նստաւ եւ հիւանդին հետ խօսեցաւ.
 Սեղանի գլխուն նստաւ Առաջնորդը, իսկ ոտքին Տէրտէրը.
 Եհովայի վկաները Հայաստանի մէջ ոտք ունեցան.
 Մահճակալը, սեղանը, աթոռը չորս ոտք ունին.
 Ան երկու տարիէ ոտք չունի, անդամալոյծի պէս նստած է.
 Ջուրը ոտք չունի, տեղումը փալտով հոտում է.
 Ամէն մարդ իր ոտքի չափով ապրի.
 Չորս ոտք կօշիկ գնեցի թոռնիկիս.
 Հայ լեզուն ոտքի կը պահէ հայ ժողովուրդը.
 Թող մէկ ոտս պնդացնեմ, յետոյ քեզ ալ կ'աշխատիմ քովս բերել.
 Ոտքդ պագնեմ, մի ճար արա. Ոտքդ պագնեմ ճառ մը գտիր.
 Խեղճ կնկան ոտքերուն սեւ ջուր իջաւ երկար օրեր սպասելով տղուն վերադարձը.
 Ես անոր ոտքին ջուր դնեմ եւ խմեմ, առանց իրեն ես կորսուած եմ.
 Եթէ այս գործը յաջողցնես, ոտներդ ջուր կ'անեմ կը խմեմ.
 Կիրակոսը իր շահուն համար անվարան սահեցուց իր աներ ոտքը եւ չարիքներ
 հիւսեց անոր գլխուն.
 Ոտքդ թող սահի, բայց լեզուդ ` ոչ.
 Սուտին ոտքերը կարճ կ'ըլլան.
 Մենք մեր սեփական ոտքերով քալելու ենք, օտարին պէտք չէ ապաւինիլ.
 Բոլոր ծերերը ոտքի վրայ են տակաւին.

Սիրելիներ եկեք եղածը ոտքի տակ դնենք, մոռնանք, եւ անցեալի պէս լաւ
ընկերներ ըլլանք.

Վարպետը ոտքին տակ առաւ խեղճ գործաւորը.

Կիրակոսը ոտքին տակ առաւ իր հինգ տարեկան չարուկ զաւակը.

Ոտքիս տակէն հեռացիր մանչուկս.

Տրդատը ոտքերը տնկած կը դիտէ հեռատեսիլը.

Այս տղաքը հօրս ոտքի տակը քանդեցին, ան սնանկացաւ.

Բազմութեան մէջ փոքրիկը ոտքի տակ ժաւաց.

Լիլիին ոտքին տակ հաւկիթ կայ, տեղ չի հասնիր.

Ոտքիդ տակը հաւկի՞թ կայ, ինչո՞ւ դանդաղ կը քալես.

Մեր ոտքին տակի հողերը կորսնցուցինք ցեղասպանութեան պատճառով.

Հայրենիքի մէջ ոտքի տակի հողով հայ անհատը զօրաւոր կը զգայ.

Ոտքին տակ հող զգաց տղան, ոտքի ելաւ ու խօսեցաւ.

Ոտքիս տակ մի՛ գործեր-մի՛ նստիր.

Վարպետը Սարգիսին ոտքին տակ օճառ քսեց, որպէսզի Յակոբը
անոր տեղ գործի առնէ.

Վարպետը գործաւորին ոտքին տակ սառույց դրաւ.

Վարպետը գործաւորին ոտքին տակ ջուր դրաւ.

Վարպետը գործաւորին ոտքին տակ հաւկիթ դրաւ.

Ոտքիս տակէն ելի՛ր, աղջիկս.

Ես քու ոտքիդ տակի հողը չեմ, քու խաղերդ ուրիշի գլխուն խաղցիր.

Ձին այնպէս էր քշում, որ ոտների տակից կրակ էր թափում.

Ոտքիս տակէն կորսուիր անպիտան.

Նախագահը իր ոտքին տակ ամուր հող ունի, ժողովուրդը բան չի կրնար ընել.

Այս գործը վարպետին ոտքին տակէն սահեցուցի.

Ոտքիս տակ կը սատկեցնեմ եթէ չհնազանդիս.

Հայրենիքը թշնամիի ոտքին տակ փառք երկար տարիներ.
 Ոտքին տակ կրակ կը վառուէր, հոս ու հոն կը վազէր ու կ'աշխատէր.
 Ոտքիս տակ կրակ կը վառի, անկարող եմ տեղս փախ.
 Ծնողքը աղջկան պատիւը ոտքի տակ տուին.
 Տակաւին գործս անորոշ է, մէկ ոտքս տեղաւորելէ ետք ընտանիքս ալ կը բերեմ.
 Ան իմ ոտի տակը քանդեց, ինքը մէջը ընկաւ.
 Տիւմար մարդը ոտքին տակը չի տեսներ.
 Ան արդէն ծերացած է, ոտքին տակը չի տեսներ.
 Յակոբոսը ամբողջ աշխարհի ոտքի տակ տուաւ, իր կնկան նմանը չգտաւ.
 Փոխանակ միանալու եւ թշնամիին դիմադրելու, զինուորները ամեն
 օր ոտքի տակ կը փորեն.
 Դուն քու թշնամիդ չես գիտեր, ան է որ քու ոտքիդ տակը փորեց.
 Ես քու ոտքին տաք օճառ կը քսեմ, օտարը կը բերեմ.
 Ես քու ոտքովդ չեմ կարող քալել, ոտքի ոսկրաբոբէ կը տառապիմ.
 Հայրս ու մայրս երկու ոտքերս մէկ տոպրակի մէջ դրին, վազեցի որ
 իրենց ուզածը բերեմ.
 Տղան ոտքին տեղ շինեց նոր գործարանին մէջ.
 Քնչուններուն ոտքը տեղ չի բռներ.
 Ծոյլ Թորոսը ոտքը տնկած կը նստի, կուտ կ'ուտէ.
 Շաբաթներով ոտքը տունն է, դուրս չելլէր.
 Դրացիին կնկան ոտքը միշտ մեր տունն է.
 Կարո՞ղ ես խելագարին ոտքը մեր տունէն կտրել.
 Յաջորդ տարի տղաս չորս ոտքով տուն վերադարձաւ.
 Քայլարշաւի ընթացքին Նարեկը ոտքը փոխեց, ոտք մը ետ փառք.
 Կը յուսամ տղա՛ս, վերադարձիդ ոտքդ փորձութեան չի դախար.
 Սուտին ոտքերը կարճ են.

«Ուղեղ» բառին գործածությունը մեր լեզուի
դարձուածքներուն, առածներուն եւ ասացուածքներուն մէջ

Մարկոսին ուղեղը պայթեցաւ.

Ծոյլ ուղեղը անմիտներու գործատեղին է.

Ճակատ մեկնելէ առաջ հազարապետը զինուորներուն ուղեղները
լաւ մը լուաց.

Անուղեղ գլուխներ շատ կան այս օրերուս.

Դիւրին չէ այն աշխատանքը որուն համար անոնք ուղեղ կը մաշեցնեն.

Բաւական է խօսիս, ուղեղս տարիւր-ուղեղս լեցունեցաւ.

Ուսուցիչին ըսածները աշակերտներուն ուղեղներուն կամաց կամաց մտան.

Ուղեղդ լեցուր ա՛յ տղայ, շատ մի խաղար.

Ուղեղդ մաքրէ-լուայ բոլոր խօսակցութիւններէն.

Մինչեւ ուղն ու ծուծը մօրը կը նմանի.

Այս մէկը բարդ հարց է, ուղեղ հարկաւոր է լուծելու այս մէկը.

Բաւական է խօսիս, ուղեղս տարիւր.

Հայրի՛կ, ուղեղդ պարպէ՛, քնացի՛ր.

Մայրս ուղեղը պարտքի տուած է այսօր.

Հոգի՛ս, ուղեղդ մեծցու՛ր, բամբասանք ընողներ շատ են շուրջդ.

«Ուս» բառին գործածութիւնը մեր լեզուի
դարձուածքներուն, առածներուն եւ ասացուածքներուն մէջ

Կինը ամուսինին ուսերուն նստած է, իր ուզածը կ'իրականացնէ.

Քննութիւններս տուի, ուսերէս ծանր բեռ մի իջաւ.

Ուսերս թօթուեցի երբ այս չար տղան ինծի մօտեցաւ.

Ուսս կախ ձգած քննութենէն դուրս եկայ.

Հայրս ուսը վեր քաշեց եւ հանդիմանեց զիս.

Մեր ուսերուն գլուխ չկայ.

Տունդ քու ուսերուդ մօտ ամուսինիդ մահէն ետք.

Հօրը մահէն ետք տունը իր ուսերուն վրայ ինկաւ.

Գնդապետին ուսերէն ծանր բեռ մը իջաւ պատերազմի վերջաւորութեան.

Ուս ուսի տուած հայր եւ որդի կ'աշխատին.

Հարցուցին հայրիկդ երբ կու գայ՝ ուսերը թօթուեց.

Սարգիսին ըսին՝ եղբայրդ հարբած է գնա՝ օգնէ՛, ան ուսերը թօթուեց.

Այս կինը ուս թօթուելիք է.

Հարսը տղուն ուսերուն վրայ նստաւ.

Մենք չենք թողուր որ մեր հակառակորդը մեր ուսերուն նստի.

«Սիրտ» բառին գործածությունը մեր լեզուի դարձուածքներուն, առածներուն եւ ասացուածքներուն մէջ

Ուրիշին սիրտը կոտրելու պարագային յիշէ, որ կտորները կրնան քեզ ալ փսասել

Երբ ձեռքդ չի կրնար, սիրտդ պէտք է ողորմութիւն տայ

Մի դատեր մարդոց առանց ճանչնալու անոնց սիրտն ու զգացումները:

Բառերով ներելը հեշտ է, սրտով ներելը կարելոր է.

Հայրենի հողը ունի սիրտ ու ոգի.

Ազնաւորը ազնուական սիրտ մը ունէր.

Երբ որ արեւ կայ սրտիդ մէջ, ամէն տեղ գեղեցիկ կ'երեւի.

Աստուած մեր սիրտերուն մէջ դրկեց իր որդիին հոգին.

Սօս Սարգիսեանին սրտէն արիւն կը թափէր տեսնելով թատրոնին անկումը.

Ամէն մարդու սրտին մէջ առիւծ մը կը պահուի.

Երբ երկու սիրտ առանձնանան հարցերը կը լուծուին.

Սիրտս նոր աւիշ ստացաւ՝ աւելի նուիրուելու եւ գործելու.

Ինչո՞ւ հայ մայրեր կ'արտասուեն իրենց սրտերուն խորերէն.

Մօր սիրտը աղբիւրն է սիրոյ.

Իմ քաջալերանքով, Անին սիրտ առաւ եւ գնաց նշանածին, հոն սիրտը բացաւ.

Աղջիկը տղուն սիրտը առաւ ու գնաց, սիրտը կոտրեց.

Աղջիկը սիրտ առաւ, դարձեալ ժպտիլ սկսաւ ու ամօթխածօրէն մօտեցաւ տղուն.

Սիրտս կ'առնէ կու տայ, պաշտօնի վրայ պիտի փսա՞մ թէ ոչ.

Տիգրան հետս չէր խօսեր, իր սիրտը առնելու համար զիջեցայ եւ ես գացի քովը.

Հազար ու մէկ չար մտքեր կ'ալեկոծէին սիրտս.

Սիրտս կ'այրի ամէն անգամ, որ տեսնեմ կործանած Հալէպը.

Սիրտը ամբողջ է, պիտի գրաւես.

Փորձենք կոտրուած սիրտ մը ամոքել.
 Արցախի զինուորները ճակատեցան առիւծի սիրտով.
 Անգութ կինը անսիրտ է.
 Ապերախտ տղան անգութ սիրտ ունէր.
 Եղբայրներու միջեւ սիրտերը անկեղծ պէտք է ըլլան.
 Սիրտս անցաւ, շուտով նստեցայ.
 Մեր սպասաւորը սրտով հոգւով կ'աշխատի.
 Հայ ժողովուրդին սիրտը այրած է հայոց ցեղասպանութեան պատճառով.
 Հօրս ներկայութեան եղբայրս սիրտ առաւ եւ արտայայտուեցաւ.
 Հալէպի լուրերը լսելով մեր սիրտերը ալեկոծուեցան.
 Երբ Հալէպահայութեան փասաները լսեցինք մեր սիրտերը ահ ու դող եղան.
 Ազնիւ սիրտը սուտ չունի.
 Մարդ իր սրտով կ'ապրի, ոչ թէ մտքով.
 Եթէ սրտիդ մէջ արդարութիւն կայ, նկարագրիդ մէջ գեղեցկութիւն պիտի ըլլայ.
 Սիրտը արցունքներու նման անհակակշռելի է.
 Տանջանքով կ'ըլլան սրտերն աննկուն.
 Սիրտս բարկացած է այս օրուայ վատ լուրերէն.
 Մայրս սիրտը բացաւ հօրս առջեւ եւ խօսեցաւ.
 Սիրտս բացի եւ հրապարակաւ խօսեցայ.
 Ան՝ բարձրասիրտ մարդ է.
 Աշխատեցէք սիրելի տիկիններ՝ ը, որ ձեր սրտերը միայն ձեր ամուսիններուն
 համար բաբախէ եւ ոչ ուրիշներու.
 Սարօն սիրտը բացաւ ինծի, կը յարգէր զիս մեր առաջին հանդիպումէն ի վեր.
 Բոլորս բանալու ենք մեր սիրտը եւ գրպանը հայկական կրթական օճախներուն.
 Սիրվարդին սիրտը բերնին մէջն է, անկեղծ է.
 «Աղ ու հաց, սիրտը բաց».

Մօրը սիրտը բեկուած էր.

Մեր սիրտերը բացուելու են ճշմարտութեան, սիրոյ եւ յոյսի.

Բարի դէմքը յանձնարարագիր է, ինչպէս բարի սիրտը՝ վարկագիր.

Յարգէ հինը, բաց սիրտդ նորին հանդէպ.

Յիմարին սիրտը իր բերնին մէջ է, իսկ իմաստունին բերանը՝ իր սրտին.

Դիւանագետին սիրտը իր գլխուն մէջ պէտք է ըլլայ.

Իրական գանձդ այն է միայն, որ կը կրես սրտիդ մէջ.

Տղան գրաւեց աղջկան սիրտը.

Կրթութիւնը՝ ուղեղի, դաստիարակութիւնը՝ սրտի դայեակներ են.

Գեղեցկութիւնը գեղեցիկ դէմք ունենալուն մէջ չէ, այլ՝ գեղեցիկ միտք, գեղեցիկ
սիրտ եւ գեղեցիկ հոգի.

Գեղեցկութիւնը դէմքի վրայ չէ, աղ լոյսն է սրտի մէջ (խալիլ Ճըպրան).

Գրաւեցիր սիրտս, հոգեակ իմ հարս, սիրտս գրաւեցիր մէկ նայուածքով, վզիդ
շնորհալի մէկ շարժումով. (Երգ երգոց գիրքէն)

Բանախօսը ժողովուրդին սիրտն ու միտքը գրաւեց.

Ան գոռոզասիրտ էակ մըն է.

Ամբողջ սրտովս գացի Հայաստան եւ Արցախ.

Անուշիկ Սեդան Հրաչին սիրտը գրաւեց.

Տղան իր սիրահարին սիրտը գողցաւ.

Ղեկավարը սրտով, հոգւով եւ մտքով կը գործէ.

Յակոբին սիրտը չարութիւն չի գիտեր.

Հօրս մահով մօրս սրտին վրայ քար դրուեցաւ.

Արցախի հայ զինուորներուն նահատակութեան լուրը լսելով սիրտս դող եկաւ.

Սիրտը դուռ չի, որ թակես ու ներս մտնես.

Սիրտս դող ելած առաջին նամակս գրեցի Էլիզապէթին.

Սիրտս վեր ելաւ Հայաստանի երկրաշարժով.

Մէկ սրտի մէջ երկու սէր չի կրնար ըլլալ. (Գոհար)
Սիրտ ըրի որպէսզի օգտակար ըլլամ դրացիին.
Սիրտս կ'ըսէ որ, մեր փեսացուն լաւ տղայ է.
Խօսքը սրտիդ թարգմանն է.
Էլիզապէթին ձայնը սրտիս թափանցած էր առաջին օրէն.
Լեւոնը սիրտը թունդ ելած երգեց հայրենասիրական երգ մը.
Սիրտս թունդ ելաւ երբ Ֆլորիտայի ժաւանները լսեցի.
Սիրտ մի թափեր, դժուար որ հասկնայ այս մարդը.
Սիրտս թուզի հունտի մէջն է.
Աշխէնը թուլասիրտ կին մըն է.
Աղջիկը Աբօյին սիրտը թունաւորեց.
Թոյլ չքէ պարպուած սիրտը նման է կայմէ զուրկ առագաստի.
Սրբազա՛ն, յնպէս սորվեցուր մեզի մեր օրերը համրել, որ սրտի իմաստութիւն
Ստանանք.
Սրտէ ի սիրտ ճանապարհ կայ.
Մօր մը սիրտը միշտ լայն է, բոլոր զաւակներուն կը հասնի.
Սուրիոյ պատերազմին հալէպահայութեան սիրտը արիւն լացաւ.
Նահատակ զինուորին մայրը ամբողջ սրտով կու լայր.
Պատահած է՝ սիրտդ լցվում ու չի լալիս ժամանակին. (Համօ Սահյան).
Սրտիս լեզուն ինչո՞վ փակեմ.
Մօր լքուած սրտի կարօտը շարունակ կը փնտռէ իր պանդուխտ զաւակը.
Կոմիտասը լսելու ենք ոչ միայն ականջով, այլ նաեւ սիրտով.
Սիրտս լեցուած այս օրուայ վիճաբանութենէն, որոշեցի չխօսիլ բնաւ.
Եթէ կասկածը կը պաշարէ ձեզ, լսեցէք ձեր սիրտը.
Խենթին սիրտը լեզուին վրայ է, խելացիին լեզուն՝ սրտին վրայ.
Մարդ առաջին անգամ կը մեռնի, երբ կորսնցնէ իր սրտին խանդավառութիւնը.

Տարեցը պէտք է ունենայ սրտի խոհեմություն, խօսքի քաղցրություն եւ դեմքի
լրջություն

Հայոց ցեղասպանութեան վերապրողները սրտի խորքից պատմեցին ամէն բան.

Սիրտս խառնուեցաւ եւ ականջներս խարտոցուեցան, երանի չլսէի այս
երգահանդէսը.

Սարինը սիրտը խոցուած բաժնուեցաւ Կարէնէն.

Անոր խօսքը թափանցեց տղուն սրտին խորքը.

Պէյրութը սրտի խօսող շատ բան ունի, պէտք է անպայման այցելենք.

Կարպիսին ի խորոց սրտի խօսքը բոլորիս յուզեց եւ ապշեցուց.

Սիրտդ խրատի տուր, իսկ ականջներդ՝ գիտութեան.

Սրտի խլություն եւ կուրություն լաւ յատկանիշներ չեն.

Բոլորիս սրտին խորքը կայ անմոռանալի Հալէպի յիշատակները.

Լուսինը խոնարհասիրտ օրիորդ մըն է.

Տղան խորհրդաւոր սիրտը բացաւ ոսկի սիրտ աղջկան.

Բանախօսը սրտով հոգիով կը խօսէր.

Սիրտէս պիտի խօսիմ այսօր, մտիկ ըրէք.

Սրտիս վրայ շատ ծանրացաւ անոր յանդիմանությունները.

Մեծ գործերը յաջողցնելու համար երեք բան պէտք է, սառ գլուխ, կրակէ սիրտ մը եւ
երկաթէ բազուկ մը.

Մայրեր ունին կակուղ, ջերմ եւ լայն սիրտ.

Երգահանդէսը շատ յաջող էր, ունկնդիրներուն սիրտը չէր կշտացած.

Գիրքերուս շնորհանդէսին սրտի խօսքս յայտնեցի.

Մօրս սիրտը կտտրած էր մեծ մօրս մահէն ետք.

Սիրտ կտտրելը դիւրին է՝ շինելն է դժուար.

Մօր սիրտը կտոր կտոր եղաւ երբ լսեց իր զաւկին նահատակությունը.

Ներկաներուն սիրտը կարդացի.

Ան սիրտս կոտրեց եւ բաժնուեցաւ.

Երգչուհին սիրտս կոտրեց եւ ուզած երգս չերգեց.

Շատ կը հանդիպիմ դժբախտներու, սիրտս կտոր-կտոր կ'ըլլայ, սիրտս կը
մաշի-կը հալի.

Մօրս սիրտը կտոր կտոր եղաւ երբ լսեց քրոջը հիւանդանալը.

Լաւ է որ աչքդ կոյր ըլլայ, քան սիրտդ.

«Ամէն ինչ կարելի է շտկել կպցնել, բացի մարդու կոտորուած սրտից» (Յ. Շիրազ)

Ան կամաւոր սրտի խլութիւն ունէր.

Կիներուն սիրտը մերթ պողպատ կ'ըլլայ, մերթ մոմ.

Կնոջ ամենէն գեղեցիկ շնորհները իր մտքին մէջ չեն, այլ՝ սրտին.

Կինը մարդկութեան սիրտն է, իսկ այրը՝ միտքը.

Ամէն կնոջ սրտին տակ դարակ մը լեցուն սիրոյ գաղտնիքներ կան.

Հպարտութիւն, նախանձ եւ արծաթասիրտութիւն սրտի երեք կայծերն են.

Կիները աւելի լաւ կը կարդան այր մարդոց սիրտը.

Աչքը կը տեսնէ,՝ սիրտը կրակ կ'առնէ.

Հարուստ սիրտով մարդը հեգութիւն կը բուրէ.

Թումանեանի սիրտը արդէն համակուած էր ազգի վիշտով եւ ազատատենչ
գաղափարներով.

Սիրտս կը հալի երբ տեսնեմ Արարատը.

Անսիրտ դատաւորին սիրտը հրահրեցի, ան արտաբաց մօտեցաւ եւ
սիրտ սրտի խօսեցանք.

Հողագործին սիրտը իր կնկան համար չէր, այլ իր արտերուն եւ հունձքին.

Ամէն հայու սիրտը հրազինուելու է, Վեհափառին խրոխտ պատգամովը.

Ուսուցիչը ամէն օր սիրտ կը հատցնէ որպէսզի աշակերտները լաւ հասկնան.

Թոռնիկս սրտիս հատորն է.

Առանց հարուստ սրտի, հարուստը տգեղ մուրացկան մըն է.

Մօր սիրտը երեխային հանգստարանն է.
Այն ինչ որ հօր ուղեղին կը հասնի, կը հասնի մօր սրտին.
Կնկան սիրտը ճմլուած էր իր աղջկան մահով.
Մաքրեցէք ձեր սրտերը նենգութենէ եւ ատելութենէ.
Սրտին փաստը աւելի հզօր է, քան մտքին ապացոյցը.
Մոնթրէալահայութիւնը իր սրտի ձայնը բարձրացուց հայոց ցեղասպանութեան
100-ամեակին.

Տղա՛ս, ըրէ՛ այնպէս բաներ, սիրտդ մաքուր կը դարձնեն.
Պահիր Հայոց լեզուն սրտիդ մօտիկ.
Սիրտս կը մաշի երբ տեսնեմ Հայաստանի դաւաճան դեկավարները.
Մշուշ կ'իջնէ սրտիս վրայ ամէն անգամ երբ այդ դաւաճանը տեսնեմ.
Ջուրին դէմ թի մի քաշեր, զուր տեղը սիրտ մի մաշեր.
Սիրտս մաքառեցաւ, քաջաբար դիմադրեց, որ շարունակեմ գրել.
Մօրը սիրտը հալեցաւ-մաշեցաւ, տղան իր խօսքը մտիկ չըրաւ.
Սփիւռք եւ Հայաստան գործելու են որպէս մէկ սիրտ եւ մէկ հոգի.
Երկրորդ ամուսնութիւնը ոմանց համար այրած սրտի մխիթարութիւն է.
Էլիզապէթը սիրտս մտաւ մեր առաջին հանդիպումին. ան սիրտս վառեց.
Տիկի՛ն սիրտ մի մաշեցներ, դժուար որ ըմբռնէ ասմուսինդ.
Վեհանձն մարդը մեծասիրտ է.

Խոնարհութիւնը սրտի մեծութեան նշան է.
Մենաւոր իմ սիրտ, մոլորուած թռչուն, կարօտիդ կանչը չի հասնի նրան.(Վ. Տէրեան)
Չարն ալ, բարին ալ քու սրտիդ մէջն են.

Աստուած միայն բարի սիրտերու մէջ կ'ապրի.
Մեր իսկական գերեզմանը հողին մէջ չէ, այլ՝ մարդոց սրտին մէջ.
Ուրախ սիրտը դեղի չափ օգտակար է, իսկ կոտրած սիրտը ոսկորները կը չորցնէ.
Տղան մաքուր սիրտով մօտեցաւ զգայուն սիրտով աղջկան.,

Խաչիկը մեծ սիրտ հասուն մարդ մըն է.
 Մաքուր եւ անկեղծ սրտով մարդը կրնայ միշտ ժպտալ.
 Բարի մարդուն լոյսը մարե, սիրտը երբեք չի մթներ.
 Խոնարհությունը սրտի մեծությունն է.
 Մօր սիրտը հրաշքներու անսպառ աղբիւր է.
 Սիրտս յիշեցուց, որ Էլիզապէթը շատ կը սիրէ զիս.
 Սիրտերու տօնին օրը, սիրտս յեղափոխութիւն հռչակեց.
 Նախանձը թոյն է սրտին համար.
 Մարկոյին նուիրատուութեան ոգին յանկարծ սիրտէն ներս արձագանգեց.
 Բառերով ներելը հաւասար է չներելուն,սրտով պէտք է ներել.
 Թեթեւ միտքը կը մոռնայ, վեհանձն սիրտը կը ներէ.
 Հօրս սիրտը նուիրուած էր մեր ընտանիքին բոլոր.
 Նախանձոտ կինը նեղսիրտ է.
 Տղան աղջկան սիրտը շահեցաւ.
 Մօրս սիրտը շինեցի, որպէսզի երթայ եւ Էլիզապէթին ձեռքը խնդրէ.
 Վրէժին սիրտը շարժեցաւ, օգնութեան հասաւ իր մօրը.
 Ուրախ սիրտը դեղի պէս օգտակար է.
 Սիրտս ուզեց, որ Վրէժին հետ անտառ երթանք.
 Սիրտ ունեցիր եւ դիմացիր, Հալէպի դժբախտութիւնները տեսնելով.
 Արին սիրտ ու աչք ունի Սօսէին վրայ.
 Հիւանդին սիրտը գինի կ'ուզէ իբրեւ դեղ.
 Կիկօն հասուն երիտասարդ է, սիրտը աղջիկ կ'ուզէ.
 Ան սիրտ չունէր որ երթար.
 Սիրտ չունիմ դպրոց երթալու.
 Եթէ սիրտ ունիս գնա եւ խօսիր.
 Մօրս սիրտը ուզեց հայ կեդրոն այցելել.

Սրտիս կրակէն չորացայ.
 Լեզուն արդար, սիրտը չար.
 Մեր դրացիին քաղցր լեզուին տակ չար սիրտ մը կը գործէ օրն ի օրն.
 Երիտասարդը պէտք է ունենայ սրտի պարզութիւն, բերնի լռութիւն
 եւ դէմքի ամօթխածութիւն.
 Պաղարիւն խաժակը պաղ սիրտ մարդ մըն էր.
 Հայր ու տղայ սիրտ սրտի խօսեցան.
 Սիրտս սիրեց խեղճուկ մանչուկը:
 Սիրտս սիրեց արցունքոտ աչքով ծերունին.
 Սրտի սիրած, Աստուծոյ օրհնած.
 Սրտով սիրած եար լինի, թող մի քիչ էլ չար լինի.
 Հայ տղան սիրոյ սիրտով մօտեցաւ հայ աղջկան.
 Կարմրելու ունակ մարդիկ չեն կարող սէւ սիրտ ունենալ.
 Անվախ մարդը սրտոտ կ'ըլլայ.
 Ռուբէնը սրտառուչ ճառ մը խօսեցաւ.
 Աշակերտները սրտատրոփ դպրոցէն դուրս եկան հրդեհի պատճառով.
 Ճակատէն վերադարձող զինուորը սրտակտուր-սրտաբորբոք տեղեկութիւններ
 փոխանցեց եւ սրտաբեկ խօսեցաւ.
 Սիրականը սրտով սիրած եար մը ունէր՝ Սիրունը.
 Սիրտը սփրոց չէ, որ ամէն մարդու առջեւ բանաս.
 Սրտակից ընկեր, լսէ՛ իմ պատգամը.
 Ատուած իմ, քու սրտիդ պէս սիրտ տուր մեզի, որ կարողանանք քեզ պէս ներել,
 համբերել ու անվերջ սիրել.
 Լիբանանահայութիւնը սփիւռքահայութեան սիրտն է.
 Սիրտը վառած էշը, աւելի արագ կը վազէ.
 Սիրտս վկայեց որ ընկերս՝ Յակոբը ճշմարտախօս է.

Նիւթապաշտ նկատուեմները յաճախ մարդուն սրտէն կը վտարեն Աստուծոյ
մտածումը.

Հեռու մնացիր վատ սիրտով մարդոցմէ.

Հայ որբերուն սիրտը վիշտով լեցուն էր.

Ո՛վ տէր, տուր ինծի վճիտ սիրտ մը.

Փլատակ տունը կարելի է վերականգնել, բայց վիրաւորուած սիրտը՝ ոչ.

Սօսէն սիրտը վեր ելլելով, մայրը կը փնտռէր.

Զքաւոր մարդը վեհ սիրտ մը ունէր.

Վա՛յ այն սիրտերուն, որոնց մէջ արքայական պալատներ չկան. (Ռ.Զարդարեան)

Վա՛յ այն սիրտերուն, որոնց մէջ չկայ ո՛չ գահ, ո՛չ մեծութիւն, ոչ փառքի
պատուանդան. (Ռ. Զարդարեան).

Կ'աղաչեմ սիրելիս, սրտիդ վերքը ցոյց տուր ինձ.

Սիրտը այն տակառն է լանջքին տակ, ուր բարիքն ու աղօթքը հոն կը հանգչին.

Նախանձը տկար սիրտերու տենդ մըն է.

Մօր սիրտը տխուր էր իր գաւկին մեկնումով.

Մեր սեփական մէկ գործին համար պէտք պիտի ունենանք տաքուկ սրտով մարդոց եւ
ոչ թէ պաղ ու անդրդուելի մահկանացուներու.

Հարս ու փեսայ իրար սիրտ տալով կ'աշխատին իրենց ապրուստը ապահովել.

Անոնք միշտ իրար սիրտ կու տան.

Մօրս սրտին մէկ անկիւնը մեծ տեղ ունէր իր հարսը.

Ֆիզիքապէս տկար տղուն սիրտ տուի որպէսզի վազէ եւ ցատկէ.

Էլիզապէթին սիրտ տուի որ երգէ.

Սիրտդ մի տար այն այր մարդուն, որ բազում սիրահարներ ունեցած է.

Տաքարին զինուորը տաք սրտով ճակատ գնաց.

Պարգելը յափշտակեց Հոփսիսիմէին փափուկ սիրտը.

Մօրս սիրտը փշրուեցաւ երբ տեսաւ եղբօրը մահը.

Սիրտեղ փխածը տուր հայրենիքի վերաշինութեան, սիրելի՛ հայրենակից.

Սիրտեղ փխածը ըսէ՛, մի վախնար.

Մօր մը սրտէն փխած սէրը յաւիտենական է.

Հրդեհը տեսնելուս սիրտս փրթաւ.

Աղջկան սիրտը փշուր-փշուր եղաւ, երբ իմացաւ որ նշանածը չէր սիրեր զինք.

Հայ մօր սիրտը միշտ փխրուն է.

Անգութ մարդը քարսիրտ է.

Հայ զինուորը քար սիրտ կռուեցաւ թշնամիին դէմ.

Կամաւոր սիրտով օգնելու ենք տկարին.

Ելած սիրտը, վարար գետը, մէկ է:

Ամէն մարդ աշխարհը իր սրտին պէս գիտէ.

Սիրտս լայն է, ձեռքս կարճ.

Սեւ սիրտ, սպիտակ ատամ.

Ո՞վ կրնայ սիրտ տաքցնող խարոյկ վառել.

Բարեկամ կայ սրտի, բարեկամ կայ փորի.

Սրտի ուզածը սիրուն կ'ըլլայ.

Բանը կը հանէ սրտի գամը.

Քրիստոս ունէր փայտէ խաչ, բայց ոսկիէ սիրտ: Այժմ մարդիկ ունին ոսկիէ խաչ, բայց փայտէ սիրտ:

Վառենք մեր սիրտը հիներու բոցէն. (Բազմավէպ)

Թշնամին այլեւս սիրտ չունի մեր վրայ յարձակելու, անոր ատամները լաւ թափեցինք.

Ծովից խորունկ սէր սգացի, երբ մայրիկիս սիրտը մտայ. (Շիրազ)

Մօր սրտում Աստուած քնած՝ լոկ մօր սրտի մէջ է զարթնում. (Շիրազ)

Մօր սրտում է Աստուած դրել, սրբութիւնը ողջ աշխարհիս. (Շիրազ)

Մայր իմ մի ծիլ տուր քո բարի սրտից, աշխարհի դառն ծառը պատուաստեմ (Շիրազ).

«Վիզ» բառին գործածությունը մեր լեզուի
դարձուածքներուն, առածներուն եւ ասացուածքներուն մէջ

Ճաշկերոյթի ծախսը ես վիզս կ'առնեմ.

Եթէ վիզիդ ետեւը տեսնես ուզածդ կ'ունենաս.

Վիզիդ ետեւը կը տեսնես, հարսանիքի երթալ չես տեսներ.

Ժողովուրդը համարձակեցաւ չարերուն դէմ վիզ բարձրացնել.

Հայ ժողովուրդը վիզը բարձրացուց, շնչեց ազատութիւնը, դարցաւ սիգավիզ:???

Չեմ ուզեր եղբօրս վիզին բեռ դառնալ, անոր հոգերը շատ են.

Բոլոր ազգականներուն հոգը Սարգիսին վիզին բեռնուած է.

Հայրս երկայնավիզ կօշիկ գնեց եղբօրս.

Կարճահասակ Սեդրակը վիզը երկարելով ամբոխին խօսեցաւ.

Երկարահասակ Սարգիսին վիզը ընձուղտի վիզին կը նմանի.

Հայերս ուզեր ենք ինքնավիզ ըլլալ.

Գաղթական Մկօն վիզը ծուռ հլու հնազանդ կ'աշխատի վաշխառու Միքայէլին քով.

Ան ոչ ոքի առջեւ վիզ չի ծռեր.

Ան չքաւոր եւ հպարտ է, վիզը չի ծռեր որ օգնութեան խաչի գրասենեակը երթայ.

Ինչու՞ վիզդ ծռեր ես, մի՛ յուսահատիր, ձախողութիւնը կու գայ ու կ'երթայ.

Ընկճուած մարդուն վիզը ծուռ կ'ըլլայ.

Ամուսինը մեռաւ, խեղճ կինը առանձին վիզը ծուռ փսաց.

Անտէր ու անօթի տղան վիզը ծուռ կը քալէր մթութեան մէջ.

Պատերազմի պարտուողները վիզերնին ծուռ վերադարձան տուն.

Երեւանէն կարապնավիզ սափոր մը գնեցի.

Մկօյին վարպետը փորձեց անոր վիզը կոտրել.

Պատերազմի պատճառով շատերուն վիզերը հաստցան.

Կիկոյին վիզը պատերազմի ընթացքին բաւական հաստցած է, հարստացած է.

Այս գործին ձեռնարկելէ ետք Զոհրապին վիզը շատ հաստցած է.

Վաչէն նախարար ըլլալէ ետք վիզը հաստաբուն եղած է.

Անոր վիզը օր մը ձեռքս անպայման պիտի անցնի.

Սարգիսը մօտեցող երիտասարդուհիին վիզին նետուեցաւ ու համբուրեց.

Կինը ամուսնոյն վիզը նստած ուզածը կ'ընէ.

Պարտատէրերը մարդուն վիզին չոքեր են դրամ կ'ուզեն.

Դիմացս ելաւ վիզը չորցած ծերուկ մը.

Կիկոն ջայլամի վիզ ունի.

Վարդան անյայտացաւ, մեղքը սպաննողի վիզին.

Վիզը տանձի կոթ դարձած է.

Մեր գործած ակամայ եւ կամ կամաւոր մեղքերը վերջ ի վերջոյ կը փաթթուին մեր
վիզը.

Թէ Աստուած չօգնէ, վիզ ծռելը զուր բան է.

«Փոր» բառին գործածութիւնը մեր լեզուի
դարձուածքներուն, առածներուն եւ ասացուածքներուն մէջ

Աղջի՛կս, սատանան փոր՞դ մտած է:
Փորի ապստամբութիւնը ուրիշ բանի չի նմանիր.
Կարօյին փորը իրմէ առաջ կը վազէ.
Ամէն մարդ իր փորին համար կ'աշխատի.
Այդ մարդիկը քեզի համար չեն աշխատիր, այլ իրենց փորին համար.
Վիզէնին փորը բերնին հասած է (շատ գիրցած է).
Կարօն իր փորին գերին է.
Շատակերը փորին գերին դարձած է.
Փո՞ր է թէ հոր, այդքան ուտել կ'ըլլա՞յ.
Տղուն գործը շատ լաւ է, փորը իւղոտած է.
Եղուարդին փորը իւղոտած է, մեզ մարդու տեղ չի դներ.
Նաւուն փորը լեցուն է տեսակաւոր ապրանքներով.
Ջուր շատ խմեցի, հաց շատ քիչ, փորս խաբեցի.
Հայ զինուորը թշնամի զինուորին փորը ծուխով լեցուց.
Մարտիրոսը անհամբեր է, փորը կրակ ինկած է.
Հարուստին փորը կուշտ է.
Գիրք գրելը փոր չի կշտացներ.
Այդ քու ուսումդ փոր չի կշտացներ.
Փորս կակուղ է, բանջարեղէն շատ կ'ուտեմ.
150 քիլօ կշռող Կիկոսը փորը կղպեց եւ քնացաւ.
Միփանը փորը այնչափ հարստացուց որ անկողին ինկաւ.
Զաւէնը փորին համը գիտէ.

Սարոյին փորը կատու մտաւ, երբ լսեց գործաւորներուն գործադուլը.

Սատանան չար տղուն փորը մտած է.

Տիկի՛ն, այդ ուրախութիւնդ փորդ թող մսայ.

Այդ ուրախութիւնդ փորդ թող մսայ (անէծք.)

Տղուն ուրախութիւնը փորը մսաց, սիրուհին հեռացաւ .

Ծերուկը հացին փորը ուզեց ուտել (ակռայ չունէր).

Նիհար Սրբուկը փոր չունի.

Շատակեր Սարգիսին փորը պիտի պայթի.

Փորս պինդ է, ջուր շատ չեմ խմած.

Փորս կը սուլէ, ծաղկակաղամբ կերած եմ.

Այս որ լսեցի փորս վախ ինկաւ.

Փորս վազեց երբ համով հոտով կերակուր տեսայ.

Տէրտէրին փորը իրմէ առաջ կը վազէ

Սիրանին փորը թմբուկի ձայն կու տայ.

Միհրանին փորը քիչ մը տաքցած է, նիւթական վիճակը բարելաւման մէջ է.

Հպարտ Սաղօն փորը տնկած կը քալէ.

Պատը փոր տուած է, կրնայ փլիլ.

Սար ու ձոր, տէրտէրի փոր.

Տիրուկին փորին ցաւը հասկցայ, ամուսնանալ կ'ուզէ.

Հիւանդին փորը աղբիւրի պէս կը քշէ.

«Քիթ» բառին գործածութիւնը մեր լեզուի դարձուածքներուն, առածներուն եւ ասացուածքներուն մէջ

Տիգրանէն նուէր ուզե՞լ, անկարելի բան է. ան իր քիթի աճառը կ'ուտէ, որ
չանօթենայ.

Շատ մը երիտասարդներ իրենց քիթէն անդին չեն տեսներ, սխալ որոշում
կ'առնեն.

Քիթը բարձր-վեր մարդ է մեր տանտէրը.

Միհրանին քիթը շատ բարձրացած է, բարեւ կու տաս բարեւոյ չառնէր.

Տղան քիթը բերանը ծռեց եւ հեռացաւ տունէն.

Անպիտա՛ն, հեռացիր առջեւէս, քիթդ բերանդ մէկ կտոր կ'ընեն.

Տղուն քիթէն բերնէն եկաւ, հայրը չընդունեց անոր նշանածը.

Տէրտէրը սարկաւազին քիթին բուրվառ կ'ընէ, գիտնալով անոր տկար կողմը.

Քիթէն բռնես հոգին դուրս կու գար, ան խեղճ-նիհար մարդ մըն է.

Անհնազանդ տղուն քիթը բերանը մէկ ըրի.

Քիթէն բռնես հոգին կ'ելլէ- շունչը կը փչի.

Այսօր չարաճճի պզտիկները ուսուցչուհիին քիթէն բերին.

Սարգիս Մեծքիթեանին քիթը գլուխէն առաջ կը վազէ.

Նախկին վարչապետին քիթը գետին քսուեցաւ, ընտրութիւններուն ձախողեցաւ.

Սարգիսը քիթին չորաւ ընկերներուն բերած նուէրը.

Գրիգորին պաշտօն առաջարկեցի, քիթին չորաւ ձգեց ու գնաց.

Այսօրուայ դժուար քննութենէն ետք տղուն հոգին քիթէն դուրս ելաւ.

Խեղճ մարդուն ուրախութիւնը քիթէն եկաւ տեսնելով զաւկին վիրաւորուիլը.

Ներսէսը շքանշան ստանալէ ետք, քիթը երկինք տնկած կը քալէ.

Վարպետը գործաւորին սխալը տեսնելով քիթ մը ըրաւ.

Քիթէն ինկողը հագար կտոր կ'ըլլայ.

Աշակերտը ձախողելէ ետք պատմութեան նիւթին մէջ քիթը ինկած դուրս եկաւ.

Ան հօրը քիթէն ինկած է, հօրը շատ կը նմանի.

Աշակերտները ուսոցիչին քիթին խնդալով քննութեան ընթացքին
իրարմէ ընդօրինակեցին.

Սահակը քիթը միշտ ամէն տեղ կը խոթէ, ուր անձնական շահ կը տեսնէ.

Օննիկը քիթին ծայրոճս իսկ դասերուն չի դպնար.

Աբգարը շարունակ ընկերներուն քիթին կը ծիծաղէր.

Սարգիսը քիթը կախեց ու հեռացաւ, երբ ընկերները զինք ձեռք առին.

Ամբարտաւան մարդուն քիթը վերջ ի վերջոյ կոտրեցի.

Թէյամանին քիթը ո՞վ կոտրէր է.

Անտէր մարդը քիթը կախ կը քալէր փողոցը.

Մայրս հազիւ եղբօրս ձախողութիւնը լսեց, քիթը կախեց ու նստաւ.

Ինչո՞ւ քիթդ կախեցիր, ուզածդ չեղա՞ւ.

Տարօնը կարծես հօրը քիթէն կախուած է.

Աշխէնին քիթը հոտառու է.

Ոչ հեռատես մարդը քիթէն հեռու չի տեսներ.

Քիթս հոտ առաւ որ մայրս հիւանդացած է.

Մեծ Մօրութեանը քիթով հրեց իրեն ներկայացուած աղջիկը.

Առաջնորդը թաղականներուն քիթը ճգմեց, առանց անոնց գիտակցութեան
նոր նշանակումներ կատարեց.

Երբ ուրիշը իր քիթը մեր գործերուն մէջ կը մտցնէ կը զարմանանք.

Յոգսանը քիթը մեծին մէկն է.

Արթօյին հակառակորդը ըսաւ՝ սպասէ օր մը քու քիթիդ կը մխամ.

Ի՞նչ եկեր էս քիթս կը մտնես, քիչ մը հեռու կայնիր.

Շատ բծախնդիր մարդը քիթի մագ կը դառնայ.

Այն օրէն որ Սեդրակ մեր փեսան եղաւ, քիթը մեծցաւ՝ նոյնիսկ բարեւ չի տար.

Մեր տնօրէնը քիթին մէջէն կը խօսի, ըսածներուն մեծ մասը չեմ հասկնար.

Հայկական քիթը յատկանշական է.

Այս չար տղան քիթէն բռնելու եւ եւ նետելու եւ.

Յակոբին քիթը Երուսաղէմէն ջուր կը խմէ (հպարտ է).

Տղան անպատուաբեր խօսքեր ըսաւ աղջկան հասցէին, սակայն անոր քիթը
ջարդուեցաւ.

Յակոբին քիթը շատ վեր է, գոռոզ եւ մեծամիտ դարձած է.

«Եթէ ուզում ես վրէժ լուծել, Թուրքերի քթի տակ ստեղծիր ուժեղ, բարեկեցիկ, օրինապահ երկիր, որտեղից մարդ չուզենայ հեռանալ...» (Պերճ Զէյթունցեան)

Արամը քթին տակ մեծ հարստութիւն դիզած է.

Օրիորդ Աստղիկը քիթին տակէն կը խօսի.

Տղա՛ս, աղբիւրը քիթիդ տակն է, գնա՛ եւ ջուր բեր.

Կարապետին քիթը ցեխէն դուրս ելաւ.

Հազիւ ճաշարան մտայ քիթս փրթաւ, գարշելի հոտեր կը պատէր ճաշարանը.

Ծերուկը այնչափ քիթը փորեց որ մեծածաւալ արիւնահոսութիւն ունեցաւ.

Դասարանին մէջ աշակերտները քիթ քիթի տուած կը խօսէին.

Երեսփոխանական ընտրութիւններէն ետք Սողոմոնին քիթը գետին քսուեցաւ.

Երանի դուն քու քիթդ խառնես, քան թէ քիթդ ուրիշին գործին խառնես:

Հիմայ անոնց քիթը ինկած է կարելի է խօսիլ անոնց հետ.

«Քրտինք» բառին գործածությունը մեր լեզուի
դարձուածքներուն, առածներուն եւ ասացուածքներուն մէջ

Բանուորը կրակին առջեւ կ'աշխատէր, քրտինքը կալած էր աչքերը.

Ամառ էր, պատարագիչ տէրտէրը քրտինքի մէջ կը լողար.

Ան քրտինքը երեսին անդադար կ'աշխատէր, որպէսզի հոգար ընտանիքին
պէտքերը.

Թոռնիկս, ճորճը բժշկական քննութեան ընթացքին քիչ մը քրտինք թափեց.

Պաղ օրերուն մեր տան ապակիները քրտինք կը կապէն.

Գործաւորները արիւն քրտինքի մէջ փափին.

Շատ քրտինք թափեցի մեր պարտէզը գեղեցկացնելու համար.

Ինչպէս կ'ուզես ծախսէ, քու ճակտի քրտինքով վաստկած ես հարստութիւնդ.

Ճակտի քրտինքով գնեցի այս տունը.

Քրտինքը աշխատանքի նշան է.

Քրտինքը առողջութեան նշան է.

Ջղային աղջկան ափերէն քրտինք կը հոսէր.


Հայ հողագործը հողին կը խառնէ իր քրտինքը.

Աղբիւրներ

1. Աճառեան, Հրաչեայ, հայերէն գաւառական բառարան, Թիֆլիս, 1913
2. Աճառեան, Հրաչեայ, Աճառեանի անուան լեզուի ինստիտիւտ, Երեւան, 2001-2012
3. Ամատունի, Սահակ վարդապետ, Հայոց բառ ու բան, Վաղարշապատ, 1912.
4. Թեւաւոր խօսքեր եւ դարձուածքներ, Արմենակ Եղիայան, Հորիզոն գրական 21.3.2018.
5. Հայկական Հանրագիտարան, Առած եւ ասացուածք.
6. Հատտէճեան, Ռոպէր, Հայկական առածներ, Անթիլիաս, 1995
7. Հայկական զանազան բառարաններ.
8. Հանելուկ շուտասելուկ եւ այլ գրական ճոխութիւններ կայքէջ.
9. Հայրենի գրողներու՝ Միրումեան Լիլիի, Ահարոնեան Ս.-ի, Մնացաքանեան Ամալեայի կարծիքներ.
10. Պեղերեան, Պետրոս, Հայերէն դարձուածքների ընդարձակ բացատրական բառարան, Երեւանի պետական համալսարանի հրատարակչութիւն, Երեւան, 2011
11. Սուքեասեան, Աշոտ, եւ Գալստեան, Սերգէյ, Հայոց լեզուի դարձուածքա-բանական բառարան, Երեւանի համալսարանի հրատարակչութիւն, Երեւան, 1975.
12. Ուիքիփետիա, ազատ հանրագիտարան.
13. Նայիրի բառարան.
14. Sakayan, Dora, Armenian proverbs, Mc Gill University, 1994, Michigan, USA.
15. Տրդատեան, Տրդատ, "Յաղթը Եւ Յաղթեցիները" գիրք:
16. Երգ երգոց գիրք

Բժիշկ Կարպիս Հարպոյեանին հրատարակած գիրքերու ցանկը մինչեւ օրս

1. Բժիշկին խօսքը, Անթիլիաս, 2000
2. Բժիշկին Բ. խօսքը, Անթիլիաս, 2011
3. Բժիշկին Գ. խօսքը, Անթիլիաս, 2015
4. Բժիշկին Դ. խօսքը, Անթիլիաս, 2015
5. Բժիշկին Ե. խօսքը, Մոնթրեալ, 2020
6. Բժիշկին Զ. խօսքը, Մոնթրեալ եւ Պէյրութ, 2022
7. Խաչելութեան ճանապարհը, Մոնթրեալ, 2015
8. Խաչելութենէն յարութիւն, Մոնթրեալ, 2015
9. Հայ բժիշկներուն, ատամաբուծներուն եւ դիզագործներուն ողիսականը Հայկական Յեղասպանութեան ընթացքին, Մոնթրեալ, 2018
10. Խճանկարներ Հայկական Յեղասպանութենէն, Մոնթրեալ, 2019
11. Յիշատակութեան արժանի Հայ բժշկուհիներ պատմութեան ընթացքին, Մոնթրեալ, 2023
12. Յիշատակարան բժիշկի կեանքէս, Մոնթրեալ, 2023
13. Համով հոտով եւ լեղի յուշեր, Մոնթրեալ, 2023
14. Բժշկական ծառայութեան դաշտէն անդին, Մոնթրեալ, 2023
15. Բժիշկին Է. խօսքը, Մոնթրեալ, 2024
16. Յիշատակութեան արժանի Հայ բժշկուհիներ եւ բուժքոյրեր պատմութեան ընթացքին, 2024
17. Մարմնի որոշ մասերու անուններու գործածութիւնը մեր լեզուի դարձուածքներուն, առաձներուն եւ ասացուածքներուն մէջ, 2024
18. Անգլերէն-հայերէն, Հայերէն-անգլերէն ամփոփ բառարան, (Արցանց մօտ օրէն)



Բժիշկ Կարպիս Հարպոյեան իր բժշկական ուսումը աւարտած է Պէյրուքի Ամերիկեան համալսարանին մէջ, 1965-ին: Յանախաձ է Պէյրուքի Ամերիկեան հիւանդանոցի «ֆիթ-կոկորդ-խոշափող-ականջ» մասնագիտական բաժանմունքը, 1965-1969: Առ ի գնահատանք՝ հրաւիրուած է մաս կազմելու նոյն բաժանմունքին՝ իբրեւ դասախօս-ուսուցիչ, Associate Member տիտղոսով, 1969-1975: Բժիշկ Հարպոյեան աւելի քան 35 տարի աշխատած է իբրեւ մասնագէտ վիրաբուժ Պէյրուքի գանգաւ հիւանդանոցներուն մէջ:

Եղջերիկի ընդոծին տարանման եւ լսողական ջիւղի յարանուն խլութեան (Congenital corneal dystrophy with progressive sensorineural deafness) միատեղ գոյութիւնը՝ մէկ ընտանիքի մէջ, երեք անձերու մօտ՝ առաջին անգամ ըլլալով համաշխարհային բժշկական գրականութեան մէջ յիշատակուած է իր կողմէ, 1971-ին: Հետագային, այս երկու հիւանդագին երեւոյթներու միատեղ գոյութիւնը, իբրեւ նոր համախտանիշ՝ համաշխարհային բժշկական

գրականութեան մէջ անուանուած է «HARBOYAN SYNDROME», հայերէնով՝ «ՀԱՐՊՈՅԱՆ ՆԱՄԱԿԱՆՍԱՆԻՇ»:

Ունի բժշկական բազմաթիւ ուսումնասիրական յօդուածներ՝ միջազգային բժշկական գրականութեան մէջ, իսկ իր բժշկական եւ առողջապահական հայերէն յօդուածները տարիներէ ի վեր լոյս կը տեսնեն Սփիւռքի հայկական գանգաւ օրաթերթերու եւ պարբերաթերթերու մէջ: Հայերէն աշխատասիրութիւններուն մէկ մասը, ի շարս այլ գրութիւններու, լոյս տեսած է առանձին հատորներով՝ «Բժիշկին խօսքը» (2000-ին), «Բժիշկին Բ. խօսքը» (2011-ին), «Բժիշկին Գ. խօսքը» (2015-ին), «Բժիշկին Դ. խօսքը» (2015-ին), «Բժիշկին Ե. խօսքը» (2020-ին), «Բժիշկին Զ. խօսքը» (2022-ին), «Բժիշկին Է. խօսքը» (2024-ին):

Բժիշկ Կարպիս Հարպոյեան, ուր ալ որ գտնուած է, միշտ իր գործուն մասնակցութիւնը բերած է ազգային-հասարակական կեանքին, ստանձնած է պատասխանատու պաշտօններ: Եղած է Մէծի Տանն Կիլիկիոյ կարողիկոսութեան Ընդհանուր ժողովներու եւ կարողիկոսական Ընտրական ժողովի ատենապետ, Լիբանանի հայոց բեմի ազգային երեսփոխան, Քաղաքական ժողովի եւ Ուսումնական խորհուրդի ատենապետ, Փանատայի հայոց բեմի ազգային երեսփոխան եւ Ազգային վարչութեան փոխատենապետ, «Համազգային»-ի Կեդրոնական վարչութեան անդամ, Լիբանանի Երջանային վարչութեան ատենապետ ու Փանատայի Երջանային վարչութեան անդամ, «Ճինիւթեան ձեռնարկ»-ի Լիբանանի խորհրդատու յանձնախումբին անդամ, ինչպէս նաեւ՝ Լիբանանահայ բժշկական միութեան գործադիր վարչութեան անդամ: Ան նաեւ սիրայօժար մասնակցութիւն բերած է Լիբանանի հայկական եւ ոչ հայկական դարմանատուներու բժշկական սպասարկութեանը:

Ազգային, հասարակական, կրթական հարցերու եւ Հայոց ցեղասպանութեան վերաբերեալ Բժիշկ Հարպոյեանի յօդուածները լոյս կը տեսնեն հայկական սփիւռքի մամուլին մէջ: Ան հրատարակած է «Խաչելութեան ճանապարհը» (2015-ին) եւ «Խաչելութենէն յարութիւն» (2015-ին) հատորները՝ Հայոց ցեղասպանութեան 100-ամեակին առիթով, «Հայ բժիշկներուն, առամնաբուժներուն եւ դեղագործներուն ողիսականը Հայկական ցեղասպանութեան ընթացքին» հատորը (2018-ին), ինչպէս նաեւ «Խնամկարներ Հայկական ցեղասպանութենէն» հատորը (2019-ին) «Յիշատակութեան արժանի Հայ բժշկուհիներ պատմութեան ընթացքին», «Բժշկական ծառայութեան դաշտէն անդին», «Համով, հոտով եւ լեզի յուշեր» եւ «Յիշատակարան բժիշկի կեանքէս» հատորները (2023-ին), (Յիշատակութեան արժանի Հայ բժշկուհիներ եւ բուժոյթեր պատմութեան ընթացքին) հատորը (2024-ին):

Տարիներ շարունակ, հայ հասարակական կեանքի եւ յատկապէս «Համազգային»-ի ծիրին մէջ իր տարած աշխատանքին առ ի գնահատանք, բժիշկ Կարպիս Հարպոյեան «Համազգայինի շնորհակց»-ը ստացած է Կեդրոնական վարչութեան կողմէ, 2009-ին: Արժանացած է նաեւ Փանատայի Հայոց ազգային առաջնորդարանի ազգային եկեղեցական ծառայութեանց «Յովհան Մանդակունի» շնորհակցին, 2015-ին:

Բժիշկ Հարպոյեան 22 յուլիս 2016-ին պարգևատրուած է նաեւ «Ճինիւթեան ձեռնարկ»-ի Պէյրուքի կեդրոնի տնօրէնութեան կողմէ՝ «Գնահատանք» յուշատախտակով, Պէյրուքի խորհրդատու յանձնախումբին մէջ իր բազմամեայ ծառայութեան համար:

Բժիշկ Կարպիս Հարպոյեան 26 յունուար 2020-ին պարգևատրուած է նաեւ Ն.Ս.Օ.Տ.Տ. Արամ Ա. կարողիկոսին կողմէ, Մ. Տ. Կ. Կարողիկոսութեան «Կիլիկեան Ասպետ»-ի շնորհակցով: